



Հ Ա Գ Ի Ն

Զ. ՏԱԻ 1967 ՅՈՒՆՈՒԱՐ  
digitised by A.R.A.R.®

ԹԻԻ 1

پاكين  
 مجلة شهرية أدبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد ارتين كارنيك قزانهجيان

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ԱՐԲԵՍՅԻ

ՎԱՌՁ ԽՄՐԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՆԻ  
 ԽՄՐԱԳԻՐ  
 1. ՄԵԱՊԵԱՆ

ԽՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ  
 ԱՆԴԱՄՆԵՐ  
 8. ԳԵՂԱՐԳ  
 8. ՈՍԿՈՆԻ  
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ  
 Վ. ՇԵԱԿԱՆ  
 Ժ. ՍԹՐԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ  
 † ԵՂ ՊՅՅԱՋԵԱՆ

ԽՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՒ

**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban

Հեռաձայնի թիվ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ս. ՍԱՀԱԿԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- ՇԱՀՊԱՆ
- Գ. ԱՐԷԼԵԱՆ
- Ի. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
- Լ. ԳԱՐՄԷՆ
- Յ. ԳԵՂԱՐԳ
- Վ. ՕՇԱԿԱՆ
- Պ. ՄԵԱՊԵԱՆ
- ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
- Ն. ԶԱՐԵՆՈՒՏԵԱՆ
- Լ. ՄԿՐՏԶԵԱՆ
- .....
- ԹԱՏՐՈՆ
- ԶՐՈՅՑ
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

134

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Հ. ՅԱՆՐԵ, ԽՐԻՒ 1      ՅՈՒՆ.ՈՒՍԵՐ 1967      ՊԼԵՐՈՒԹ

### Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

## Մ Հ Ե Ր Ի Կ Ը

#### ՈՐՊԵՍ ԱՐՈՒՏՔ

Սիրելի ընթերցող, որեւէ թիրախացութեան տեղի չտարու համար, պարտք էր համարեմ ճշգիւ, թէ ՄՀԵՐԻԿԸ՝ Ասիւծ ՄՀԵՐԻ Թոս Փոքր ՄՀԵՐԸ չէ, ՄՀԵՐԻԿԸ, պարզապէս, ի՞մ թոռնիկս է:

#### ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Անցեալ ամառ, երբ Ժըննեւ հասայ արձակուրդով, ՄՀԵՐԻԿԸ, 14 ամառ, տակաւին ոտքի ելած չէր:

Ան՝ կա՛մ զորդին վրայ արագ արագ էր տեղափոխուէր խոշոր գորտի մը նըման, կա՛մ երկու Ֆրանքոնց արծաթ դըրամի մեծութեամբ չորս փոքր անիւններու վրայ հաստատուած իր թեթեւ զէկին տպարակէն, նաւ բեռցուող ձիւն մը պէս, ոտքերը մինչեւ գետին վար կախած, կ'անցնէր սենեակէ-սենեակ, մերթ

ի՛նչ տանելով զէկը, մերթ՝ զէկը գիծը, փոխն ի փոխ:

Կէսօրէ ետք մը, մայրիկը, բազմոցին վրայ թերթ մը տարածած, կանանչեղէն կը ստկէր: ՄՀԵՐԻԿԸ, զովը, կը ձանձրանար: Նախ՝ կողքի խաղալիկները մէկիկ մէկիկ վար նետեց. յետոյ՝ ափիկ մը նետեց կանանչ լուբիաներուն, բայց մայրիկը դաստակէն բռնեց ու թօթուել տուաւ աւարը: Արդէն շահեկան բաներ չէին ... լուբիաները: Ապա կարծես որոշում մը տուաւ. փոքին վրայ պառկեցաւ բազմոցին եզերքը ու սահեցաւ վար: Պա՛հ մը մնաց բազմոցին յետո՛ւ, յետոյ՝ երեսը դարձուց ձախ, ու, հաւասարակշռութիւնը պահելու համար ուսերը վեր վեր բնկով Մուշու Սուլթան Սուրբ կարապետի լարախաղացի մը նըման, սկսաւ ... ջալէ՛լ. զնաց մինչեւ երկու սենեակներու միացումով կապը-

*Handwritten mark*

ւած սրահին խորքի միւս բազմոցը, սպա, առանց վարանելու, դարձաւ ես ու եկաւ մայրիկին քով:

Երեկոյան, գրտահնեակէ վերադարձին, երբ հայրիկին պարթեւ հասակը պահ մը ըստ սովորութեան կանգ առաւ սրահի դրան շրջանակին մէջ եւ ան աբտասանեց առօրեայ իր զբարի երեկոն», մենք մեր «Աստծոյ բարին»ը տակաւին շղերջացուցած, Մհերիկը վար սահեցաւ բազմոցէն, ուր նստած էր դարձեալ, ու, բազիկի մը պէս շարորայով, ընդառաջ պնայ հայրիկին:

- «Բայց, ասիկա կը քայլէ՛ կոր»... բացազանչեց հայրիկը հիացած, ու իր խաշոր մանչուկը թոցուց դուռիցն վեր:

ԿԱՐԿՈՎ-ԿԱՆՈՆՈՎ

Այս քաղաքին առաւօտը տարբեր է մեր արեւելեան քաղաքներու առաւօտներէն: Ո՛չ հանրակազմերու զրնդ-զընդ, ո՛չ՝ շրջուն վաճառորդներու պոռչոցոց: Բացի ֆրանսական սահմանադրութի լեռան ետեւէն թրթռացող լուս ծնծղայէն արեւուն ու մեր պատշգամին դիմացի բարձրակատար եղենին տակ, մարդին վրայ, թուփէ թուփ ոստոսող քանի մը սարեակներու զգուշաւոր սուլոցներէն, զլուռթիւն, լուռթիւն, լուռթիւն անսահման»:

Մհերիկը ճշգրտաւ, կարգով-կանոնով մանչուկ է: Անկողին կը դրուի երեկոյեան ժամը Ե-ին, ու մէկ կտոր կը ընանայ միջին յաջորդ ստտուան ժամը Դ-ը:

Զարթօնքին՝ նախ կը քաշուի վանդակապատ իր փոքրիկ մահճակալին սենեակի մուտքին հանդիպակաց անկիւնը ու յօիկ կը խաղայ պահ մը զինք շրջապատող տասնեակ մը խաղալիկներով՝ կերպրնկալ նիւթէ շարք մը ընտանի կամ ընտելացուած կենդանիներ, ընդ որս մեծ ու փոքր թաւշամազ արջերը:

Ապա կը կանգնի իր դառազեղ-մահճիկն մէջ, դէմքը միշտ դէպի դուռը, ու կը սպասէ համբերութեամբ, որ քաղաքային իր աղւոր մայրիկը ու դայ զինքը արձակելու իր արդուզարդով դրա-

քը արձակելու՝ իր արդուզարդով դրադիչ եւ իր համով տեղերուն քանի մը համբոյրներ դրոշմելէ ետք:

Բայց կը պատահի, երբմն, որ մայրիկը ուշանայ: Այն ատեն՝ Մհերիկը, ուշադրութիւն հրաւիրելու համար, պզտիկ, զգո՛յշ ձայներ մը կը հանէ, աւելի զգո՛յշ քան սարեակներուն սուլոցը: Երբ այդ ալ անմիջական արդիւնք մը չի աար, ա՛լ ձայն չի հաներ Մհերիկը...

Բայց...

Բայց, երբ վերջապէս դուռը կը բացուի, ներս մտնողը դէմ յանդիման կը գտնէ ինքզինքը հետեւեալ տեսարանին:

Փոքրիկ մահճակալին առջեւ «Պամպի» Նկարով գորգին ու տախտակամածին վրայ կիսաշրջանակաձեւ ցան ու ցիբ նետուած են շունը, կատուն, սաքը, երեք խոճկորները, մեծ ոսկեծկնիկը, դեղին բաղը, ձգախեծէ մանչուկը ու մեծ ու փոքր թաւշամազ արջերը...

Նաեւ՝ ասեղնապործ ծածկոցը, փոքրիկ վերմակը, բարձիկը, սաւանները, անջրանցիկ սաւանը, մինչև անդամ Մլուհերիկին սպիտակ գոլպաները...

Մահճակալին մէջ կը մնան միայն ներքնակը, զոր չէ կրցած տեղէն հանել, ու ինքը՝ Մհերիկը, թեւիկները վանդակորմի ծնօտին վրայ խաչածեւած, լուռ, ասպարէզ կարգացողի դիրքով, յանդիմանական նայածքը սեւեռած սենեակի մուտքին:

- Հապա՞. կա՞մ՝ կարգով-կանոնով, կա՞մ՝ ա՛յսպէս...

ՀՐԱՇԱԳՈՐԾ ՄԱՏԻԿԸ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԲԱՌԵՐ

Մհերիկը համոզուած է, որ կախարդական ուժ մը կայ իր ցուցամատին մէջ: Իր սենեակին պահարանին վրայ կուտակուած է իր խաղալիկներուն մեծապոյն մասը - խոշորները՝ խոբբին, փոքրերը՝ եզերքին մօտ, մէջտեղը՝ դուռը կողմէն հակայ օդազնդակը, զոր դժուարութեամբ դրկել երբ մեռքը տրուի:

Ձի կրնար Հասնիլ անոնց: Վանդա- կապատ իր փոքրիկ մահճակալին մէջն է: Ոտքի: Բայց ո՞վ ըլլայ Հրաշագործ մտտիկը: Կր ծալէ թեւիկը, արժուկը, դէպի ետ, թափ առնելու Համար, ու յանկարծ ամբողջ ուժով միանդամայն բռունցքը կը բռնայ ու մատիկը նետի պէս կ'արձակէ խաղալիկներու վերնա- տան ուղղութեամբ:

- Ըտ-Տո՛ւ: (տո՛ւր):

Մեծ Հայրիկը, որ չի հասկնար թէ ո՞ր մէկը կը փոփաքի, ըստ բախտի, կ'իջնցնէ, ըսինք, շունը:

Ձեղա՛ւ: Նոյն միրապոյական շար- ժուճը:

- Ըտ-Տո՛ւ:

Կու դայ սպիտակ կարապր:

Ո՛ւ:

- Ըտ-Տո՛ւ:

Կու դայ բրդոտ կապիկը:

- Ըտ-Տո՛ւ:

Կու դայ ուրիշ կենդանի մը:

- Ըտ-Տո՛ւ: Ըտ-Տո՛ւ:

Կու պան, կու պան խաղալիկները: Վերնատան բնակչութեան կէսը արդէն փոխադրուած է վար:

- Ըտ-Տո՛ւ...

Ձի՛. մեծ Հայրիկը կը կռահէ վեր- ջապէս, թէ լուրջ ըլլալէ հետո. է իբ թո- տան ընթացքը, ու, ճարակաւ, կը դիմէ ժամային:

- «Հաղթո՛ւր այս անտակը, որ պարակց տանիմ...»

Մհերիկին ուզածն ալ այդ էր ար- դէն: Կը հասկնայ: Հագիւ Հագուած-լը- մընցած, ոտքին մատներուն վրայ բարձ- րանալով կը բանայ յարկարածին դու- ուր ու կ'երթայ սպասել վերելակի ժուտ- քին:

Վերելակին մէջ մեծ Հայրիկը մտադ կը դնէ օպիտակ ելունի մը վրայ ու յան- կարծ, մինչ խցիկը անշարժ կեցած է, «չէնքո», «յարկերը» կը սկսին սլահալ վե՛ր, վե՛ր, մինչեւ որ գետնայարկին Հարթակը հասասորի խցիկի յատակին...

Անպամ մը վարը, մեծ Հայրիկը բո- պէ մը կը թողու Մհերիկին ձեռքը, անոր երկանիւ փոքրիկ կտորը իջնցնելու հա-

մար՝ դաւիթը մուտքի դաւթակէն բաժ- նոյ աստիճաններէն:

- «Մպասէ՛»... կը յանձնարարէ:

Բայց Մհերիկը սպասել չի դիտեր: Ինքնավտաս կը վազէ դէպի աստիճան- ները ու թաթիկը կը նետէ պտտին վրայ շեղակի ամբացուած բաղրիքին, որուն չի հասնիր... Բայց աջ ոտքը արդէն մի- տնդամայն նետած ըլլալով առաջ՝ կըո- նակի վրայ ամբողջ հասակով կը պառկի մարմարէ առաջին աստիճանին վրայ ու մէկ շունչ կը դրոտի մինչեւ վար, կըը- ույթաւոր թաւալումով մը, իւրաքան- չիւր աստիճանին վրայ հագիւ ակնթարթ մը ցոյց տալով շուարած իր դէմքը՝ ան- կումին Հակառակ ուղղութեամբ ծփացող իր խոսրոպներուն մէջէն...

Հակառակ Մհերիկի բարձրացուցած վայնասունին, որ կը ... բարձրանայ մինչեւ երրորդ յարկ, ու ժաման պատըչ- պամ կը վաղցնէ լեղապատառ, մեծ Հայ- րիկը սրտանց կը ցաւի, որ միայն եօթը հատ էին մարմարէ մաքուր աստիճան- ները, ու ա՛յնքան կարճ տեւեց այդ բո- լորովին անփնաս անկումին անմոռանա- լի տեսարանը, շնորհալի մենապարուհիի մը պարավերջի խանդավառութեան գե- րապոյն պահուն մէկ ոտքի վրայ ներ- դաշնակ պտուտըմին այնքան նման...

ՀԱՄԱՐԱՆ

Ճամբան, երբ կտաքին մէջ է ինք ու մեծ Հայրիկը երկար ատեն լուսթիւն կը պահէ, Մհերիկը, զգոյշ կը դառնայ ետ ... ստուգելու համար թէ «կառապանը» միշտ նոյն վստահելի ա՛նձն է...

Մերթ ալ կը մերժէ կառք մտնել, կ'ուզէ քալել մեծ Հայրիկին քովէն: Այս վերջինը սիրով պիտի ընդունաջ երթար այդ պահանջին (ճուտը յոգնեցուցէ է պարապ կտորը զնիւը) եթէ Մհերիկը, աւելի ինքնավարութիւն պահանջելով, չմերժէր մեծ Հայրիկին ձեռքը եւ, ապա, շարաշար պորձածելով իրեն շնորհուած նոր այս ազատութիւնը, երկու անգամ չերկնցնէր պարտէզի ճամբան՝ մուրթեալ սչխարի պէս մտնելով Հանդիպած առա-

արգիւ - կէտ

լին բաց զարդասէն ներս, կամ ճամբէն շեղելով փողոցի իւրաքանչիւր անկիւնազարձին եւ ստիպելով, որ մեծ Հայրիկը երկուքը մէկ յիսուն մեթրի չափ վազէ ետեւէն, զինքը ուղիղ ճամբուն մէջ բերելու Համար:

Պարտէզին մէջ ՄՀերիկը իր միասին բերած խաղալիկները մէկ կողմ կը թողու ու կ'ուզէ խաղալ միայն միւս երեխաներուն խաղալիկներուն հետ, ինչ որ շատ բնական է...

ՁՈՒՐ

Բայց իր նստիւնտրած խաղալիկը... Գուրն է: Այնտեղ, իրարմէ քանի մը Հարիւր մեթր հեռու, մշտապէս աղբիւրներ կան մեծ ծառերու ստուերին տակ: Երբ ՄՀերիկը անյայտացած կ'ըլլայ մանուկներու խաղալիկներէն, մեծ Հայրիկը փնտռելու պէտք չունի զինք, ՄՀերիկը ջուրի ճամբուն վրայ է անպայման ու կը վազէ՝ շաղապատ մարմանդին վըրայէն, կը վազէ՝, որպէսզի մարդ չհասնի ետեւէն...

Անգամ մը աղբիւրին մօտ՝ ՄՀերիկ կը կախուի փոքրիկ գուռին մէջ, ու վերէն իջնող ջուրը կը թրջէ իր գլուխն ու իր գընդը: Իսկ եթէ մեծ Հայրիկը բարձրացնէ զինքը աւազանի եղերքին վրայ, այս անգամ ալ, փոխանակ ձեռքերը առաջ երկարելու, նստ մէկիկ մէկիկ ոտքերը կը մատուցանէ ջուրին, գուլպայ կօշիկով ոտքերը, ի Հարկէ...

Այս պատճառաւ, որպէսզի վրան գլուխը չթրջէ ան, չհագայ՝ ու ինք Հարիւրին հետ խնդիր չունենայ, մեծ Հայրիկը ուշադրութիւն կ'ընէ, որ ՄՀերիկը կառքին մէջ նստած ըլլայ իրենց աղբիւրներուն մօտէն անցած պահուն:

Բայց եւ այնպէս, անմիջապէս որ կառքը կը մօտենայ աղբիւրներէն մէկուն ու լսելի կ'ըլլայ ջուրին կարկաչը, ՄՀերիկը կը սկսի ուրախութիւն արտայայտող շարժումներ ընել, ու գիտնալով որ պիտի չկարենայ ջուրին տակ ընել գըլուխը կամ ոտքերը, անապարանքով իր խաղալիկներու թափանցիկ տողարկէն

կը հանէ փոքրիկ գաւաթը ու կ'երկարէ մեծ Հայրիկին...

Ծարաւ չէ անշուշտ. բայց պէտք է կերպով մը շփման մէջ մտնէ սիրական հեղուկին հետ...: Նման առիթով մըն էր, որ, օր մը, լեցուն գաւաթը քաշեց մեծ Հայրիկին ձեռքէն ու երբ այս վերջինը տեղի տուաւ ինքնավարութեան նոր այս պահանջին տուելու ալ, փոքրիկ ըմբոստը, փոխանակ գաւաթը շէպի իւր շրթները հակելու, ծոց հակառակ ուղղութեամբ ու ողողեց մեծ Հայրիկին վըրան-գլուխը:

Ի դէպ, ինչ քաղաքավար են այս երկրին մանուկները:

Մեծ Հայր ու թոռնիկ կանգ կ'առնեն աղբիւրի մը դիմաց: Աւազանին քով հինգ-վեց տարեկան մանուկ մըն է, որ իր շինարար աշխատանքէն ետք ցիխոտ ձեռքերը կը լուսայ:

- Պոմմուր, Մէօսիէօ, ու մէկ կողմ կը քաշուի լուսցումը շաւարտած:

- Բայց, վերջացո՛ւր, պզտիկս. մենք չենք աճապարեր:

Կամ նոյն տարիքի խարտեաշ աղջրանակ մըն է խաղալիկներէն մէկը:

- Մէօսիէօ, արդեօք կրնա՞մ խաղալ այս գնդակին հետ:

- Բայց, ի Հարկէ, օրի՞նք, ի Հարկէ...

ՄՀերիկը շրջապատին միակ թուխ երեխան է եւ ամէնէն կարշնդը:

- Մէ ս'է քէօմ անփամ սիւփերպ, - կ'ըսէ տարիքոտ տիկին մը իր ամուսնոյն, երբ կ'իմանայ թէ միայն Ղձ ամսու է ՄՀերիկը:

- Իլ է գոսթօ ֆօմ էօմ արմէնիէն, - կը կատակէ մանկաբուժարանին բժիշկը, որուն ամէն ամիս կ'այցելէ ՄՀերիկը իր մամային ու թանթիկին հետ:

Անցեալ օր երկու երիտասարդ գարմանախօս Զուրիցերուհիներ ՄՀերիկին կառքը դիմաւորեցին մայրին վրայ, կը կըղեցան դետին եւ սկսան Հիացական աղաղակներ արձակել, աղաղակներ որոնցմէ յաճախ կրկնուող «Աչքերը միայն Հասկնալի էին մեծ Հայրիկին Համար:

Մեծ Հայրիկը դրեթէ վախցաւ...

կարծեց թէ պիտի ուտեն իր թոռները... :  
Իրենք ալ ուտուելիք բաներ էին, երկու  
կրակի կտոր առոյգ մտրուկներ...

Հիմա ի՞նչ պիտի մտածէ հարսը՝  
Մհերիկին մաման մեծ հայրիկին մասին,  
երբ այս տողերը կարդայ: Ի՞նչ կ'ուզէ  
թող մտածէ: Հօնի սուա գի մալ ի փամա,  
— ըսի՛ զուտուելիք բաներ էին» որովհե-  
տեւ ուտուելիք բաներ էին:

Մհերիկը հիացումի բուրբ այս ար-  
տայայտութիւնները կ'ընդունի սակայն  
արքայազայել անտարբերութեամբ. իր  
ժպիտը վերապահուած է միայն իր հա-  
րազատներուն եւ բարեկամներուն:

ՎԵՐԱՂՈՐԾ

Վերադարձին Մհերիկը կը մերժէ  
վերելակ մտնել. ամբողջ ուժով կը կտա-  
ւի մեծ հայրիկին ձեռքէն, պզտակը հաս-  
ցուցած մինչեւ գետին. կը բողբոջէ, կը  
պոռայ. կ'ուզէ որ վերակտի պտոյտը...

Մեծ հայրիկը կը հարկադրուի գըր-  
կել զինքը: Փոքրիկ կտորը կը տեղաւո-  
րէ խցիկին անկիւնը ու կը կոխէ կլունի  
մը վրայ: Այս անգամ (խցիկը միշտ իր  
տեղն է) «չէնքը» սրընթաց կը սկսի իջ-  
նել, իջնել...:

Բայց սպիտակ կլունները Մհերիկի  
հասողութեան մէջ են այժմ: Մէկէն տն  
իր հրաշագործ մատիկը կը դնէ անոնց-  
մէ մէկուն վրայ ու «չէնքը» կանգ կ'առ-  
նէ իր գահավէժ անկումին մէջ...

Մեծ հայրիկը յանդիմանական նայ-  
ւածք մը կը նետէ իրեն. բայց չի կրնար  
զսպել խնդուքը ու կը ճնշէ կարմիր կլու-  
նին վրայ:

Կը լսուի զանգակի ձայն մը դուր-  
սէն: Կը լսուի գիրուկ դանապանուհին  
տատոցը վարէն (հետաքրքրաշարժ բա-  
ներ) ու պահ մը ետք «չէնքը» կը վերսկսի  
սլանալ վեր...

Մհերիկը կը կարծէ, թէ հասաւ իր  
նպատակին. աչքերը խորամանկութեամբ  
կը լողան. նորէն պտոյտի պիտի եր-  
թան... Բայց երբ գուլիթը կը հաւասար-  
րի խցիկի տախտակամանին, վերելակի  
կլեին, թեւերը մէջքին կանթած կայնած

կ'ըլլայ գիրուկ դանապանուհին, որ կը  
ջանայ խոժոռ արտայայտութիւն մը տալ  
իր դէմքին...

Երբ այսպէս կամ այնպէս պարտուած  
(Մհերիկը) եւ յոգնած (մեծ հայրիկը)  
կը հասնին իրենց յարկաբաժնին դրան  
առջեւ, մեծ հայրիկը՝ անյիշար՝ թող  
կու տայ որ Մհերիկը ի՞նչ գնէ մատիկը  
պատի կլունին վրայ: Ներսէն կը լսուի  
զանգակի մը հնչելունը ու, զարմանալի  
բան, ահագին դուռը կը բացուի մինա-  
կը եւ աւելի զարմանալին, ինչպէս միշտ  
դրան ետին կանդնած կ'ըլլայ մշտաժը-  
պիտ, անուշիկ մաման, որուն առաջին  
հարցումը կ'ըլլայ.

— «Շատ շարութիւն բրա՛ւ...»

ՆԱԹԻՒՐ ՄՈՐԹ

Փշրուող յախճապակիի խոշոր շա-  
ռալ մը խոհանոցէն, որուն կը յաջորդէ  
անմիջապէս լացի աւելի խոշոր ազաղա-  
կը Մհերիկին:

Ուսմասպահար կը հասնինք օգնու-  
թեան:

Արդիական փոքրիկ խոհանոցին կէ-  
սէն կազմուած մանրակար ճայարահին  
մաքրաչող, կարմրուուն սալարկին վը-  
րայ շող են տրուած պտուղներ, անհա-  
մար պտուղներ՝ խնձոր, տանձ, ծիրան,  
սալոր, դեղձ, նարինջ ու խաղող — սեւ  
խաղող եւ խոտախան արեւի գոյն թա-  
փանցիկ խաղող, զոյներու աննկարա-  
զրեյի ներդաշնակութեամբ մը ընդե-  
լուզուած մեծ ու փոքր բեկորներու հետ  
ձուածեւ ծանր սկուտեղին, որուն վրայ  
կը բրզանար պահ մը տառջ խոյտարդէտ  
անոնց շեղջը, իսկ այդ համով-հոտով  
Անի քաղաքին ճիւղ կեդրոնը, փոքրիկ  
սեղանին քով, իր երկու դիրուկ սրունք-  
ներուն վրայ տակաւին բարձրացած  
«գոյ» Մհերիկը, որ բերանը մեծ բա-  
ցած, կու լայ աղմուկով, աջ ձեռքը ու-  
սած, վերը, օդին մէջ, եւ ափին՝ իր աղ-  
ւոր աչքերուն զոյնով խոշոր, աղուոր,  
սեւ սալոր մը, միակը, որ փրկուած է  
ընդհանուր ալէտէն, միակը, որուն գը-  
րաւչութեան զոհ են դացած մնացեալ

բորբը, խորաքանդակներով պարզարուն  
 Թանկագին սկուսեղն ալ մխտինս  
 Ի՛նչ պիտի չտար Մարտիրոս Սար-  
 եանը, կարենալ ստորագրելու համար  
 նման «նաթիւր-մորթ»ի մը ներքեւ:

ՏԻՒԱՆԴՈՐԻ

Տիւանդորի պահն է: Մենեակին  
 մէջ կը տարածուի մե՛ղմ, շա՛տ մեղմ  
 երաժշտութիւն մը: Տնեցիներէն մին  
 բազկաթռոնի վրայ ընկողմանած կը մը-  
 րափէ: Մէկ ուրիշը դէմքը ծածկած է  
 գրգի մը ետին: ՄՀերիկը - պէտք է բան  
 մը ընէ - կամացուկ կը մօտենայ ձա-  
 նասփիւռ գործիքին ու հրաշագործ մա-  
 տիկը յանկարծ կը կոխէ անոր ստեղծե-  
 թէն մէկուն վրայ:

Սարսափելի աղմուկ մը կը լեցնէ  
 ոննեակը, կը յորդի պատշգամի լայն  
 լուսանցոյցէն դուրս:

Ան, որ կը մրափէր, ընդոտ ոտքի  
 կը ցատքէ, ան, որ խորասուզուած էր  
 ընթերցանութեան մէջ, գիրքը մէկ կողմ  
 կը նետէ ու կը վազէ ձայնասփիւռ լե-  
 ցընելու:

- «Իրացիները բողոքի պիտի եր-  
 քան ուտիկանստուն», - կ'ըսէ մաման,  
 ցուցամասը փարսելով ՄՀերիկի թերա-  
 հաստ աչքերուն առջեւ...

ԳԱԼՈՒԿԱՐՇԱԻ

Ուրիշ օր մը, մեծ հայրիկը անկող-  
 նին վրայ երկարած թերթ կը կարդայ  
 եւ, որովհետեւ անկողինը հետու է պա-  
 առահանէն եւ օդը՝ ամպամած, վառած  
 է իր սնարի լամբը:

ՄՀերիկը կամացուկ կը սպրդի մաշ-  
 անկային ու գլխավերեւի փոքրիկ սեղա-  
 նին արանքը ու մատիկը կը սեղմէ լամ-  
 բին ստեղծին վրայ: Լոյսը կը մարի:  
 Մեծ հայրիկը իրր թէ կը բարկանայ:  
 Յօնքերը կը պոստէ: Բայց եւ այնպէս  
 թերթը մէկ կողմ կը դնէ, կը գրկէ ՄՀե-  
 րիկը, կը տեղաւորէ՝ անկողինին վրայ  
 բրզամեւ ծալած ծունկերուն դապարթը  
 ու կը սկսի դահուկարչաւը:

- «Լոպ» ու ՄՀերիկը ինքզինքը կը  
 գտնէ մեծ հայրիկին կուրծքին վրայ...

Ու՛  
 - «Նորէ՛ն» ըսել կ'ուզէ ՄՀերիկին  
 ուրախ քահքահը...

«ՀԱՅԿԱԿԱՆ Է»

Պաղաղ յիսմիջօրէ:  
 Աջին՝ միանախաղաղ հեռաւոր դա-  
 զաթներ: Ձախին՝ անտառապատ բար-  
 ձունքներ: Մեր դիմաց հանդարտ կը ծը-  
 փայ Լեմանը, իր ցայտադրիւրին ցցունը  
 արձակած միւշիւ երկինք:

Կը դրօսունւնք ձնզլիական պարտէզ-  
 ներուն մէջ:

ՄՀերիկը կը քալէ առջեւէս: Մաման  
 նստած է զիչ անդին, կանանչ նստարա-  
 նի մը վրայ, ծառերուն տակ:

- «Հայկական է», - կը մենախօսէ  
 յանկարծ քովէս անծանօթ մը:

Կանդ կ'առնեմ: Միջին տարիքի  
 մարդ մըն է՝ զիչ մը անխնամ հազուամ  
 «փարթամ» մարդ մը:

- «Բարե՛ւ ձեզ»:

- «Բարե՛ւ: Հասկցայ մանչուկին աչ-  
 քերէն, որ հայու ձագուկ է», - կ'ըսէ:

- «Արգարեւ: Մանօթանա՛նք: Այ-  
 սին,եան. Եզիպոտսէն: Թոռնիկս է»:

- «Ուրախ եմ: Ես որք եմ», - կը  
 յարէ տարօրինակ խօսակիցս: Կու տայ  
 անունը: «Փարիզէն»:

- «Կը հասկնա՛մ - Նարդունիի հը-  
 պատակներէն...» ու, բան մը ըսած ըը-  
 լալու համար, «լատո՛նց է որ Ժրնեւ կը  
 ղտնուիք», - կը հարցնեմ:

- «Ո՛ր: Երկու շաբթուան համար այ-  
 ցելութեան Լկած ենք աղջկանս, որ հոս  
 պալատն ունի ընկերութեան մը մօտ»:  
 Ու ծնօտը կը շարժէ՝ այժմ մեղմէ քանի  
 մը քայլ անդին կանգ առած երկու կի-  
 ներուն ուղղութեամբ, մին՝ իրեն պէս  
 «փարթամ», գրեթէ տարեկից, բայց լաւ  
 հազուամ փառաւոր «մատամ» մը, միւ-  
 սը՝ նրբիբան, կասկազեզ շնորհալի երե-  
 տասարդուհի մը, որուն աչքերը (միայն  
 աչքե՛րը) նոյնքան հայկական են, որքան  
 ՄՀերիկինները:



- «Ա՛, բարեւ ձեզ, տիկին, օրիորդ...»

- «Անտէք հայերէն չեն գիտեր. կինս Փրանսացի է», - հարկ կը տեսնէ բացատրել նախկին Չոմականը...

Մհերիկին մաման, նոյնքան նուրբ ու շնորհալի որքան զորք մարդուն ազնիւր, կը միանայ մեզի, բայց ծանօթացումներն ու խօսակցութիւնը այնուհետեւ յստաջ կը տարուին Փրանսերէն...

Ձէ՛, իրաւունք ունի՛. ո՛րք է յիսուներ վազուց ետին թողած այս մարդը... Ո՛րք...

Ձ Ի

Տունը, բազմօցներէն մէկուն տակ, տարօրինակ կենդանի մը կայ. տակառանձան փորով, ծալուած բարակ ուղեքրով, երկայն վիզով ու աւելի երկայն, բարակ պոչով կենդանի մը:

Ամէն անգամ, որ հասցիկ, պիտքիւի կամ համով այլ խմորեղէն մը ստանայ Մհերիկը, եւ, ըստ սովորութեան, կերածին քանի մը պատիկը թափէ գորգին վրայ հոս ու հոն, կամ բրդեղիկ ընէ, երփնաթղթիկներու վերածէ նամակատուփէն ելած գոյնզգոյն ծանուցումները, որոնք իր քուրիէն կը կազմեն, մամուն դուրս կը քայլէ «կենդանին» իր բոյնէն, ու երբ անոր տափակ դունչը տանի բերէ գետնին վրայ, «Փոփո» (այդպէս պիտի կոչուի հաւանաբար այդ շատակեր կենդանին, այս օրերս, երբ Մհերիկը իր արդէն դիտցած կէս երկվեցեակ բոտերուն վրայ նորեր աւելցնել սկսի) «Փըռ-Փըռ»ը, ուրեմն, վայրկենապէս կը մաքրագործէ, կը լսիլիզէ ամէն ինչ:

Մհերիկը շատ կը սիրէ խաղալ ապագայ «Փոփո»ին հետ, անոր հանդիստի պահերուն: (Մհերիկը կը սիրէ խաղալ իր խաղալիկներէն զատ որեւէ բանի հետ՝ խոհանոցի քամոցէն սկսած մինչեւ կարի մեքենան...) բայց մեծ հայրիկը չի թողուր: Իսկ մաման.

- «Ձեզե՛ք, ի՛նչ կ'ուզէ թող ընէ, միայն՝ դիս հանդիստ թողու», - կ'ը-

տէ: Եւ ստիկա՛ որը քանի մը անգամ: Անցեալ օր Մհերիկը փոշեծծիլը դարձեալ դուրս էր հաներ իր որջէն: Հեծաւ վրան. երկայն, ողորկ, փայլուն վիզը առաւ ձեռքը ու նիզակէ մը պէս սկսաւ բարտել աջ ու ձախ, տափակ դունչը դէպի վեր...

Յայտնի էր, որ կամ Մարայ Մելիքի ժառանգորդներուն դէմ պիտի երթար կամ չքարան կտրելու...

Այս անգամիկին դաս մը տալու է, մտածեց մեծ հայրիկը. տեղէն ելաւ, կամայցուկ մտեցաւ Հեծեալին ու իր ձիուն եւ այս վերջնոյն երկայն սեւ պոչին ծայրը պատին վրայ ամբացուց ուր որ պէտք էր ու եկաւ մատը դրաւ անոր պարանոցին:

- Ատուու՛՛՛՛՛ ի՛մ, այդ ի՛նչ քան էր: Ո՛ւրջիկ ձին յանկարծ սկսաւ եռեւեփի՛լ, խրոչի՛լ, մտահոգիչ Հանդիւններ արձակել, կարծես պիտի ծառանար...

Մհերիկը, առանց խոհապի բայց ոճապարանքով, առ ի զգուշութիւն, վար նետուեցաւ երկվարէն, քանի մը քայլ հեռացաւ, կեցու, ետ դարձաւ ու կասկածոտ նայուածք մը նետեց վրէժով «արարածին» վրայ:

Օր մը, երբ կարգայ Քաջ Նազարին արկածները ու հասնի հոն, ուր քնաթափախ հերոսը ինքզինքը կը դտնէ ընդոտ արթնոցած վազիկին քամակին վրայ, պիտի ըսէ.

- «Կարծեմ, ասանկ բան մը ի՛մ գըլխուս ալ եկած է ժամանակին...»

Ու մինչ մեծ հայրիկը կը հանդարտեցնէ «վազք»ը, իր մատը դարձեալ դընելով անոր պարանոցին ելունին վրայ, ու դայն կը հրէ իր անձաւէն ներս.

- «Ձէ՛, կարծեմ՝ մեծ հայրիկին մատիկին մէջ ալ հրաշագործ բան մը կայ. կարծեմ, այնուհետեւ հանդիստ պէտք է թողում «Փոփո»ը, երբ մեծ հայրիկը տունէն բացակայ չէ»... կը մտածէ Մհերիկը:

Ս. Ս.

Գախիլէ, 1965

## ՆԵՐՇՆՁՈՒՄ

Գարնանագայր ակունքը՝ ռ՝ւր է հիմա,  
Հագիւ մրմունջ մը կը լսուի մեղմօրէն  
Ձէնք ծածկեղ դեռ ծաղկազարդ մացառէմ՝  
Ուր վիրաւոր սիրտ մը գոգցես կը հեւայ:

Ի՞նչ սաստկութեամբ արեւ մը քեզ ցամփեցուց,  
Եւ շիք առ շիք ըմպեց բիրեղն հասանուտ  
Լուսակայլակ եւ հեղեղում ջուրերուդ՝  
Որո՞ճ վշտի պզտոր այցունք են վաղուց:

Վըրադ երբեմն խոնարհիլ ես կու գամ,  
Եւ կը վարձեմ առնել ծարաւըս, երբոր  
Խաւարակուտ շուրջըս գիշեր է անգորբ:

Ջգլխանքի բաժակն երբոր դառնահամ  
Կուգեմ պարպել լռոյսի կարօտ է հոգիս,  
Եւ հեծեծանք է աղօթքն ալ շքո՞ւնքիս:

## ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ

Միջերկրական, ծովամրմունջ գիշերներ,  
Սենեակիմ մէջ կապուտաչուի պանդակիմ.  
Ա՛հ, ինչքա՛ն շուտ են անցեր  
Օրերն հիւսուած երազներով սխրագիմ:

Ժամանակիմ քեւը կուտած էր գոգցես,  
Ու տխրութեան սեւ թռչումն էր վիրաւոր  
Մատենան մը կաք, որում էջերը բալոր  
Խօսք մը միայն կը կրկնէին երգի պէս:

Ջհասկցայ թէ ի՞նչ էր խօսքն այդ անհուն,  
Գազտնի սիրոյ երգո՞ւմ մըն էր, թէ մահուան  
Խոստացած ժամը վերջիմ,

Կ'ըսէր ինձի առասպելները ծովիմ.  
Բայց ես վաղուց անոնց իմաստն եւ մոռցեր,  
Կը յիշեմ սոսկ վիշտը սիրոյ գաղտնիքիմ...

Միջերկրական, ծովամրմունջ գիշերներ...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

**Կ. ՍԱՍՈՒՆԻ**

**ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ**

Է.

**ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԷՆ ԴԷՊԻ ԴԱՇՏԵՐԸ**

Հաստատեալ կաղնիի մը տակ նստած էին Անդրանիկ եւ Սարգստ, մտահոգութիւնը անոնց թարթիչներէն կախուած: Հայեացքները հետու հորիզոններուն յառած՝ վճռական սրույման մը յանդիմու մամուռը կար անոնց դէմքին: Յոգնած էին, բայց անոնց հոգին խաղաղ չէր, եւ իրենց ուսերը ծանրութիւնը կը կրէին պատասխանատուութեան, որուն կոչուած էին: Պատասխանատու մարմինն անդամներէն Հրայր եւ Երկաթ սպաննուած էին, իսկ Վահան կը մնար Տալուորիկի քարանձախն մէջ, անգոր՝ վաւերու պատասխանատու իր պաշտօնը:

Զինուորական մարմինը այժմ իրենք էին, երկուքը: Քեռին եւ Մուրար որդիական ճանապարհներու վրայ, ծանր ընդհարումներով՝ ժողովուրդը փոխադրած էին Մուշ, ու արիւնալի կռիւներով՝ կ'անցնէին Մշոյ դաշտէն դէպի Վան, ուրկէ ուղղամթերք պիտի փոխադրէին Տարօն:

Գոյամարտը պիտի շարունակուէր, որպէսզի յուսալից այս ժողովուրդը անյուսութեան չմատնուէր:

Սուրհանդակ հասաւ Մուրր Յովհաննու վանքէն, միշտ բերանացի դեկորացումով:

- Տէր Սարգիս, վանահայր Մկրտիչ վարդապետը մեզ դրկեց, ձեզի հաղորդելու թէ վանքի թրքական վաշտերը պատրաստուած էին դէպի Գոմեր արշաւելու: Սակայն երբ Գոմերէն փախչող զօրքերուն մէկ մասը վանք պատստանեցաւ, միւս մասը դէպի Մուշ գնաց, այստեղի զօրքերը իրենց տեղը քաշուեցան: Վանահայրը կ'ըսէր, թէ ասոնք մինչեւ որ Մուշէն հրաման չստանան, այլեւս ձեր կողմը պիտի չշարժին: Բերդակի, Խապիւղի եւ Քրթազոմի կողմերը կռիւներ տեղի ունեցան, որոնք դեռ մինչեւ երէկ կը շարունակուէին: Որո՞նց վրայ տեղի ունեցած էր կռիւը, եւ ի՞նչ արդիւնքով, ստոյգ տեղեկութիւն մը ստացած չէր վանահայրը:

Տէր Սարգիս այս լուրերը հաղորդեց Անդրանիկին եւ Սարհատին: Այս դեկորացումը լսելէ ետք, Ֆետայիները հանդիսաւ ըրին:

Պատահները վերի ու վարի ճանապարհներուն վրայ արթուն կը հըս-  
կէին:



Առաջիկոց վանքի ստորտաներէն մինչև Ենմրութ, Պիթլիսի ճամբա-  
ներուն վրայ, Թրքական զօրքերը կը վխտային: Քրտական ցեղախումբերը  
տրչաւի ելած էին հայկական դիզերը կողոպտելու:

Սասունը ընկնուած էր: Թշնամին լերան վտանգէն ազատ կը զգար  
ինքզինք, ու կը զիմէր խստութիւններու: Եւ սակայն լեռներէն վար իջած  
մարտիկները խուճր առ խուճր տեղափոխուած էին Արազ, Բերդազ, Քրթա-  
զում, Խասգիւղ ու Վարդենիս, սպասելով դինուորական մարմնի հրահանգ-  
ներուն:

Սայտո Պոզոսի խումբը կայծակնային հարուած տուած էր Բերդազ  
ամրացած Թրքական վաշտին, ու արագ տեղափոխութեամբ՝ Պիթլիսի ճամ-  
բաները կը կարէր, շփոթութեան մատնելով զօրքերը: Երբ անոնք, կռիւնն-  
րէն կտք, իրենց ուժերը կը դասափորէին, յանկարծ կռիւը կը պայթէր Ա-  
լիճանի ու Յրօնքի կողմը, ու նոր հրաման մը այդ վաշտերը կը շարժէր  
դէպի հիւսիս:

Պատնակ վիճակը ամէն օր աւելի վտանգաւոր կը դառնար: Ամէն  
տեղ ճանապարհներուն վրայ, կամ դիզի սահմաններուն մօտ, բռնութեան  
դէմ հայ պարզ գիւղացին կը զիմէր իր արեւմտական կամ զաշտինին, կ'իյ-  
նար տղամարդու պէս, իրեն հետ զոհեր խելով եւ կամ արագ հարուածով  
թշնամին ստատակ կ'ընէր ու կ'անհետանար դաշտի լայն տարածքին մէջ:

Տարօնցին գիւրին կ'ընկնէր ոսկոր մը շէր այդ օրերուն...

Աւ ահա, նոր կռիւ մը կը պայթէր Ենմրութի ստորտաները, իր վրայ  
հրաւիրելով Պիթլիսէն մինչև Մուշ շարժող զօրքերուն ուշադրութիւնը:  
Լուրերը բերնէ-բերան ուրաւափը կը տարածէին թշնամու շարքերուն մէջ,  
որոնք այս անգամ արեւելքէն հարուած կը ստանային: Աղբիւր Սերորի հին  
օրերու յիշատակը կ'արթննար բանակի հոգիին մէջ, երբ ճամբորդները կը  
պատմէին իրենց տեսածը, վախով համակուած:

— Ի՞նչ դիտես, Ի՞նչպէս եղաւ, Կֆէնտի', կրակ գետի մը պէս  
կ'անցնէին, վառելով իրենց աջ ու ձախը: Չօրք շմնաց, քիւրտ շմնաց ու ա-  
նոնց հարուածներուն տակ շիջային: Տեղէն զլուխը վերցնողը անոնց սոււ-  
րերէն կ'այրէր:

Քնոթի եւ Մուրատի խումբն էր որ կ'անցնէր դէպի վան: Առդին Գո-  
մերի մէջ Սասնոյ Ֆետայիները անոնց վերադարձին կը սպասէին. իրենց  
փամփուշտակները լեցնելու համար:

Ազատամարտը Ենմրութի վրայով կ'երկարաձգուէր մինչև վան:

Ազատութեան եւ բռնութեան հաշիւները մաքրուած չէին տակաւին:

Տարօնը ազատութեան դրօշը վար դրած չէր:

Ընդհարումները խառնաշփոթութիւնը կը բազմապատէին: Դիակ  
ու արիւն կար ամէն կողմ:

Քուրք անուանի սպանուածներու դիակները ռայլերու վրայ դրած,  
Մուշ կը փոխադրէին, զրդուութիւնը աւելցնելու եւ ինչամ ժողովուրդը  
«Արքազան պատերազմի» մղելու համար: Թշնամին կը զգար իր անզօրու-  
թիւնը, երբ անձնուրացներուն հետ կ'ընդհարէր, եւ արեւմուտքու բնազդով՝  
հայ ժողովուրդի անմեղ կեանքերը կը հնձէր:

Հայ գիւղացիները, ճակատագրական լուսթեամբ՝ նահատակները կը թաղէին ու կը սպասէին գիշերուան, որպէսզի խաւարէ մէջ, գիւղէ-գիւղ, խումբէ-խումբ լուրեր հասցնէին: Ձինուած պահակները արթուն էին, ու վտանգաւոր պահերուն հարուածին՝ հարուածով կը պատասխանէին:

Անհատական սուգն ու ցաւը քարացած էր: Ժողովրդական զանգը-ւածները հաւաքական կեանքի հրդեհի մէջ կը տապալկէին, Ազատութիւն կամ Մահ կարգաբաժին տակ:

••

Սարհատ թիկունքը տուած հաստարեստ կաղնիի մը, Գոմեր գիւղի բարձունքէն աչքերը յայտն էր դաշտի մշուշոտ տարածութեան: Իր շուքը խմբուած էին Գալէն ու Մանուկ Եէնիկի, Չոյժն ու Մորուք Կարապետ, Արամն ու Մուսօն, Մանուկ Փիթարի, Ախօն արեւնախումբ: Երկու օրերու հանդիսոր անոնց ջարդուած ստորներն ու յոյնած ջիղերը կազդուրած էր, ու անոնք պատրաստ էին նետուելու նոր զուպարներու մէջ:

Հուռ էր Սարհատ, ու ժայռի պէս կռթնած կաղնիի բունին: Գիւղին պահակները փոխն ի փոխ կը հսկէին դաշտի անցքերուն վրայ: Ու Գոմերը, արիւնոտ կռուէն ետք, խաղաղ քանի մը օրեր կ'անցնէր: Տէր Սարգիս մե-ւելները թաղած՝ տունէ տուն կ'այցիւէր՝ միխթարանքի համար, ու մար-տական խումբերուն հրահանգներ կու տար, յոյս կը ներշնչէր ապստամբու-թեան դրօշը պարզող ժողովուրդին ու կարծես ճակատամարտի մէկ գրուա-զը վերջացուցած՝ աճապարանքով կը վերադառնար Ծետայիններուն մօտ: Կը կերակրէր ազատութեան բանակը ու խորհուրդի կը նստէր ղեկավարական մարմինն հետ:

– Ի՞նչ կայ չկայ, Տէ՛ր Սարգիս: Նոր լուրեր չհասան Մուշէն կամ Գալուէն, – կը հարցնէր Անդրանիկ ակնյայտնի վրդովմունքով:

– Ճանապարհներու վրայ մարդ մարդասանք չ'երեւիր: Գիշերն այ սուբհանգակ չբարձրացաւ այս ձորերէն, – բաւ Տէր Սարգիս մտահոգ:

Անդրանիկ բունցքը ուղղած զէպի նեմրուիթ.

– Մեզի շօքնեցին, մեր զէնքերը պահուցին վանի պահեստներուն մէջ: Վան նստածները ի՞նչ գործի վրայ են, եթէ կու չեն կրնար ընել, գոնէ՛ զէնքերն ու ռազմամթերքը մեզի հասցնէին:

Անդրանիկ իր դայրոյթը կ'արտայայտէր, բունցքը ուղղած զէպի Վան: Ու թափով ոտքի ելաւ.

– Այս կտուրները նեղ կու զան մեղի ու մեր ոտքերը կը քարանան: Բարձրանանք անտառ, ու շաղրութեամբ դիտենք մեր չընկապառք:

Ծետայինները հանգիստի թմբիբէն արթնցած, մեծղի կաղնիներու պէս կը շարժէին ղէպի վեր:

Երբ Սարհատին մօտեցաւ, Անդրանիկ իր դայրալից բերանը բացաւ.

– Վանը մեր մէջքը կտորեց: Ձէնքերն ու փամփուշտները հոն, պա-հեստներու մէջ կը ժանգոտին, իսկ մենք քանի մը փամփուշտի կարօտ ենք:

Չայրացած էին այն անձնուրացները, որոնք Կովկասէն հասած էին Բարձրաւանդակ, սրբազան ուխտին նահատակ դառնալու: Անոնք գիտէին, թէ որքան զոհերով այդ ռազմամթերքը հասած էր Վան:

Սասունցի մարտիկները լուռ էին, ու ծառերու դրացնութեան մէջ, ճակատագրականօրէն ապաւինած իրենց զէնքերուն: Բարձրաւանդակի ա-րիւնտ ապամութիւնը կար իրենց հողիին մէջ: Գիւղերը այրած, ընկեր-

ներէն ոմանք ինկած պատուոյ դաշտին վրայ, կին, երեխայ ու աղջիկ թողած ցիրուցան: Ազատութիւն կամ Ման նշանաբանը կը մնար անոնց քաջակորով ոգիին որպէս մխիթարանք:

Ն

Գիւղի պահակներուն առաջնորդութեամբ՝ երեք սպառազէն Տետայիներ, յողորմեակ ու փոշեթաթախ, կը հասնէին Անդրանիկի եւ Սարհատի հաւաքատեղը: Երեքն ալ Սասունցի մարտիկներ էին, որոնք Մովսարի բարձունքներէն իջած էին Մշոյ Դաշտ եւ մասնակցած այն կռիւներուն, որոնք կ'երկարաձգուէին մինչեւ Վարդենիս:

Սարհատի մտածումներուն ինչը կտրեցաւ.

- Իարով եկաք, տղա՛ք, լաւ է որ ձեր դուրսնէրը ձեր ուսերուն վրայ կը մնան: Ի՛նչ լուրեր ունիք: Ձեր տոպրակը գատարկեցէք: Այս բարձունքէն Մշոյ Դաշտի մշուշը միայն կը տեսնենք, ի՛նչ եղան մեր խումբերը:

- Պարո՛ն Դէորդ, մեր դուրսը քարէ քար զարկինք, խումբերը առանց հանդիստի տեղէ տեղ անցան, միշտ արեւնայի կռիւներով: Բերդակ, Կասպիւղ, Քրթագոմ, Ալիճան ու Վարդենիս խաչածեւ ընդհարումներու բեմ գարձան: Թրքական զօրքը տեղէ տեղ մեր ետեւէն կը վազէր, ճամբան կը կորոնցնէր, ետ կը դառնար, Դաշտի հիւսիսն ու հարաւը սաքի տակ կու տար, կուտող ուտերը ոչնչացնելու: Իայց կտիւր մէկ տեղ չէր. ու թուրք ասքէրները բազմաթիւ զոհեր տալով, խելակորոյս աջ ու ձախ կ'արշաւէին: Մեր խումբերէն նահատակներ ու վիրաւորներ կան, բայց խումբերը կրակի պէս կ'անցնին շրջանէ շրջան, ջլատելու թուրք եւ քիւրա բազմութիւնները:

- Այ տղա՛յ, - անհամբերութեամբ հարցուց Անդրանիկ, - Մուրատն ու Քեռին ո՞ր են: Վիրաւոր մարտիկները ապահով տեղ մը տեղաւորած էք:

- Այդ պիտի բռնէի, - Անդրանիկի խօսքը կարեց բաները Սասունցին, - մեզ ճամբու դրին Քրթագոմի կուռէն ետք, որպէսզի ձեզի լուր տանք, թէ Մուրատը եւ Քեռին փոթորիկի պէս անցած են Նեմրութէն, ու նաւակներ գտնելով՝ ուղղուած են դէպի Վան:

- Փառք Աստուծոյ, - շնչաց Անդրանիկ:

Սասունցի մարտիկներէն Յակէն, որ հին կուռուղներէն մէկն էր, աւելցուց.

- Պարո՛ն Անդրանիկ, Սայտո Պօղոսի, Տէր Փոթորիկի, Սեպուհի, Աւոյի ու Դաշտի կամաւոր անձնուէրներուն խումբերը կայծակի պէս կը դարնեն ու կը ցրուեն քրտական խուժանը, որ սկսած է վախկոտ դառնալ իր սուսած զոհերուն պատճառաւ: Իսկ թուրք ասքէրները թէեւ չառ են, բայց ջղազարի պէս ամէն վայրկեան իրենց շուրջը կը խուզարկեն, Տետայիներու մահացու հարուածներէն խուսափելու համար:

Տետայիներու լեզէնը, այս զեկուցումներուն լրջին տակ, իր ընկերքը պիտի որոշէր: Կորիւն իր խումբով արդէն իջած էր Դաշտ, Շուտով Գոմարի եւ Աւրանի կողմերը ղեւոյքեր պիտի պատահէին:

Անդրանիկ եւ Սարհատ այլեւս չէին կրնար մնալ այս բարձունքներուն վրայ:

Սարհատ զննող աչքով մը կը դիտէր սուրհանդակ այս մարտիկները. եւ անոնց դէմքին վրայ տխրութիւն մը կը նշմարէր:

- Յակէ՛, իսն ժը կայ կախուած շրթունքներէդ, խօսքդ կարծես թէ կիսատ մնաց :

- Պարոն Գէորգ, քաջութեան դէպքեր շատ տեսայ, տխուր երեւոյթներու ալ աչքս դպաւ : Կիրաւորներէն ոմանք իրենց վէրքերէն շատ կը տառապէին, բայց շատերը վէրքերը կապած՝ արդէն կոխներուն կը մասնակցէին :

Քիչ ժը լռելէ ետք, ունքերը վեր վերցուց ու շարունակեց խօսքը .

- Զինուոր Գրիգորը, դիտէք թէ ինչ քաջ կռուող մըն էր, բայց այն վէրքը որ ստացաւ Գեղաշէնի ձորերուն մէջ, շատ ծանր էր :

Ու նորէն լեզուն բռնուեցաւ .

- Լեզուդ շարժէ՛, ա՛յ տղայ, - բտաւ Անդրանիկ, - ի՞նչ եղաւ գինուոր Գրիգորին . . .

- Պարոն Անդրանիկ, անցած օր կռիւը պայթեցաւ Արաղի շրջակայքը : Կռիւր կէս ժամ տասնութեամբ շարունակուեցաւ : Մեղմէ ոմանք Գաշտի միւս գիւղերը սպաստան գտան, իսկ միւս խումբերը Առաքելոց վանքէ եւ Բերդակի բարձունքներուն եւ ձորերուն մէջ անհետացան : Թշնամին իր գայրոյթը թափեց Արաղ գիւղին վրայ . գիւղացիներէն երեսունէ աւելի մարդ ու կին սպաննուեցան : Այսօր պէլը դիւղը գրաւելէն ետք, սունէ տուն կը խուզարկէ, ու կը մտնէ այն տունը, ուր գինուոր Գրիգորը անշարժ պսակած էր : Այսօր պէլ տարճանակը Գրիգորին ուղղելով, կը հայհոյէ .

- Ի՞նչ էր, քեզ հիմա շան սատակ պիտի ընեմ :

Գրիգորը պաղարկեւորութեամբ կը նայի գազան դարձած Հրամանատարին :

- Քեզի պէս նամարդը եւ ստորինը միայն կընայ վիրաւոր ու անզէն մարդու մը վրայ ձեռք վերցնել, զա՛րկ : Մենք երբ կռուի ելանք, արդէն մահը աչք առած էինք . . .

Այս խօսքին վրայ, Այսօր պէլը բարացած կը մնայ եւ ատրճանակը վար կ'առնէ :

- Հազար ափսոս քեզի պէս կտրիճին, որ իսլամ չէ :

Ու դառնալով իր գինուորներուն, կը պատուիրէ .

- Զեռք յտաք վիրաւորին : Փոխադրեցէք զայն Մշոյ բանար :

- Ուրեմն, գինուոր Գրիգորը հիմա Մշոյ բանան է, - հարցուց Անդրանիկ :

- Այո՛, պարոն Անդրանիկ, բանտի երեք հազար կայանաւորներու վրայ Զինուոր Գրիգորն ալ աւելցաւ, - բտաւ Յակէն, դուրսը կախ ու լուռ :

Մարհատ եւ Անդրանիկ, այդ գիշեր, սպառազէն կը մնային : Ոչ ոք պիտէր, թէ դէպի ո՞ւր պիտի շարժին :

Կէս գիշեր էր : Գիւղը խաղաղ էր ու միայն ձորերէն բարձրացող ջրը-վէժներուն ձայնը կը լսուէր : Պահակները արթուն էին դառնութեամբ ու վրայ, ու Տէր Սարգիս գիշերուան զեկուցումը կը հաղորդէր ղեկավարական մարմինն .

- Տէր Հա՛յր, մենք հիմա ճամբայ պիտի ելլենք ու պիտի աշխատինք Համախմբի մեր ուժերը, - բտաւ Անդրանիկ, - Դաշտի կոխները պատահականութեան շնորհ կընար թողուլ ու աւելի ծաւալուն շարժումներուն համար պիտի սպասենք Մուրատի վերադարձին : Այս գիւղը առանձին անկիւն մըն է : Կարգի՛ դրէք ձեր մարտիկները, հսկողութեան տակ առէ՛ք զաշտէն

վեր բարձրացող ճամբունները, եւ դէպքի մը պարագային, աւելի վերին ճո-  
րներուն մէջ ապաստանեցէք: Սասունէն ձեզի վտանգ մը չի սպառնար, մենք  
թերեւս այս ճամբաներով վերադառնանք դէպի Բարձրաւանդակ:

- Աստուած ձեզ հետ ըլլայ, - ըսաւ Տէր Սարգիս, - զգոյշ եղէք,  
Դաշար այժմ խառնարան մըն է, ուր կրնաք շրջապատուիլ: Ձեր լուրերը  
անպակաս ըրէք:

Յետայինները ճամբայ պիտի ելլէին, երբ Սուրբ Յովհաննու վանքին  
սուրճանդակը հասաւ: Մարտիկները պահ մը իրենց գէնքերը վար դրին, ու  
սպասեցին նոր հրահանգի:

Անդրանիկ եւ Սարճատ առանձնացան Տէր Սարգիսին հետ, ու լսեցին  
սուրճանդակի լուրերը:

- Առաջնի վարդապետը պատուիրեց որ այս գրութիւնը ձեզի բերեմ:  
Մուշէն հրահանգ ստացած էր: Մշոյ դաշտի քանի մը գիւղերուն մէջ ան-  
դէն ժողովուրդը կը կոտորուի: Բերանացի ըսաւ, թէ թուրքի ձեռքը Յե-  
տայիններուն չի հասնիր, բայց ծեր, կին ու երեխայ ոտքին տակ կ'երթան,  
ճար մը գտնելու է:

Սարճատ կարգաց նստակը, որ գրուած էր Կեդրոնական Կոմիտէի  
անունով եւ ստորագրուած էր Տատրակ:

- Գեղամն այ ատեն դուած է Տատրակ մնալու: Ու Տատրակէն, խո-  
հեմութեան քարոզէն տարբեր բան մը սպասելի չէր:

- Գէո'րգ, խոհեմութիւնը մէկ կողմ դնենք, բայց Դաշտի գիճակը  
ծանր է, ու անհրաժեշտ է որ մեր խումբերու շարժումները կարգի բերենք,  
եթէ քիչ վնասով դուրս գանք դաշտի կոխներէն, մեր խումբերը դուրս պա-  
հելու տեղ կ'ուենենանք:

- Գեղամի տեղեկութիւններէն կ'երեւի, թէ Սասունը արշաւող Գիւր-  
տերը արդէն հեռացած են շրջանէն, իսկ թրքական բանակի մեծ մասը  
վերադարձած է Մուշ, - ըսաւ Սարճատ, - ըստ երեւոյթին, հայութենէ  
զատարկուած Սասունը աւելի սարսափ կը պատճառէ մեր թշնամիներուն:  
Սասունը մեր առջեւ բաց է, կրնանք վերադառնալ հոն:

- Գէո'րգ, - միջամտեց Անդրանիկ, - Դաշտի խումբերը երեւի վը-  
րայ չենք կրնար թողուլ, ու մանաւանդ պիտի սպասենք Մուրատին:

Խորհրդակցութենէ անմիջապէս ետք, խումբերը ճամբայ ելան: Ա-  
նոնք աստղագարդ երկինքէ մը կ'իջնէին դէպի մշուշոտ դաշտը, ամէն քալ  
չափերով, ուշադիր ու զուսպ: Ձինուորական մարմինը որոշած էր միջա-  
վայրը չափել, նախաձեռնութիւն մը ունենալէ առաջ, Դաշտ իջնող խում-  
բերու զործողութիւնները իրենց նպատակին հասած էին: Սասնոյ բարձ-  
րունքները բռնող թրքական զորամասերը ետ կը գառնային դէպի Մուշ եւ  
Դաշտ, ու թերեւս քանի մը օր ետք միայն պահակ վաշտեր մեային դա-  
տարկուած Սասուն:



Խումբերը արագօրէն հեռացան Դոմերի լեռնանցքներէն,  
Տէր Սարգիս զիշերուայ լուսութեան մէջ անոնց ոտքի ձայներուն կը  
հետեւէր, ու հաւաստի եղաւ թէ մէկ խումբը կ'ուղղուի դէպի ՈՂՂԵՂԱՊԱՃ,  
իսկ միւսը դէպի Սուրբ Յովհաննու անտառը:  
Լեռները լուռ էին, մինչ Դաշտի արեւելեան մասերուն մէջ ընդհա-  
րուածները կը շարունակուէին: Արեւմտեան զիւղերը, որոնք կ'իյնային



Մուրք Կարապետի հովանիին տակ, մինչև Մուրաա դետ, խորհրդաւոր լուսթեան մէջ էին շարաթէ մը ի վեր:

Թուրք կառավարութիւնը, լարուած ուշադրութեամբ կը հետեւէր բոլոր շարժումներուն: Հրամանատարները փնտռուքի մէջ էին, դիտնալու համար թէ ո՞ր փոխադրուած է հայ ազատագրական բանակի կեդրոնը:

Աջէն ու ձախէն հասած դեկուցումները դո՛հացում չէին տար Հաֆիզ փաշային:

- Ո՞ր է Անդրանիկը, ո՞ր է Գէորգ Զաւուշը, այս վտանգաւոր կեա-  
վութեան շուրջ չկայ:

- Անոնք այլեւս անգամայն չեն, - ըսաւ Քէօսէ Պինպաշին, որ տաս-  
նամեայ փորձառութիւն ունէր Ֆետայական կռիւններուն մէջ, - Ֆետայի-  
ները կ'երբեմն այն ատեն, երբ կռիւր իրենք սկսին: Անոնք կրնան երեւիլ  
Նեմրութի բարձունքներուն վրայ, կամ այս ու այն վանքի անտառներուն  
մէջ: Օր մը զանոնք պիտի գտնենք Մուշի ամէնէն մօտիկ գիւղը, ու յա-  
ջորդ օր անոնք արդէն Պիթլիսի շրջանը տակնուվրայ պիտի բնեն:

- Այս կեաժողո՞ւրներու ապստամբութիւնը ճշող բանակի հրամանա-  
տարը դուն ես, Պալի՛ Պէյ: Այս անտառածներուն դէմ դուն կուսած ես  
տասը տարիէ ի վեր, ի՞նչ խորհուրդ կու տաս:

- Մուշի՛ր փաշա, իմ կարծիքով Մասունի ապստամբութիւնը ճնշու-  
ած է, լեռներուն վրայ մարդ չէ մնացած, իսկ ժողովուրդը, որպէս զին-  
ւորական գերի, հոս Մուշ մէջ կոտավարիչի հսկողութեան տակն է: Օս-  
մանեան փառապանք բանակը իր պարտականութիւնը լրիւ կատարած է,  
հետեւաբար բանակին մեծ ժառը պէտք է հանդիստի կոչել, ու Ֆետայա-  
կան խռովելու հետապնդումը թողուլ ոստիկաններուն եւ ժանտարմանե-  
րուն: Անշուշտ, եթէ հարկ չլլայ, կառավարութեան խնդրանքով, բանակի  
փաշաերը օգնութեան կու պան անոնց:

- Պալի՛ պէյ, միայն Ֆետայիները չեն, ամբողջ ժողովուրդը, այս  
դաշտին մէջ, ապստամբութեան դրօշը պարպած է, - փրփուրը բերնին՝  
դայրայից ըսաւ Հաֆիզ փաշան, - ամէն օր կռիւ տեղի կ'ունենայ, ու ամէն  
օր ընդհարումները կը ծաւային մինչև Պիթլիս ու Ախլաթ: Այս ժողովուր-  
դը արժատէն կարելու է:

- Մուշի՛ր փաշա, իրաւունք ունիք զայրանալու, բայց նկատի ունե-  
ցէք երկու-երեք ամիս առաջ մեր կռիւր Մասնոյ ձորերուն մէջ, որ ի-  
րական պատերազմ էր: Այսօր եթէ մեր վաշտերը, զբտական ցեղախումբե-  
րը, մանաւանդ ժանտարմները Մուշ դաշտին մէջ միայն իրենց ուժը ցու-  
ցադրեն, ու խաղաղ թողուն հայ զիւղացիները, փորձով պիտեմ թէ անոնք  
հնազանդ պիտի մնան օսմանեան կառավարութեան: Այդպիսով ապստամ-  
բութիւնը կը մարի՝ ու մենք միայն դորձ կ'ունենանք այս ու այն անկիւնի  
մէջ թաքնուած Ֆետայիներուն հետ: Օտար պետութիւններու հիւզատու-  
ները Մուշ կը գտնուին, այդ շուները հոս եկած են որպէսզի տեղեկութիւն-  
ներ տան իրենց կառավարութեան եւ միջամտեն Մուլթանի գործերուն: Ա-  
նոնց աչքերուն առջև, կին ու երեխայ կոտորելը վնասակար է մեր պե-  
տութեան:

- Իրաւունք ունիս, Պալի՛ Պէյ, այս շուները երկու ամիսէ ի վեր  
դուխտ տարին, ու գիտեմ թէ ամէն շաբաթ սուս տեղեկագիրներ կը հաս-  
ցունեն մարաքաղաքները: Իսկ Հաշիբը արդէն ազմուկը աշխարհի շրջ  
կողմը տարածած են:

Քիչ մը մտմտալէ ետք, Հաֆզ փաշան կարծես ուրիշ միջոց մը գըտած էր, աւելի անաղմուկ ու անպատասխանատու գործելու համար:

- Իրաւունք ունիս, Յալի՛լ Պէյ, բանակին հանդիստ տալու է: Խորհրդակցիմ կառավարիչներուն հետ ու միջոց մը գտնենք աւելի քիչ պատասխանատուութեամբ դուրս դալու այս անիծեալ կեալուրներու խառնակութենէն:

Պիթիխի եւ Մուշի կառավարիչները ծոյն պահուն կը մտնէին բանակի րնդհանոր հրամանատարներուն մօտ, ու առաջին խօսքը կ'ըլլոր.

- Հիւպատոսները քիթերնին տմէն տեղ կը խոթեն, ինչպէս տեսաք, անոնք մինչեւ Սասուն եկան, կոխները իրենց աչքով տեսնելու: Այսօր այլ բանտը դացած են, ու դուք դիտէք թէ ինչ բաղմութիւն կոյ հոն: Կարելի չէ՞ զանոնք քշել այս վայրերէն:

- Ատոնց ներկայութիւնը մեր գլուխն ալ կը ցաւցնէ, բայց առանց Սուլթանի հրամանին, չենք կրնար զանոնք հեռացնել այստեղէն, - ըսաւ Հաֆզ փաշան:

Կառավարիչները հազիւ թէ տեղաւորուած, խորհրդակցութեան պիտի սկսէին, երբ սպայ մը ներս մտաւ հաղորդելու թէ հայ կրօնականները կ'ուզեն զիրենք տեսնել:

Հաֆզ փաշան բորբոքած ոտքի կանգնեցաւ.

- Ի՞նչ կ'ուզեն այդ սեւազլուխ կեալուրները, ամէնէն վտանգաւորը անոնք են արդէն, առաջ ատոնց գլուխը պիտի կտրէինք:

Սուրը կը դողդոջար Մուշի փաշայի կողքէն կախ, ու աչքերը ըմբօրած էին:

- Հաֆզ փաշա՛, թոյլ տուէք որ ներս դան, թերեւս բան մը հասկնանք անոնց արտայայտութենէն, - ըսաւ Մշոյ կառավարիչը:

Հաֆզ փաշան դժգոհութեամբ աթոռը գրաւեց, եւ սպային նշան ըրաւ որ ներս առնէ եկողները:

Իրարու ետեւէն ներս մտան Պիթիխի եւ Մշոյ առաջնորդները: Անոնց կ'ընկերանային Վարդան վարդապետ՝ Սուրբ Կարապետէն, ու Առաքել վարդապետը՝ Սուրբ Յովհաննու վանքէն: Ժողովուրդի սառապանքը անոնց դէմքին, սւսերը կըրօն, կանգնած էին անոնք հակառակ կէս բերան հրաւիրին որ աթոռ առնեն:

- Ի՞նչ կայ, Մուրախաւ էֆէնտիներ, խօսք չէ՞ք կրնար հասկցնել ձեր ժողովուրդին որ մեր գլուխը այսքան կը ցաւցնեն, - ըսաւ Հաֆզ փաշան, խորը աչքը անանց վրայ պտտցնելով:

Քայլ մը առաջացաւ ձերունագարդ Վարդան վարդապետը, ձերմակ մօրուքը դողդոջուն:

- Մուշի՛ր փաշա, այս անմեղ ժողովուրդը ամէն օր կը կոտորուի, մենք մեռնենք թաղելով յողնեցանք: Եթէ ըմբոստ մարդիկ կան, ձեր բանակը շատ է ու ձեր ձեռքը երկար, բռնեցէք զանոնք եւ պատժեցէք: Բայց մենք ամէն օր կիկն, երեխայ ու ձեր սպաննուածներ կը տեսնենք:

- Ձեր ժողովուրդը մեծոյ ու պզտիկոյ անհնազանդ է, դաւաճան ու ապերախ օսմանհան պետութեան, ի՞նչ կ'ուզէք որ մեր զօրքերը ընեն, - ըսաւ Հաֆզ փաշան, կտրելով խօսքը Վարդան վարդապետին:

- Մուշի՛ր փաշա, իշխանութիւնը ձեր ձեռքն է, ի՞նչ որ ուզէք՝ կըրնաք ընել: Մենք այսօր հեռագիր պիտի տանք վեհափառ Սուլթանին, որ մեր ամբողջ ժողովուրդը տեղահան ընեն այս նահանգէն: Այլ չենք կրնար

անձնազ ժողովուրդին կոտորածը տեսնել, Աստուծոյ առջեւ պատասխանատու եմք:

- Մենք Հայ ժողովուրդէն հնազանդութիւն կը պահանջենք, իսկ դուք Աստուծոյ սնունդ խօսելով՝ հեռադիրներ կու տաք վեհափառ Սուրբային, - ըսաւ: Հոսփոյ փաշան, փրփրած բարկութեամբ, - հեռադիր տալն ալ ըմբատութեան նշան է: Եթէ կրնաք ձեր ժողովուրդին խօսք հասկնալ, ուրիշ ըսելիք չունիմ:

Պօսքը փերջացած էր: Առաջնորդները կըուն դուրս եկան, եւ ուզուեցան գէպի հեռագրատուն:



Կրօնական հայրերը հեռադիր ըրին Սուրբային եւ Պատրիարքին: Հեռադիրը բողոքի յատուցում երէ մըն էր: Ու երբ անոնք տխուր ու մտածկոտ դուրս կու գային հեռագրատունէն գէպի հայոց առաջնորդարան, Վարդան փարպեղեան իր բնկերակիցներուն դարձաւ:

- Գազանը նորէն արթնցած է ասոնց մէջ: Մեր ժողովուրդի դոյրութիւնը մասնակի տակ է, ու մենք անգօր ենք աւելի բան մը ընելու: Եթէ Պեր ժողովուրդի մէկ մասը զինուած չըլլար, Մշոյ դաշտը արեան ծով կը դառնար:

Առաջնորդները մրմնջով ողբերգութեան կը մասնակցէին: Ու մարմըրուն յոյս մը կը կապէին անձնուրացներու հրաշագործ բազուկներուն:

Հեռագրատան սնորհներ անապարանքով կը մտնէր Հաֆղ փաշայի եւ կառավարիչներու ժողովէն ներս, ու կը հաղորդէր կրօնապետներու առած հեռադիրներու բովանդակութիւնը: Տեղեկատուի իր պարտականութիւնը կատարած, ձեռքերը շփելով՝ խոնարհութեամբ դուրս կու գար:

Մտալ էր Հաֆղ փաշան: Մտայեցան նաեւ երկու կառավարիչները: Միայն Քէօսէ Պիկապուզին հանդարտօրէն անոնց հոգին կը զննէր: Հաւատարիմ էր Սուրբային ու որպէս գինուորական՝ իր պարտականութիւնը լրիւ կատարած էր:

Պահ մը լսու կը մնային անոնք, ամէն մէկը իր կարգին նոր ճամբայ մը կը փնտռէր Տարօնի ժողովուրդը բնկեցու համար:

Մշոյ կառավարիչը եղաւ առաջին խօսողը:

- Ձինուորական իշխանութիւնը իր ընկերքը դիտել, բայց եթէ թոյլ տաք, պիտի առջարկեմ միջոց մը, որ կրնայ մեր գործը դիւրացնել:

- Ըսէ՛ք, կառավարիչ էֆէնտի, - ըսաւ Հաֆղ փաշան:

- Թոյլ տուէք կանչեմ ինձ մօտ այս կրօնապետները եւ յայտնեմ անոնց, թէ Սուրբային հեռադիր ստացած եմ: Անոր հրամանն է, որ Ծեռայիները հեռանան այս նահանգէն, ու ժողովուրդը խաղաղ կեանք վայելէ:

- Է՛, այդ առաջարկով կը սպասե՞ս որ Ծեռայիները հեռանան այս վայրերէն, - վրայ բերաւ Հաֆղ փաշան, - փորձեցէ՛ք, միջոց մըն է:


Հայոց առաջնորդարան հաւաքուած կրօնականները եւ երեւելիները կըսած էին սպառնական վտանգին դէմ:

Մշոյ դաշտը բոցավառ հրդեհի բռնուած էր:

Արիւնք կը հոսէր արեւելքէն արեւմուտք, ու քաջակորով մարտիկները կ'իյնային իրենց զէնքին վրայ, փառաց պսակին արժանացողի ժպտուքը դէմքին:

Կ. Ս.

(Շար.)



153-2000

4888

## ԿԱՊՈՑՏ ԵՐԱԶ

Մի՛ ըսէք ինձի,

Թէ ինչո՛ւ յաճախ – իրիկնամութիւն –  
Աչքերըս հեռուն կ'երագեմ անվերջ,  
Թէ աչքերուս մէջ ինչո՞ւ այսքան պերճ  
Հորիզոնէ մը շուքեր կ'երկարին.  
Աչքերըս մաշյլ, հեռո՞ւն, մտերիմ  
Ու ծանօթ մէկուն կարօտը ունին.  
Մի՛ ըսէք ինչո՛ւ – իրիկնամութիւն –  
Այս տառապագին երազը ունիմ:

Մի՛ ըսէք ինձի,

Թէ ինչո՛ւ յաճախ – մութը իջնելուն –  
Ես ալ հոգիիս խորունկը կ'իջնեմ,  
Թէ նկարին դէմ ինչո՞ւ լուսադէմ  
Աղօթքըս կ'ըսեմ արցունքով լեցուն.  
Հոգիս ամայի երկար ատենէ  
Տիրոջ կը սպասէ պատկերին լուրն.  
Մի՛ ըսէք ինչո՛ւ – մութը իջնելուն –  
Մութ մ'ալ ինձի հետ սրտիս մէջ կ'իջնէ:

Մի՛ ըսէք ինձի,

Թէ ինչո՛ւ յաճախ – երագնեբու մէջ –  
Կարուած անձիս պատրանքը կ'ուզեմ,  
Թէ կը մտածեմ՝ ինչո՞ւ այս վրսեմ  
Կեանքն ունի խաղի այսքան ելեւէջ.  
Հեռաւոր մէկուն գոհած եմ հիմա  
Երազըս կապշտ կեանքէն սիրագէտ.  
Մի՛ ըսէք ինչո՛ւ – երագնեբու մէջ –  
Կարուած անձիս դեռ պատրանքը կայ...:

ՇԱՀՊԱՆ

**ԳԵՈՐԳ ԱՔԷԼԵԱՆ**

**Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն**

(Գ Ի Շ Ե Ր Ո Վ)

Այդ օր Գալատուրանէն Քէսապ ելլելու մեծ ախորժակ լուծէր, որովհետեւ ծխախոտի սերմ պիտի նետէր: Բայց Սուէտիացի Կրպոյի թախանձանքներուն դիմաց, անզօր մնացին իր բոլոր առարկութիւնները: Ուստի բուրդէ թանձր շալ մը փաթթեց դիտուն, եւ կարծուկ Կրպոյին առջեւ բարտիկ հասակը ճօճելով, հեւալով, փշելով ելաւ Քէսապ...

Անցան Գառուէնի Մահչէին սրճարանը, մէկ երկու ձեռք փիռէլ խաղալու...

Չզգացին թէ ինչպէ՞ս օրը անցուցեր էին: Արեւը, որ արդէն իսկ այդ օր շատ չէր տաքցուցած սառած Քէսապիկներուն կոնակները, կարծէք շօփէր Գառնիկին պատին Քէսապ ելլելուն կը սպասէր, որպէսզի երթար քնանալու...

Հետուններէն փոսքային դղրդացընող աղմուկը լսելով, Աւտան սկսաւ աւելի արագ, եւ աւելի ջղաձգօրէն խաղալ, որպէսզի վայրկեան առաջ խաղը լրացնէին, եւ տուն վերադառնային: Փոսքային ձայնը՝ յայտարար աղաւնը, անն էր արեւմարին... Եւ յետոյ պէտք էր կարած իջնել, տեսնելու համար թէ ինչ նորութիւն կայ. եկող պացող կա՞յ թէ ոչ...

Սուէտիացի Կրպօն, որուն աչքերը շատ ալ լաւ չէր ընթացած այդ օր, զբթին տակէն կը մրթմրթար, եւ կը հարչոյէր Աւտային, որ յօժարած էր ընկե-

րակցել իրեն: Տասը կը հաշուէր եւ մէկ կը խաղար: Աւտան ալ կ'աճապարէր՝ ոչ միայն վայրկեան առաջ տուն հասնելու համար, այլ կը վախճար որ բարտին անիւք դաւաճանէր իրեն եւ այլ ուղղութեամբ սկսէր դառնալ...

Կրպօն իրաւացի էր մի գուցէ: Իր այդ դանդաղկոտութիւնը՝ ո՛չ միայն պիտի ճերմկցնէր իր երեսը, այլ նաեւ պատճառ պիտի ըլլար որ Տէօրթ-Եօյլի փոսթածի Անդրանիկը կարենար շատ կարեւոր նամակ մը հասցնել Աւտային, որ սկսած էր զթին տակէն զրթմնջել, իր սեւ բարտին քայրն ու մայրը դռնելով...

Երբ Անդրանիկ նամակը առաւ թուղի օպիէն դերպակցած Աւտային, եւ նարկիլէ մը ապուրեց, վերջինը նամակի պահարանին վրայ աչք մը նետելով՝ արդէն իսկ հասկցաւ, թէ Հայաստանի մալ է: Կարդալ չէր դիտեր, մայն տեսաւ Մահչէին.

- Տօ Մահչէ, կիկրտի (կրիկոտէ-կարդայ) ըսաւ բունը (այս բանը):

Մահչէն, իր կարգին, թէեւ շատ սուսմատենչ եղած էր ժամանակին, բայց առիթ չէր ունեցած դպրոցի երես շատ տեսնելու: Այսուհանդերձ առաւ նամակը եւ երկարեց Գրչմանին: Արդէն շատ ալ տրամադրութիւն չունէր ինք: Այդ օր պոքօք շատ յաջող չէր պացած:

Գրչմանն ալ Ամերիկայէն Քէսապ վերադարձած էր, վերջին տարիները

ծննդավայրին մէջ անցնելու համար: Այդ օր կ'երեւի թուական չէ՛ր արած ըլլալու էր, որովհետեւ Միտաք աղային քովէն քառորդ թիւօ հալլաւ եւ ֆրրննի կարաստէն երկու զարասկո՛ւ հացիկ զնած էր եւ Մահչէին սրճարանը ելած կերած:

Երբ Մահչէն նամակը տուաւ ձեռքը, իր ակոսները մտքերէնով զրաղած էր: Ստիպուած եղաւ ընթերցումը ընդ-միջէլ մէկէ աւելի անգամներ:

Յետոյ՝ արարք ըլլալու համար պէտք է խոստովանիլ, որ նամակը փրո-ֆէսոր նամակ ըլլալով, այդ քան ալ ըն-թեռնելի չէր:

Ինչ որ է... ադի լեղի բաներ մը դուրս եկան:

Իր Փրոֆեսորը եղբայրը զինք Հա-յաստան կը հրաւիրէր...

Ինք իր կեանքին ընթացքին շատ քիչ անայլպէս քան իր լուծուած էր, բայց ասոր պէս անայլպէս բան ո՛չ լսած էր, եւ ո՛չ ալ կրնար լսել:

Ինք ո՛ւր, Հայաստան երթալը ո՛ւր...

Ետզուպենց Ստեփան խօնամ, կամ Գալմատարենց Ախպիրը երթան, է՛հ, հասկնալի է, անոնք տարիներով վարժա-պետութիւն ըրած մարդիկ են: Նոյնիսկ երբ իրենց դիւղէն շալվարնի Գալմատարենց էզեկելը, Հայաստան գացած էր, ինք բնաւ չէր զարմացած: Գոնէ տարի-քոտ մարդ էր, եւ Եպիսկոպոս գաւազ ունէր Հոն. բայց ինք երթայ իր Փրո-ֆեսորը եղբորը հետ ինչպէ՛ս խօսի...

Թէ՛ շմած էր, եւ թէ ալ դժկամ էր կարծէք: Եւ իրաւունք ալ ունէր: Մահ-չէին թուրի օղիէն կը գտնուէ՞ր Հոն, Հայաստանի մէջ...

Շուրջինները, մանաւանդ Կրպօն, կը քաջալերէին զինք, նոյնիսկ ոճանք կը շնորհաւորէին: Բայց ինք թէեւ կը խօսէր շուրջիններուն հետ, բայց յայտ-նասպէս ինկած էր խոր մտտութի մէջ:

Ընդոտ սեղէն ցատկեց: Յայտնի էր թէ մտքին մէջ լոյս մը ծաղած էր... Կրպոյնի պատուիրեց սպասել իրեն քիչ մը: Ուղղակի Սերգօ աղայինց՝ Պօղոս

աղային քով ելաւ, որ միմտերին նստած, կոնական ալ բարձի մը տուած, Ալա թուրֆիա մարկիլէն կը զլլացնէր...

Այսպիսի ազգային հարցերու մէջ, կերպոյն հեղինակութիւնը Աւտային համար, ինք՝ Պօղոս աղան էր: Պօղոս աղան ուշի ուշով մտիկ ընելէ ետք, Աւտային պատուիրեց առանց սատամս-լու՛ երթալ: Այս երթուղարձին նիւթա-բարոյական օգուտները բացատրեց իրեն: Յետոյ մէկէ աւելի լմասլին-րով իր միտքը արեւու լոյսին պէս պար-զացուց Աւտային: Ապա յարեց թէ՛ եթէ զրամի պէտք ունէր Աւտան, թող չքաշ-ւէր...

Յեղճ Կրպօն մինչեւ Գալատարան վաղելով հասաւ: Իր նստած հինգ քաշ-լերը հագիւ թէ հաւասարէին Աւտային նստած մէկ քաշին...

Կնիկն ու չոճուխ-չոճուխները շա-փաղանց ուրախացան, որովհետեւ Հա-յրիկը ամսյին քով պիտի երթար, եւ ո՛վ զիտէ ինչպիսի նուէրներ պիտի բերէր...

Այդ դիշեր, ամբողջ Քէսապի մէջ տարածուեցաւ: Աւտային աւետար... Նոյնիսկ Գալատարանի աղուէնները դիմովցած էին կարծէք այդ լուրէն, եւ մէկ քանի հաւ աւելի կերան այդ դի-շեր...

Երկու օր ետք, ժրեց Նօֆէրին հետ, որ այդ շարաթ դեռ չէր կոտած չօֆէր Գառնիկին հետ, իջան փառփոր-քի տայրան:

Տասը-տասնըհինգ օր մը ելան ի-ջան ի տայրա:

Մինչ այդ արդէն բոլոր Քէսապցիք լսեր էին Աւտային Հայաստան երթալու գրիթէ անհաւատալի լուրը: Բոլորն ալ սկսեցին էին բարեկամական եւ ազգակա-նական կապեր որոնել: Երբ իրիկունը Գառնիկին փութան զղրդալով, ճաթե-լով-ճաթուտելով Քէսապ ելլէր, սողո-րականէն շատ աւելի ստուար թիւով դիմաւորողներ կ'ուսննար, շնորհիւ իր անդին յաճախուիլին, գոր ահաւաստիկ մէկ երկու շարաթէ ի վեր կը տանէր բերէր:

Յեղճ Աւտան հաղիւ ոտքը դեռին զրած, եւ երբուն մէկ քանի քայլ տած

(չճոռնամ ըսելու, որ Լաթաքիա Ապու Սմատնին խանութը կ'անցնէր՝ տայրա-յին վերադարձին եւ Նոֆէրին հետ մէկ-կազման պաթճա օղի կը նետէին՝ յոտըն-կայս... ) երբ մի քիչ երեւուն քայլերով փոսքայէն հեռանալու փորձ ընէր, տեղացիները կու գային, թեւէն կը քաշէին, «Եհուր բան մը ըսեմ հէլէն» : Մին գուլպայ պիտի զրկէր, ուրիշ մը բուր-դէ շալ մը՝ եօթը մէթր կրկայնքով, եր-րորդ մը «տախմցու» մը իր քեռայրին, չորրորդ մը Փէս մը իր աներկօր... :

Եւ այսպէս՝ շատ շանցած, Քէսապ-ցիին ո՛չ երկարահասակը մնաց, ոչ կար-ճահասակը, թէ՛ դէրը եւ թէ՛ նիւսքը, բոլորն ալ, բոլորն ալ փորձեցին շափ-իլ Աւտային երկնամերձ Հասակին հետ, եւ բաներ մը զրկելու խնդրանք ներկա-յացնել :

Բոլորն ալ Համաձայնած էին կար-ծէք : Իւրաքանչիւրը կու գար եւ ազգա-կանական իւրայատուկ կապի մը յայտ-նութիւնը կը կատարէր :

Մին...  
 - Գիտես, Աւտա՛, իմ կնիկս ձեր ջոփի թաղէն է, հա՞, մենք ինձո՞ք ենք, դուն աներձագ կու գաս ինձի : Հաճիս ասնկ պզտիկ փափքիկ մը... :

Ուրիշ մը...  
 - Տօ Աւտա՛, ըսու հօրդ հօրաքրոջ տալի՛նք տաղբին փեսային եղբոր կնիկին կըքայրն եմ... Սանկ պզտիկ Փէսիկ մը... :

Երրորդ մը...  
 - Աիլա՛ն, Աւտա՛, վալլա՛ն շատ ուրախացայ որ պիտի երթաս եղբայրդ տեսնելու : Վալլա՛նի ճիշդն ըսելով, քու երթալը շատ իրաւացի էր : Այս վարժա-պետ-մարտապետ կը զրկեն, ատոնցմէ ի՞նչ կ'ելլէ : Չէ, վալլա՛ն ես շատ ուրա-խացայ, եթէ կարելի է պզտիկ բան մը... :

- Խ՛յ, Աւտա՛, մենք պապա տաքթու ենք. ո՛չ միայն այդքան՝ այլ նաեւ ազ-գական, ես ըսու հօրաքրոջդ աղջիկը փախցուցած եմ Սիմոննեց Դաւիթին Համար... Հա այդ Դաւիթին Համար Փէս մը... :

Այսպէս՝ այնքան ասեն, որ Աւտան Լաթաքիա ելաւ իջաւ, առտու իրիկուն լսեց այսպիսի գովասանքներ, շոյանք-նե՛ր, Նոյնիսկ ո՞մանք իրենց ո՛ճը սքած էին եւ վերածած գրականութեան : Ես-տեր՝ որոնք դեռ տասը օր առաջ չէին բարեհաճեր բարեւ մը իսկ պարզեւելու խեղճ մարդուն, ահաւասիկ կու գային, եւ կը ցցուէին ոտքերուն ջով, եւ ուժ կու տային իրենց լեզուին... :

Իսկ Աւտան, բնաւ տարուողներէն չէր : Ապու Սմատնին ջով խմած օղին թեւ կու տար լեզուին, եւ բազմաթիւ պատճառներ կը թուէր՝ ըստ որում չէր կրնար իրեն եղած այդ խնդրանքներուն զոհացում տալ : Բայց մարդիկ դիւրաւ Համոզուող չէին, որով այնքան ալ թե-թեւ պիտի չըլլար իր բեռը... :

•

Ահաւասիկ կարածն են : Բոլոր Քէ-սապիք եկած էին Աւտան ճամբելու : Երիտասարդ թէ տարեց, պառաւ թէ զա-նաճալ ձերուները, հոն էին, դեռ թո-ղունք զիկներն ու զլոմուխներն : Ես-տեր՝ նախապէս իրենց կատարած ա-պրապրանքներուն յետ դրութիւնները կը փակցնէին :

- Խ՛, Աւտա՛, երթդ բարի, դարձդ աւելի՛ բարի : Բարեւ ընելու չճոռնա իմ աղբոր աղոց : Այդ բո՞ւսն ալ միաքոջ թող մնայ... :

Ուրիշ մը կը ձայնէր...  
 - Կերածդ խմածդ հայտ ըլլայ, աղբա՛րս : Միայն փափքիկս սող սելիմ տեղ հասցուր :

- Աներձագիս ըսէ, որ չի՛ մը դոն-եսկ թող զրկէ :

Սուէտիացի Կրպօն, Աւտային տա-րիններու օղիկիցն ու մտերիմ բարեկա-մը, դժուարութիւն կ'ունենար Աւտային կոնակին թփթփացնելու : Աստուած ա-սոր անոր հասակ բաշխած ատեն՝ մեր Կրպօն թ՛րուկի մը համար ուլի մորթ մը քերծելով զրաղած էր կ'երեւի, եւ ճիշդ ստոր համար ալ չէր կրնար Աւ-տային կոնակը պէտք եղածին պէս շո-յել... Բնական էր որ ինք եւս իր ծնո-

զաց եւ եղբայրներուն բաներ մը զընկէք...

Երբ ոտքը փոքրային դրան սանդղահամարին զբաժնէր Աւտան, եւ բազմաթիւ թաշկինակներ կը ճամբէին զինք, Մահչէն՝ արճարանապետը, եկաւ եւ գրպանը բան մը սահեցուց.

- Վափորին մէջ ակոսայի ցաւ կ'ունենաս թերեւ: Կոբէկի կոթով խցանած օղիի շիշով՝ Մահչէն կ'ուզէր չ'ըրարին զդաստմոհերը արտայայտել յանախորդի մը, որ տարիներէ ի վեր աշակերտած էր իրեն անթերի կերպով՝ իր արճարանին մէջ:

Շօֆէր Գառնիկը շատ ալ լաւ չէր քեր ինքնաշարժը այդ տուտուտ: Կ'երեւի թէ լաւ նախանշը չէր ըրած, այսինքն մէկ երկու զուաթ չէր նետած: Ինչ որ է, լաւ, վատ, Լաթաբիա ինչպէ՛ս հասցնելը մինչեւ օրս դեռ չէ հասկցած մեր ճութատաւորը: Միայն գիտէ, թէ Ապու Մմասնին խանութը պիտի հանդիպէր՝ «ցը» բռնու, բայց յանկարծ ինքզինք «Արմենիա» շոգենատուն քով գտած էր: Նաւը արդէն իսկ կը քուլէր...

- Օտեսա հասանք, - բռու իրեն օտու նաւաստին կոտորուած թրքերէնով մը, որուն հետ ծանօթացած եւ ճութագացած էր, շնորհիւ Մահչէի թուղի օղիի շիշին...

Թիարա առին Օտեսայէն, եւ յանկարծ ինքզինք երեւանի քիտրայի մէրքը գտաւ: Իր ֆրոֆէտը եղբայրը, եւ շատ մը Քէսապցիք ու ծանօթ դէմքեր շարուած էին պատշգամին վրայ: Օղանաւը իր առջեւն էր թէեւ, բայց շնորհիւ իր բարտիական հասակին՝ շատ պարզ ձեւով կը տեսնէր իր սիրելիներուն դէմքերը:

Ինչը Քէսապցիք եւ միւս ծանօթները ողջագուրուեցան հետը: Ուրախութենէն սկսաւ արտասուել: Այո՛, ուրախութիւնը անսահման էր, որովհետեւ ո՛չ միայն իր տարիներու կարօտն էր, որ կ'առնէր իր սիրելիներէն, այլ նաեւ կը զգար, թէ առանձին պիտի չզգար, որովհետեւ բոլոր անոնց հետ, որ կը պագտուէր, բարկ օղիի հոտով մը կ'օ-

ծէին զինք, եւ աչքերը ինքնաբերաբար կը փակուէին: Փերուշում պիտի չըլլար...

Հսկայ թափօրով մը զինք առաւնորդեցին տանար... չէ, ներսուրբին, եղբորը տունը: Ինք իր կնուէքին, որ չէր յիշեր, փոքր թափօր մը ունեցած էր, մէկ հատ ալ յոյս ունէր կրթ թաղուէր: Այս մէկը զուտ շահ էր, մեծ տոկոս մը...

Սղոր պզտիկները անմիջապէս իրենց «Փրօթիտեր» ու հեռատեսիլը ցուցադրելու փորձ մը ըրին: Իերանաբաց կը դիտէր այդ բոլորը...

Հրաւէրներու շարքը շուշացաւ: Արդէն իսկ Մաթուանց տունը հրաւիրուած էր, ապա Կէրմերնց, Գալագուանց, Մանճիկեանց, Գոգեանց, եւ այլն... Ամէն տեղ մարդիկ կը հարցնէին Քէսապի մասին, անոր օղիին, ջուրին, լեռներուն, կովերուն, այծերուն, ծառերուն եւ մարդոց մասին: Միեւնոյն հարցը տասնընեակ մը մարդիկ տասնեակ ձեւերով կը հարցնէին, միեւնոյն պահուն:

Աւտան թաւ եւ կոշտ ծայրով մը հարցերուն կը պատասխանէր, մանրամասն եւ սպառփչ ձեւով: Ահագին բան խօսեցաւ, Գահուեմներ՝ Մահչէին, Միւնասին եւ Նօֆէրին մասին: Հանգամանորէն դեկուցեց Սարալէին, Կաւուր Ալասային, Հաքիմային, էքզօլուցի Նաթանին, Ուտա Միսաքին, Սաղաճեանց Գալիթին եւ այլոց մասին...

Ինչ չէին զոհանար, ոմանք կը հարցնէին Մազման Ստեփանին, խանութպան Ջէնորին, Պետեւի Նշանին եւ այլոց մասին:

Անշուշտ այսքան զեկոյցներ կարողաւ շփոթանց դժուարին եւ անկարելի պիտի ըլլար, եթէ երբեք չըլլար իր հայրենակիցներուն իսկ ձեռքով պատրաստուած օղին, որ, անշուշտ, որքան ալ ընտիր ըլլար, տակաւին չէր կրնար մրցիլ Մահչէին թուղի օղիին հետ... Բայց զէթ մարդուն լեզուն բռնող կապանքները թուլցնելու տեսակետէն լաւ էր եւ նպատակայարմար...



Բայց կ'երեւի թէ այս մարդուն համարձակութիւնը չափէն աւելի կը համարձակէր ... որովհետեւ օր մը իր «Փրօֆեսէօր» եղբայրը հարկ տեսաւ զինք խրատել, եւ զբուռացնել, թէ այդ մարդիկը որ իր շուրջ կը գտնուէին, շատ ալ չէին ախորժիք իր հետ բերած ծանօթ ճշայաստամերիտքեցիներ: Զգուշացուց զինք որ կրնային ջգայանալ, եւ արդիւնքը այնքան ալ նպաստաւոր չէր ըլլար...

Իսկապէս որ Կատարինց Յովհաննէսին տունը՝ ուր հրաւիրուած էր, օտարախ սկսուած ճոխ ճաշկերոյթը քիչ մը նացած էր, որ շատ զէշ եղբայրացուցեան մը յանդէս, եթէ երբեք տեղացիք քիչ մը նուազ շոյած չըլլային օդի թափանցիչը՝ քան ինքն Աւտան...

Իրեն հարցուցեր էին, թէ ինչպէ՞ս է զգրադիտանան, զբարդարանի շէնքը՝ որ նաեւ աղուր է:

Աւտան պոռթկացած էր եւ սկսած լուալ աղուրն ալ, «պարզխանա՛ն» ալ, հոն դացողն ալ, անոր շէֆնի՛ն ալ, օրովհետեւ հոն թուխտի նստած էին, «սակահայաստաններ» մարդիկ: Ինք որ «հայաստաններ» էր, այնպէս անցնելու իսկ չէր ուզեր...

Այդ ձեւով կը խորհէր, թէ տեղացիք բարձր համարում պիտի ունենային իրեն հանդէպ: Բայց եկուր տես, որ մարդիկ ո՛չ միայն բարձր համարում չունեցան, այլ հետզհետէ դարձան ջղային եւ հետզհետէ այդ ջղայնութիւնը դարձաւ կոթողակոն քան մը: Փոթորիկը փրթիլէ այնքան ալ հեռու չէր, բայց նկատելով հիւրին հանգամանքը, որ, ճանրմ, ինչ որ ալ բլլար «Փրօֆեսէօր»ին եղբայրն էր...

Շքեղ եղբայրը տեսաւ, թէ ըլլալիքը պատար պիտի ըլլար կուլ տալ, որովհետեւ Աւտան սկսած էր հնգուալ, եւ ըսածներն ալ պէտք եղածէն շատ աւելի անհասկնալի դատնալ, յարմար պատըրուակ մը գտնելով՝ բռնած էր եղբորը թեւէն եւ տուն վերադարձած:

Շատ ապաւորել եւ նոյնիսկ յուզել ըսելու չափ խոստում մը կատարած էր,

յայտարարելով, թէ համադամին հեղուկ տեսակին շատ ուժ պիտի շտար, եւ երկրորդ՝ մարդոց զպացուսնրու թելերուն հետ շխաղալ, որ կը կարծէր թէ Գահուսնի Միտասին սաղին թելերուն պէս բաներ են՝ ուղածիդ պէս կրնաս խաղալ իրենց հետ...

Բայց մարդուս գլխուն զաւրբ պիտի գայ, նոյնիսկ եթէ քառասուն օր պահեցողութիւն ընէ ... Մէյ մըն ալ Գեղոյնց Փանանը եկաւ եւ զինք ճաշի հրաւիրեց: Խերով բարով չգտար, եւ խերով բարով չհրաւիրէր: Ինչ որ է, գացին: Նստան՝ եւ անմիջապէս մթնոլորտը սկսաւ շինալ, շնորհիւ նստուած մէկ քանի գաւաթներուն: Արգարութիւն ըրած ըլլալու համար, պէ՛տք է ըսել, թէ իր հանդիսաւոր ուխտին վրայ զէ՛թ մէկ դիչեր քնացած էր, որով ... եւ սա ալ ըսեմ, որ եղբայրն ալ գործի բերմամբ չէր կրցած ընկերակցել իրեն...

Սեպտին ասոր անոր կենացը: Օրուայ նշանաբանը ընտրուած էր «Պիտի խմուի եւ պիտի ըսուի», այսինքն պիտի խմուի եւ երգուի: Ոչ միայն զբուռացուցաւ, այլ նաեւ ահագին բաժակահանուր արտասանուեցան: Ամենայեւն Քէսապցի ներքաթողը եղած էր բաժակահանա արտասանող մը...

Մեր մարդը շատ բան չէր հասկնար այդ խրթին խոքերէն, կոմունիզմ, սոցիալիզմ, կուլտուրա, տեխնիկա, կոմբինատ, ցեխ եւայլն ... Իր աչքը յոռած էր Փանանին վրայ, երբ ան բաժակը վերցնէր, կը հասկնար, թէ եկած է խմմելու ժամանակը, ուստի կը վերցնէր բաժակը եւ կը դնէր անոր յատակը ... հետզհետէ կարմրող աչքերով:

Բոլորն ալ ուրախ էին, Բալորն ալ չէնչոյ էին: Յանկարծ, շեռ պիտեք ո՛ր անկիւնէն մէկը՝ որուն զէմքը արդէն իսկ պղտորած էր, բաժակահանա մը պահանջեց օրուայ հիւրէն...

Օրուայ հիւրը՝ որ ձեռքին ունէր ոչխարի ոսկոր մը, ինք իր դիչիւնը ընդոց. բայց ամէն կողմէ կը քաջալերէին զինք:

Բաժակը, որ պարսպ էր, վերցուց.

բովնի մէկը, առանց զգացնել տալու, մէջը օղի լնցուց: Եւ նստած տեղէն սկսաւ բարբառիլ: Ուրիշ մը միթեց զինք եւ ընդոտա ոտքի ելաւ, բայց աշտարակը՝ որ Հիմա կեցած էր սեղանին դէպքը, մարդկային Փիզայի աշտարակն ըլլալ կարծէք, այնքան երբրուն էր...

– Սիրելի Երայրաւորք, Բէֆլի եմ քի հոտ եմ, մեր մէջ, եւ մեր արագը կը խումիմ: Գահուեծի Մինասին կամ Մահ-չէին օղիին չի հասնիր ամա, թող իս մեռնիմ անոր անունին: Ելալլան տղաք, իս կը խումիմ զըմէն գահուեծիցը կենացը, Սիւիացը Կրպիկոն Արպիւրէն կենացը, ձիւր զըմենուն կենացը: Թըղ սասկին չի չի յաստանի տուչմունները... Քէս-պըցի տուչմունները միւր սովեստական չի յաստանին:

Ռուսքի ազդեցութիւն թաղուց իր խօսքը: Նախ չէին յուսար այդքան երկար բարակ գրեթակաւանո մը, եւ մտնաւանդ շատ ալ յարթեցան «Նիյա-տանի տուչմուններ» որակումէն:

Գաղանց Երուսաղէմ, Վեա սո Վեա՛, ո՞վ են իղեր այդ բաւուչմունները:

– Տուչմունները, տուչմունները, – կակազեց Վեան, եւ հորթուկի մը անմեղ նայուածքովը շափեց շուրջինները՝ որոնք սատանաներու պէս կ'երեւէին իր աչքին, եւ տուաւ անուններու շարք մը, որ եթէ այդ թափով շարունակէր, Քէս-սպի մէջ զրեթէ մարդ չէր մնար, բացի մէկ քանի «Հայաստանի»ներէ...

Բարձր կանգնած Վեան շատ ալ չէր նկատեր թերեւս Հեոզհեակ կուտակուող զայրոյթը: Եւ ճառը աւարտելու համար՝ որքան որ ձայն ունէր պրոսաց՝ «կեցցէ Հիյաստանը», եւ փոքր դադարէ մը ետք, զիւտ մը ընդդի պէս «Ռորհըր-դային Հիյաստանը»...

Բաժակը արդէն իսկ յորգած էր, եւ

սկսած էր հոսիլ ու պարպուիլ... Ամէն կողմէ լուտանքներ, հայհոյանքներ կը շարունակէին անճրկած մարդուն դէմքին... Արդէն Ասի պատաւին տղան տեղէն ելած եւ ապտակ մըն ալ իջեցուցած էր իր երեսին: Անակնկալի եկած մարդը փախուտի համբայ մը կ'որոնէր, եւ դառաւ...

Տ

Այն պատուհանէն ուրկէ ցատկած էր, այնքան ալ ցած չէր, եւ ինկած էր իր իշուն ամառնային մտերին մէջ: Փախուտի պահուն կրակուտած էր կնիկն ու շոնուինները... անօրինակելի հայրենասիրութեամբ մը մը...

Յեղճ կինը ընդոտա տեղէն ցատկած էր եւ ամուսինը դատած իշուն մասերին մէջ, շարժելու անկարող եւ լրուալով՝ զբաղած: Նախ շատ տաք ջուրով լուաց ձրենց Նօֆէրը, որ հտեւէն ինկած էր, ըսելով թէ եթէ փասփորթը լրացնէր, օր մը պիտի «խմէին»: Եւ այդ զիշեր «խմեր» էին... Անշուշտ «օճառ»ի հարուածներ չէր մտնար տալու Հայաստանին, հոն դացողին, անկէ եկողին, փասփորթին, «Արմենիա» շոքենաւին, ուստ նաւաստին, օդանաւին, փոթածի Անդրանիկին, մէկ խօսքով այն բոլորին, որոնք անշուքիւն ունէին իր Հայաստան մեկնումին հետ...

Բաւական դժուարութեամբ կինը յաջողեցաւ անկողին հասցնել զինք...

Տ

Մէկ սմիս ետք թեթեւ մը կաղալով, Երեւանի օդակայանին մէջ, ժօտեցաւ իր «Փրոֆեսսոր» եղբորը, Լ: Լրկա՛ր, շա՛տ երկարօրէն ողջադուրուեցան...:

ԳԵՌՈՒՊ ԱՐԷԼԵՍՆ

### 23 ԱՄԻՍ ԲԱՆՏՈՒՄ

Հետագայ էջերը գրական յավակութիւններով գրուած էջեր չեն: Անոնց սակ ստորագրութիւն դնող ամէր հաւամարտ սակէ առաջ գրելու փորձ անգամ ըրած չէ: Այսուհանդերձ, գրութիւնը շահեկան է մէկէ աւելի կողմերով:

Նիւթը վերցուած է Հայաստանի Համրապետութեան անկումին յարգող այն օրերէն, որով մեր Պարագոյն պատմութեան ամենէն յառաջնորդ տարիները կազմեցին, ու համաձէս քերթն տարբերակն անդամներ, տարօրինակ հոգեբանութիւն մը, դէմքեր, բարձր:

Հայրենի մեր ժողովուրդին այդ օրերուն վիճակուած կեանքը վկայագրող բազմաթիւ գրութիւններու կողքին՝ իր կարգին ու իր չափով տարուած վկայութիւն մըն է Յան Եշխան հայատաւրեանի գրութիւնը, որ ճիշակայանման իր պարզ ձեւին ու անկեղծ շնորհիւ շնորհիւ յաջողած է ուրուագծել մթնոլորտը եւ լայսի համը գործող ամենքէն մէկ ժամին:

Կը սկսիմք հրատարակել «23 Ամիս Բանտում»-ը այն վտանգութեամբ, որ ընթերցողը ետուարձրութեամբ պիտի ետտի քաւայալ էջերուն:

Հայաստանի Հանրապետութեան անկումից յետոյ, տակաւին շատ երիտասարդ՝ երբ ես էլ Հասոյ Քաւրիզ, այդ ժամանակ արդէն Հայաստանից Քաւրիզ էին Հասոն եւ անկումին կը Հասնէին բազմաշաղկապ մարտիկներ, Գայնակցական բնորանին՝ մտաւորականներ, մեծ ու փոքր աստիճաններով զինուորականներ եւ կարմիր սարսափէն ճողողած քաղաքայիններ:

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, Քաւրիզ սկսեցին խուժել նաեւ բողոքական գործակալներ եւ շատ չանցած՝ սկսեցին լայն քարոզութեան: Արդէն, բիրնէ բերան կ'անցնէին զանազան շշուկներ, ի միջի այլոց տարագիրներին ուղղուած՝ «բնդհանուր ներում», «անձնորոշման խոստում», «վերադարձ Հայրենիք»ի թոյլտուութիւն եւ այլն:

Վերջապէս, այդ շշուկներից «վերադարձ Հայրենիք»-ը որչ մարդկանց Հա-

մար դարձաւ իրականութիւն. տարագիրներից ոմանք, որոնք իրենք իրենց վերտանգուած չէին զգում, սկսեցին խուժար խուժար վերադառնալ Հայաստան, մինչեւ իսկ սկսուեց Քաւրիզիցի ատեւտրական դասի երթեւեկը դէպի Ռուսաստան:

Հայաստանից լու ու վատ, Հակասական լուրեր կը ստացուէին, ստոյգ ոչ ոք ոչինչ չէր տէր:

Ահաւասիկ այդ շրջանին ինձ վիճակուեց Հայաստան գնալ:

Հայաստան մտնելու թոյլտուութիւն չունենալուս Համար, պիտի գնայի զադտնի ճանապարհով, պարսկական Զուլֆայի եւ Արաքսի ափերից ոչ շատ հեռու, Հնադարեան Ս. Ստեփանոս Նախափայ վանքի վիճակից: Կէս դիւերին Արաքսը ասպարհով անցնելուց յետոյ, լուսաբացին կը գտնուէի Հայկական Զուլֆայում (այժմ՝ Նախիվեան):

Զուլֆան, այդ օրերին, ողբերգա-

կան տեսք ունէր, ոմբակոծուած ու քարուքանդ տներէ աւերակներ, ջարդուած փըշուր, այրուած դուռ ու պատուհաններ, խորտակուած պատեր, քարակոյտերով լեցուն ամառի փողոցներ ու գերեզմանային համադրած լուսթիւն:

Առաւօտը բաւական յառաջացած էր, երբ մտայ այդ աւերակ քաղաքը: Առաջին փողոցը հազիւ զարձած, իբրև շուշուր հակներ դիմացու էլան մի քանի թոտո շներ: Ինձ թուաց որ անարդարեակ մի վայրու՛մ էի, սակայն երբ մի քանի ամառի փողոցներ եւս դռնալուց յետոյ սկսեցին երևնալ հատուկէնտ, ախուր մարդիկ, շունչ քաշեցի: Մի քիչ եւս, եւ՛ ինկայ մի ուղիղ եւ երկար փողոց, որի ծայրին, հեռուն, նշմարեցի մի քանի բեռնատար վակոններ, ծխացող մի շողմեքենայ եւ մարդկային ստուերներ:

Ձուլֆայի երկաթուղակայարանն էր: Քիչ ետք, արդէն խաւնուած կայարանի բաղմութեան, կը սպասէի Երեւան մեկնող զնացքին: Բաւական սպասելուց յետոյ, վերջապէս, Քլաւով, թշուով շարժուել սկսեց վիշապանման հսկայ շողմեքենայը, որ մի քանի անդամներ ետ առաջ զնա-զալուց յետոյ, պոչին կայեց բաւական թուով վակոններ եւ դռնալը գէպի Երեւան, պատրաստ՝ մեկնումի սպասեց:

Բաղմութիւնը, մեծ մասամբ թաւրիզեցի առեւտրականներ, խուճապի մատներեցին: Ամէն մարդ կ'աշխատէր բեռնատար զնացքին մարդատար երրորդ կարգի վակոնը առաջինը մտնել եւ տեղ դրաւել:

Հրմշտուէ, գոռուած-դոչուած: Պատուհաններից պայտուակներ եւ այլ կայացներ ներս նետողների մէջ առանց բեռի լինելու համար, շատ հեշտութեամբ առաջացայ: Հազիւ ոտքս դրել էի մարդատար վակոնի առաջին ստիճանին, երբ գպացի, որ մէկը ձեռքը գրաւ ուսիս: Ենթադրելով որ մէկը կ'ուզէ ինձ կանխել եւ առաջ մտնել, կուսուրկն ձեռքը ուսիցս հրեցի. սակայն, երբ նորից ու այս անգամ ուղղակի թեւէս բըւ-

նած քաշեց, հազիւ դարձած՝ զիմացս տեսայ, ստորանակը ձեռքին՝ քաղաքային տարազով մէկը եւ երկու կարմիր բանակային:

— Սլեդի Ոսա (հետեւի մեզ), եղաւ շեկիստի կարծ ու կտրուկ հրամանը: Արդէն ձերբակալուել էի:

Տակաւին կայարանից շհեռացած՝ զնացքը տեքայով շարժուեց գէպի Երեւան. իսկ ինձ տարին գոյզ Ձուլֆայեցի միացնող Արաքսի վայրի հսկայ կամուրջին կից մի շէնք, որի ճակատին ոռուսերէն գրուած էր.

— Ասօրը արել (մասնաւոր բաժանմունք, Ձեկայի կապուած):

Ասօրը արելում, բոլորը ոռու՛ ինձ մանրակրկիտ խուզարկելուց, ունեցած շունեցածս առնելուց ու հարցը քննելուց յետոյ՝ մեկուսացրին: Միւս օրը, երկու կարմիր բանակայինի հսկողութեամբ, նախ փոխադրեցին Թիֆլիս՝ Ջակչեկա (կովկասեան Ձեկա), յետոյ մի քանի օր ետք, առանց հարցաքննուելու, վերադարձրին Երեւան՝ Արմշեկա (Հայ Ձեկա):

Ձորս ամիս Ձեկայում բաղմութեան զննումներ հարցաքննուելուց յետոյ, ամբասանուած իբր Դաշնակցական սուբհանդակ, հինգ տարի բանտարկութեան վճիռ ստացած՝ փոխադրուեցի Երևանի կեդրոնական բանտը:

✽

Երեւանից ոչ շատ հեռու, զօրանոցներին կից, բարձր պարիսպանման սեւ եւ տխուր պատերով շրջապատուած, երկյարկանի մի հսկայ քարաշէն, մոայլ շէնք էր բանտը: Կեդրոնական շէնքին կից, ուղղակի կպած, ըստ երևոյթին վերջը աւելցուած մի ուրիշ երկյարկանի շէնքի վարի յարկը, նեղ ու երկար միջանցքի երկու կողմերը պարսպ, աջ սինթն առանց բանտարկիայների խուցերից մէկը՝ երկարածող դռնով, առաստաղին փակած մի փոքր պատուհանով, մեծ քարերով, կամարածեւ առաստաղով, բնդարձակ մի սեննակ յատկացուած էր մեղ, քանըլորս քաղաքային բան-

տարկեալներին: Ի միջի ալլոց, դարձա- նալի գույադիպութեամբ, այդ նոյն խցի մէջ, կացինահարուէլուց առաջ, բան- տարկուած են եղել Համազասպը, իր քանըչորս ընկերներով: Դանակով զեր- ւած, անընթեռնելի դարձած պատերին դրուած արձանազրութիւնների հետքերը տակաւին կը մնային:

Իմ բանտի ընկերները, բացի մի զա- նիսից, բոլորն էլ իմ կրկնակի, եռապա- տիկ տարիքը ունեցող, հարուստ անց- հալով, լուրջ եւ վաստակաւոր, յարգե- լի անձնաւորութիւններ էին: Բացի մի քանիսից, բոլորն էլ Դաշնակցականներ: Դժբախտաբար, շատերի անունները կը խուսափեն յիշողութիւնիցս, սակայն շատ լաւ յիշում եմ հետեւեալներին—

Աշտարակեցի Յովհաննէս Դարձան- եան, այլ անուամբ Պալիֆոս. ֆետրը- ւարեան ապստամբութեան ժամանակ, Վաղարշապատի շրջանի Փրկութեան Կո- միտէի նախագահ:

Բաղամթիւ կռիւների մասնակցած, մի քանի անգամներ վիրաւորուած, սա- կաւախօս Հայդուկ Մհեր:

Հայասանի Հանրապետութեան Որոհողարանի անդամ՝ Կօչեցի Սերգօ:

Բաշ Գրառեցի խմբակուս Լեւոն, եւ Հանրապետութեան սպաներից՝ կապիտան Ռուբէն Ղամբարեան: Իւզիբեցի Երուանդ Պանասդաւեան եւ Դրոյի զրոյ աղան՝ Ա- նուշաւան:

Երեւանցի Կօլիա Հախիբըզեան, Ձա- ւէն Կօրկոտեան, Ռաֆայէլ Պոլլեան, (մի քանի տարի առաջ, Թեհրան, ներ- կայիս՝ Ամերիկա):

Ձինուոր Մացակ՝ բանտում մեռած: Վաղարշապատցի մասնակցերիստ՝ Զօհրա Արսէն:

Ձեմ յիշում, թէ ինչու՞, ի՞նչ պատ- ճառով մեզ հետ էր նաեւ երեւանցիներին շատ լաւ ծանօթ, Փետրուարեան Ապրա- տամբութեան ժամանակ բանտից ազատ- ւած եւ հազիւ զննցէ Դաշնակցութիւնը՝ (Խաչատրն զաշնակալար) գրոտուց յետոյ, ուրախութիւնից յանկարծամահ եղած նշանուոր Քաթար Ալի Պանի տղան, իմ հասակակից, սահուն հայերէն խօսող՝

Ալիօշա Ալի Պան օղլի Երեւանակին (Խճճն իրան Դաշնակցականի տեղ էր դնում):

Շատ աղօտ կերպով յիշում եմ նաեւ Գարեգին, Տիգրան, Վաշական անուննե- րը:

Կանանց բաժինում կային մի քանի Դաշնակցական կանայք, որոնցից յիշում եմ Արամ Ալլաճեանի եւ Վաղարշակ Պա- դարարեանի տիկիներին:

Մեր արգելափակուած խցի մէջ, եր- կու կողմից, պատից պատ, ասխտակա- մածի վրայ, կողք կողքի, տուն տեղ ե- դած, շատ սիրով եւ համերաշխ կ'ապ- րէինք բոլորս: Ընտրել էինք նաեւ մեր հերթապահը, որին կ'ենթարկուէինք բո- լորս անխտիր՝ կարգապահ էինք եւ դար- ձել էինք հաւասար մարդիկ, մեծերի հանդէպ յարգալիբ ընկերներ, բառին ամենալայն իմաստով: Օրական երկու անգամ, առաւօտեան եւ երեկոյեան, մէ- կական ժամ լուացուելու, զբօսանքի եւ այլի համար մեզ տրուած ապատութիւ- նից բացի, օրուայ մնացեալ ժամերը մեզ կը պահէին փակուած մեր խոցում:

Հինգ՝վեց ամիս էր ինչ բանտում էի: Մի օր բանտ այցելեցին մի խումբ բուլեւիկ ղեկավարներ, որոնց առաջ- նորդն էր այն ժամանակուայ Հայաստա- նի կոմունիստ կուսակցութեան առաջին քարտուղարը (Վարչապետ), բարձրա- հասակ, գեղադէմ Լուկաշինը (Սրա- պիոնեան): Քրէական բաժինում արագ պտոյտից յետոյ, եկան նաեւ մեզ մօտ: Լուկաշինը անձամբ իւրաքանչիւրիս հետ խօսելուց, մեր նիստ ու կացով հետա- զրբքութելուց յետոյ, խօսքը ուղղելով ընդհանուրիս՝ հարցրեց.

— Ունէ՞ք արդեօք մի որեւիցէ դժգո- հութիւն, դանկատ:

Բոլորիս հայեացքները ուղղուեցին Պալիֆային, որը եւ պատասխանեց.

— Քաղաքացի Սրապիոնեան, նախ դժգոհ ենք, որ այստեղ ենք, դժգոհ ենք նաեւ բանտապահիցը, որ մեզ կոնսլըր է կանչում: Գալով զանդատին, այս դրան շղթան է:

Լուկաշին նայեց դրան հաստ շղթա- յին եւ ժպտով հարցրեց.

- Ի՞նչ կ'ուզէք ասել:  
Պալիֆան ինքն էլ ժպտալով պատասխանեց.

- Կ'ուզեմ ասել, որ այդ անտէր շղթան, որ հիմի բաց է, ձեր մեկնումից անմիջապէս յետոյ պիտի կողպուի եւ մէկ էլ երեկոյան պիտի բացուի, այն էլ միայն մէկ ժամով. ուստի զրկուած ենք, զոնէ դուրսի մաքուր օդ շնչուց:

- Մի՞թէ՞, - զարմացած վրայ բերեց Լուկաշինը եւ ինչ որ բաներ արձանագրել տուեց, ըստ երեւոյթին իր քարտուղարին: Եւ, այս անգամ լրջացած՝ դարձաւ խալիֆային.

- Ասացէք ինդրեմ, ինչո՞ւ էք դժգոհ, որ ձեզ կոնտրը են կոչում, մի՞թէ՞ կոնտրընէր չէ՞ք:

Բոլորս յանկարծակիի եկած՝ նայեցինք խալիֆային: Արդեօք ի՞նչ պիտի պատասխանէ: Ի մեծ զարմանք բոլորիս, մանաւանդ Լուկաշինին եւ ընկերներին, խալիֆան անխռով պատասխանեց.

- Հարցը նրանուծն է, որ մեզ զկոնտրը կանչելով ուզում են ասել կոնտրը-ռեւալիցիոնիւր, եւ այդ մեզ վերաւորում է, որովհետեւ մենք հակայնդափոխականներ չենք. մենք բանտարկուած ենք, ինչպէս անշուշտ դուք էլ դիտէք, հակադուռներս լինելնուս համար:

Առանց բացատրութեան, բոլորս, մինչեւ իսկ ոչ դաշնակցականները, խալիֆայի պատասխանից ցիծութեան մէջ ենք, իսկ Լուկաշինը մի պահ շփոթած, ընկերներին նայեց եւ այս անգամ խօսքը բոլորին ուղղելով, հարցրեց.

- Բոլորդ նոյն կարծիքէ՞ն էք:

- Այո, - պատասխանեցինք բոլորս միտրերան:

Լուկաշինին ընկերակցողներէց մի քանիսին գէմքերը թթուեցին, բանտապետը մի շղային շարժում արեց, սակայն Լուկաշինը լսյն ժպիտով ասաց.

- Երանի թէ մեր բոլոր հակառակորդները ձեզ պէս լինէին:

Յանկարծ, մինչ այդ գախկոտ կարծրած Ջուէնը վրայ բերեց.

- Մենք՝ բոլոր Գաշնակցականներս նոյնն ենք:

Լուկաշինը զարմացած մի հայեացք նետեց Ջուէնի վրայ եւ բանտապետին ինչ որ բաներ ասելով հաղիւ զարձել էր գէպի մուտքը, երբ, ինչպէս եղաւ եւ ո՞վ սկսեց շփոթեմ, բայց արդէն բոլորս մէկ կ'երգէինք.

Մշակ բամուռ, ռէնչալէր ախպէր,  
Ալիիֆ միսմանիֆ, յառաջ գմանիֆ,  
Աշխատանքի, դատի պաշտպան,  
'Իաշնակցութեան քիւ թիկունք տանք...

Մեր այցելուները կայծակնահար եղածի պէս շլմած՝ մի պահ մեզ նայելուց յետոյ ուղղակի փախան:

Մենք, որ կր կարծէինք այդ դէպքը իր վատ անդրադարձը պիտի ունենար, ի մեծ զարմանք բոլորիս, երբ յաջորդ օրը, առաւօտեան, մեր դրան շղթան բացուեց, մէկ էլ միայն երեկոյան վերայ դրին: Այնուհետեւ շղթան միայն երեկոները կը փակուէր: Բացի այդ, անշուշտ Լուկաշինի կարգադրութեամբ, մեզ սկսեցին կանչել «քաղաքացիներ»: Փոխուեց նաեւ գէպի մեզ եղած բանտապահների կոպիտ վերաբերմունքը:

Այս այն Լուկաշինն է, որ հետագային իբր աղայիամուլ, կամ ինչպէս բողջիկներն են սիրում ասել «դաշնակցականամիտ», խանջիւսանի եւ այլոց նման անյայտացրին:

Մեր, բանտի ներքին այդ ազատութիւնը մի տոժամանակ ընդհատուեց, երբ Թիֆլիսում շան սատակ արին ձեմալ փաշա կոչեցեալ հրէշին: Սակայն, բարեբախտաբար, այդ խստութիւնը երկար չտեսց:

Ինչպէս ձկնորձակը ուտելով կը բացուի, այնպէս էլ խօսքը խօսք կը բացի, եւ քանի որ ձեմալի անունը յիշեցի, ուրեմն պատմեմ դրա հետ կապուած մի դէպք:

ԻՇԽԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

(Շար. 1)

**ԼԵՒՈՆ**  
**ԳԱՐՄԷՆ**

Դերբուսմներու նիսար հատոր մը՝ «Վայր-  
կեաններ»,

կրճակ բանաստեղծութեանց ոչ սուսար հա-  
տոր մը՝ «Բարեխնեան Տաճար»,

Միջին Արեւելի մեր գրական քերթերուն  
մէջ գրուած բանաստեղծական եւ ճննդատական  
էջեր,

Օրաքերթերու եւ շարքաքերթերու մէջ  
հրատարակագրական նշմարներ, ու՛ այդքան:

Քայց այդքանը բաւած էր արդէն, որպէսզի  
մեր մտաւորականութիւնը Սփիւռքի գրականու-  
թեան մէջ հաշուի տան: Լեւոն Գարսէն բանաս-  
տեղծն ու մտաւորականը եւ շրջանը համադրող  
գրական ձեռնարկներու մէջ տեղ տայ անոր:

Լուրջ, խռուս. պատրաստուած մտա-  
ւորական մըն էր Լեւոն Գարսէն եւ այդ իսկ  
պատճառով՝ կարծես կը խորշէր զգացական  
զեղումներէն: Նորէն նոյն պատճառով իր էջե-  
րուն մէջ տեղաւորած տպումները կ'ենթարկէր  
մտքի խիստ հակակշռին եւ մտաւորական պար-  
կեշտութեան դէմ կը համարէր ընթացիկ ապ-  
րումներ ճնարկագիտով գրական վարկեր կուտա-  
հելու յիշիկն կերպերը: Ատոր համար քիչ զը-  
րեց, քիչ հրատարակեց, մնաց Քիչերուն մար-  
դը, սակաւաթիւներուն համարումը վայելող  
բանաստեղծը, մտածողը, բարեկամը:

Իր պատրաստութեան, պարկեշտութեան եւ  
խորանայու փորձերով յայտնաբերած իմացական  
ուժերուն համար, մեծ յոյսեր կապուած էին ի-  
րեն, բայց չիրականացան այդ յոյսերը եւ իր  
ունակնկալ մահով՝ բազմաթիւ կարելիութիւններ  
հաղիւն յանձնելու յատկապատկանութիւն մը  
սանձաւորեցաւ գրչակից իր ընկերներուն:

Անկախ իր հետ տարած կարելիութիւննե-  
րուն, Լեւոն Գարսէնի վաստակին մէկ կարեւոր  
տակարը՝ բանաստեղծութիւններ, արժանի էջեր,  
ու վեպ մը՝ «Լերամ Շուքը» սակաւին կը մնան  
իրենց ձեռագիր վիճակին մէջ: Որ նշանակէ, քէ  
մինչեւ ամենց ամբողջական հրատարակութիւնը,  
հնդկական դէմքը պիտի մնայ կէս անձամբ,  
մինչեւ իսկ իր մտերիմներուն համար:

Հետագայ բաժինը սիրելի մը յիշատակին  
ընծայուած յարգանքի պարզ տարբ մը չէ: Ա-  
նիկ կը հանգիստնայ տարաբախտ գրագիտի դէմքը  
աւրուագծող տառին լուրջ փորձը:



ԼԵՒՈՆ ԳԱՐՄԷՆ



## ԼԵՒՈՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ՝ ՄԱՐԴԸ

Արուեսոք տուանց իրականութան, բան մըն այ չէ: Առանց առուեսին, իրականութիւնը մեծ բան մը պիտի չըլտար:

Արուեսոք բմբոսութիւն մըն է աօխարիի դէմ. կը ձգտի փոխել զայն, ուրիշ մեծ մը սոյլ անը: Աօխարից փոխելու համար ստկայն, պէտք է մեկնիլ աօխարին, առնելով զայն այնպէս, ինչպէս որ է: Այ տարողակոմ մեծում, ոչ այ տարողակոմ համակերպում:

Ա. ՔԱՄԻՒԻՒՄ՝ մեծումներէն:

Լեւոն Գարմէն գրադէտը, արուեստագէտը, այս երկուութիւնը կ'ուզի: Լեւոն Ստեփանեան, մարդը, այս երկուութիւնը կ'ուզէր ուժղնութեամբ. ամբողջ էութեամբ:

Իր մէջ, կողք կողքի էին, հաւասար ուժղնութեամբ, մարդը եւ արուեստագէտը, իրապաշտը եւ վիպապաշտը, իրատեսն ու երազատեսը, գարուն պատկանող տղան եւ դարէն վեր բարձրանալու մգտումով այրող բանաստեղծը:

Այս սահմանումները կրնան բառեր թուիլ, միայն բառեր, անոնց, որոնք Լեւոն Ստեփանեանի արտաքին խափն հետ միայն կրցան յարաբերիլ, եւ իր զրահներէն խարուեցան, (որովհետեւ, բոլոր վիպապաշտներուն նման, որոնց մէջ արթուն է նաեւ իրապաշտը, Լեւոնը եւս կը շրջէր սինիզուով զրահուած) ու չկրցան, կամ չուզեցին տեսնել իր ներքին մարդը, եւ զայն արժեւորել իր իրական արժէքով: Ձեռն ըսուիք անոնք սակայն, բառերու կոյտի մը տակ անգամ մը եւս թաղելու համար մարդը, կամ բառերու փայլով արուեստական փայլ մը բերելու համար անոր, որ չկայ, եւ չկայ դեռ ամբողջովին չիրականացած, կիսատ թողած իր լինելութեան արշաւը, կ'ըսուին, որովհետեւ այնպէս էր իրականութիւնը, ու կարելի է վերագտնել զայն՝ մեկնե-

լով իր սուած գրական գործերէն անգամ, ինչքան ալ փոքրութիւ ու դեռ վերտիտ ըլլան անոնք:

Վերացական շէր իր ոչ մէկ ըմբռնումին մէջ, ոչ մէկ տեսակէտին մէջ. կու գար կեանքէն, դժուարին պայմաններէ անգամ, դառն օրեր ճաշակած, ու հակառակ բոլոր դառնութեանց, կամ անոնց իսկ պատճառով թերեւս, բուռն կերպով կը սիրէր կեանքը, իր ամբողջ մերկութեամբ, իր կենդանական բնազդներու եւ մարդկային թռիչքներու խառնուրդի պայթուցիկ ուժականութեամբ: Եթէ հարկ ըլլար անպայման ընտրութիւն մը կատարել մտային աշխարհներու ստեղծագործական ոլորտներուն, եւ կեանքի ստորեայի սովորական, հասարակ անգամ թուացող իրողութեանց միջեւ, պիտի ընտրէր կեանքը: Կեանքը իր գոեհուութիւններով եւ գեղեցիկին տանող իրողութիւններով, թէ՛ մը քաղցր ու շատ մը լեղի յամեցումներով հոգեկան յիշողութեան դադոնարաններէն ներս: Կեանքը, որուն թաւալումը հարցականներու կը տանի մարդը, եւ անպատասխան մնացած հարցականները, ներկայ օրերուն անհեթեթութեան դժայնութիւնը կը բերին մարդուն, աւելի ուժղնութեամբ, քան անցնող դարերուն: Կը գիտակցէր անշուշտ բոլոր անհե-

թեթուութեանց, եւ անհեթեթութիւններու անհեթեթութիւն եզոզ կեանքը փոխելու մարդկային ձգտումներուն, եւ կեանքը եղածին պէս ապրելու մղումներուն: Եւ որովհետեւ պիտակցականը հաւատարմացն ուժեղ էր իր մէջ, Հէմինկուէյի մը նման (զոր շատ կը սիրէր ինք) սեփական փիլիսոփայութիւն մը կը կերտէր, ինքն իրեն համար, ոչ քարոզելի ուրիշներուն, սակայն անհրաժեշտ, սեփական կեանքին կանոններ հայթայթելու համար, եւ կ'ապրէր հաւատարիմ սեփական այդ փիլիսոփայութեան:

Իրեն համար կեղծ օժական մըն էր գոնիիկ բառը. եթէ պէտք ըլլար ապրիլ կեանքը մարդոց շատերուն կոշած դուժկութեամբ, պատրաստ էր ատոր, որովհետեւ գոնիիկ բառը կը համարէր ընկերութեան կեղծիքներէն մին, զործածած իրապէս շատ գոնիիկ ձեւով, եւ ընդհանրապէս շատ անտեղի, ծածկելու համար հողեկան աղքատութիւններ, կամ ընկերային անհանդուրժողութիւններ:

Տեսած էր շատ մը անշոշափելի գեղեցկութիւններու գոնիկացումը՝ եւ իր մտային հարուստ պաշարին մէջէն կըրնար իսկոյն թուել անոնցմէ մէկ երկուքը, աւելին. եւ այդ իսկ պատճառով կը խորհէր կեղծիքին մասնակից ըլլալէ: Կրնար լուել, հիւրասրահի մը մէջ, Սալոնայիմ խօսակցութեան մը ընթացքին. կրնար սրամտութեամբ մը, երկիմաստ նախադասութեամբ մը համամիտ թուիլ մինչեւ անպամ, սակայն իր հուրիւնը երբեք, երբեք մասնակից չէր զբաղաբազմարութիւնն անուան տակ, կամ ճարտարութիւնն անուան տակ թաքնուող կեղծ ձեւապաշտութեան: Բոլոր ձեւերը կրնար յարգել, եւ կրնար ընդունելի ըլլալ ամէնէն գոնաւորապէս, ամէնէն ինքնահասան ու սնուց տարրերուն համար իսկ (պարզ հոգիի տէր մարդիկ, կեղծիքի կարիքը չունեցող մարդիկ արդէն դիւրաւ կ'ընդունեն զինք) սակայն համակերպող մը չէր, ամբողջական համակերպում մը չեղաւ երբեք: Ընդվզող մըն էր, ընդվզող մը մնաց մինչեւ վերջ:

Մածկեց իր ընդվզումները, բոլորի

տեսողութենէն: Ոչ թէ կեղծեց, այլ ծածկեց, Մերժեց ցաւակցութիւնը մարդոց: Յաջողեցաւ քօղարկել իր տառապանքները անպամ: Որովհետեւ իր մէջ կ'ապրէր Վախը, մարդոցմէ եկող ծանրագոյն հարուածներուն վախը: Իր կեանքի վերջին տարիներուն կեանքը շինացեց իրեն այդ հարուածներէն, ու մարդիկ, (միշտ մարդն է միւս մարդուն համար զգոնքը, ինչպէս կ'ըսէ Սարթր) ուղղակի, կամ անուղղակի, իրաւացի կամ անիրաւ տուեալներէ մեկնելով, խոցոտուցին զայն իր մարդկային արժանապատուութեան մէջ ալ: Վախացած էր ատկէ կեանք մը ամբողջ, ու զբահած ինքզինքը ատոր դէմ: Փորձած էր դրահել: Անոր սուր պայտնութիւնը ունի տառապանքին, կրնա՞յ ամբողջովին զբահուել: Պատրանք են բոլոր դրահները: Խոցելի տկար մարդը կը մնայ նոյնը, եւ զբահները երեւութապէս անվթար մնացած ըլլալով, անոնց ետին արդէն իսկ բազմիցս խոցոտուած սիրտ մը կար:

Գրականութիւնը եղաւ փախուստի այն վայրը, ուր կարելի էր փորձել զոռոպ մարդկութեան, ներքին ճնշումները, ներքին հակասութիւնները, վախերը, ձղտումները: Ու իր գրականութիւնը, այդ հակասութեանց, ինքնիր հետ խօսակցութեան արտայայտութիւն մը եղաւ: Գրագէտը իր մէջ, լինելութեան մէջ էր: Փնտռուէր, ներքին փնտռուէր մէջ: 1962 Մարտին զրուած նամակի մը մէջ կը գրէր՝

«... Հեռու իմանէ ամէն տեսակի վիպակառուութիւն, սակայն մթնայնութի մը մէջ եմք այսօր, ուր մեր իմացակառուութիւնը ազամանդէ պաքի մը պէս կը փորձէ նեղել մեր գայութիւնը՝ հասնելու եւ միտելու համար անոր մարտապատմաւոր գայութեանց: Դարձեալ անելի պարզ բացատրութեամբ, կ'ուզեմք գտնել կարծես, մեր սաղմնային վիճակին, ինչու՞ չէ, մաքու մեր մարտապատմութեան վիճակին գայութեան գայութեանը ան աշխարհը, ու հասնիլ համ: Կրնա՞ք անցնիլ այս սահմանը, չեմ գիտեր. սակայն գիտեմ, դէպի համ կ'երթայ մեր միզը եւ

այս ինքն իր մէջ կ'երանգատուի, կը գն-  
դեցկացնէ մեր կեանքը. անշուշտ ոչ քէ  
ուրիշներու համար, այլ մեզ մեզի հա-  
մար:

Այդ փնտառումներն մէջ կը տեղաւոր-  
ւի իր ստեղծագործութիւնը՝ սկզբնաւո-  
րութիւն մը միայն, ափսոս:

Հոն եւս սակայն, իր ստեղծագոր-  
ծական ճիգի ընթացքին եւս, նոյն եր-  
կնտրանքը, նոյն վախերը կը տիրապե-  
տեն, ինչ որ մարդուն մէջ՝ իր կեանքի  
ընթացքին:

Կը գիտակցէր, թէ իր դրած էջերը  
յի էին հակասութիւններով, իսկ ընթեր-  
ցող հասարակութիւնը կը սիրէր միա-  
պաշտ, պաւ կառուցուած, լաւ արամ-  
բանուած գրութիւն մը, պատմուածք  
մը, վէպ մը: Ինք չէր կրնար աստիկա  
տալ, պիտի տար ինքզինքը, իր ներքին  
մղումները: Անոնք սակայն հակասու-  
թեանց ամբողջութիւն մըն էին: Ինք  
կրնար տալ իր վայրկեաններու հունձը,  
որ կը կատարէր իր մէջ գտնուող այլա-  
զան դաշտերէն:

Կը մտածէր, թէ շրջապատը կը պա-  
հանջէ «Փորմիւլ» դարձած բաներ, «էլի-  
շեներ», ընդունելու համար զբազանու-  
թեամբ զբաղող որպէս զբազէտ, յար-  
գելի գրողէն: Բոլոր ֆորմիւլները, ըստ  
իրեն, կ'առանջորդէին թմբկաբաշտի ազ-  
դեցութեան տակ առաջացող քունի մը,  
որ զբազէտի կոշիւնի հետ խոտոր կը  
համեմատէր:

Կը զգար նաեւ, թէ սուրիշ վտանգ մը  
կը սպառնար (եւ դժբախտաբար կը դե-  
րէր ուրիշներ, տասնեակներ, ամբողջ-  
լով զանոնք ընդմիջտ) զբազէտներուն,  
եւ նոյնքան վտանգաւոր, ինչքան ընկե-  
րութեան «էլիշեներ»ու պահանջը, հա-  
մակերպումի պահանջը. այդ ալ մտաւո-  
րակապութեան կեանքէն կտրուելու, եւ  
կիթրային աշխարհներու մէջ սաւառնե-  
լու ձգտումին վտանգն էր, որ կ'արժե-  
զրկէր մտաւորակապութիւնը, զայն փո-  
խադրելով անիրական պայմաններու մէջ,  
եւ բաւը անգամ կը դարձնէր երբեմն  
մերժելի: Ըսել կ'ուզէնք մտաւորական  
բառը:

Արդէն իսկ դարը հակամտաւորական  
դար էր, իր կառուցում: Է նաեւ այսօր:  
Դարը կաղապարումի դար դարձած է,  
ալ կամ ձախ հակող բոլոր վարդապե-  
տութիւններու բերած քարացած կաղա-  
պարումը: Ինքնուրոյնութիւնը կասկե-  
ծելի կը համարուի յաճախ: Այդ պայ-  
մաններու մէջ արդէն իսկ դժուարին  
կացութեան մէջ է ԻՐԱԿ մտաւորականը  
(ոչ թէ դրքունակ ծանօթութիւններու  
պատրաստութեամբ չակերտաւոր մտա-  
ւորականը) ան որ «Ատեղծագործական  
իմաստով մտաւորական է, եւ կը գալար-  
ւի, կը խոցոտուի դարուն հակամտա-  
ւոր, եւ գիտակցորէն յանախ, կը խեղդէ  
իր մտածումին ինքնուրոյն ճիշդը»  
(«Բարեկրօնի տոմար», էջ՝ 94-95): Այդ  
պայմաններուն մէջ նպաստել բոլոր ա-  
նոնց, որոնք խաչակրութեան ելած են  
ստեղծագործական ինքնուրոյն ճիշդուն  
դէմ, վարկարեկելով մտաւորականու-  
թիւնը, թողթի մտաւորակապութիւն մը  
գառնալով, կը գտնէր աններելի յան-  
ցանք, քչիկ մը իսկ լրջօրէն մտածող  
մարդուն համար:

Ըսել չէր ուզեր սակայն, եւ երբեք  
մտածած չէ, թէ զբազէտը, մտաւորա-  
կանը պէտք է ունենան իրենց յատուկ,  
աշխարհէն ԿՏԻՈՒԱՄ ՍԵՓԱԿԱՆ ԱՄ-  
ՈՒՄՆԷՆ, եւ ըստ այնմ ստեղծագործեն,  
կամ պարզապէս գործեն, եւ աշխարհին  
բերեն իրենց ինքնուրոյն մտածումներն  
ու տեսլականը: Ընդհակառակն, տեւա-  
բար պահանջող էր, որ տեսութիւնները  
բիւրի կեանքէն, ժամանակը ըմբռնելու  
հասկացողութեամբ պէտք է դասելըն-  
դրելինք՝ կը գրէր 1963-ին: Կեանքէն  
չեկող ամէն պահանջ ամուլ է, ըսած է  
ու պնդած յաճախ, անձնական խօսակ-  
ցութեանց ընթացքին, կամ ժողովնե-  
րու մէջ:

Շատեր, օգտակար դործ մը կատա-  
րելու ձգտումով անշուշտ, ուժ կու տան  
իրենց մտածումներու աշխարհէն ծնած  
ծրագիրներու, որոնց իրականացման  
հետապնդումը գիրենք կ'առաջնորդէ  
բազմաթիւ դժուարութիւններէն զատ,  
նաեւ բախումներու, իրենց հետ զաղա-

փարակից եղողներուն հետ անգամ: Մըտայացիքի մը հրեւութական շատ օգտակար ըլլալը չի բաւեր իրապէս օգտակար ըլլալու համար եւ գործադրելի դառնալու համար. պէտ անհրաժեշտ է, որ այդ մտայացիքը ծնունդ տուած ըլլայ կեանքի իրական պահանջի մը գոհացում տալու համար, կեանքի իրական տուեալներու վրայ հիմնաւորուած: Այս էր իբր գործնական զեկաւարտութեան վարձապետութիւնը, եւ կը նաւասար թէ մտաւորականներէն անոնք միայն իրենց ազգին, եւ նաեւ անշուշտ մարդկութեան ծառայութիւն մը կը մատուցանեն, որոնք իրենց սոքերը ամբօրէն խարսխած են այս երկրին վրայ:

Հօր կողմէ սասունցի, Մովսէս Ստեփանեանի զաւակը, լեռնակների մը ուժեղ տոանձնութիւնը կ'ապրէր, երբ հարցը իր հոգեկան աշխարհին ու ազրումներուն կը վերաբերէր: Հայ մարդ, կեանքի մարդ, չէր կրնար խուսափիլ հանրային պարտականութիւններէ շտղովորդին ծառայելու պարտադրանքէն: Ասպարէզի լայն տարածքին վրայ, ազգային - եկեղեցական գործունէութեան դաշտէն աւելի, իր խառնուածքին ու հոգեկան պահանջներուն համապատասխան վայրը կը գտնէր քաղաքական, կազմակերպական, կուսակցական գործադաշտը:

Դաշնակցական էր:

Լեւոն Ստեփանեան Դաշնակցական էր ոչ միայն կուսակցութեան մը պատկանելութեամբ, այլ նաեւ հոգեկան կառուցող, զգացական մղումներով, մըտածումի պայծառ համոզումով ու հաւատքով:

Հայրենասէր էր հայ մարդու հայրենասիրութեամբ, զաշնակցականի յատուկ հայրենասիրութեամբ՝ ամբողջական, խարսխուած հայրենի թէ՛ հողին, թէ՛ ոգեղէնին վրայ, թէ՛ անցեակին, եւ թէ՛ աւորեայ, անմիջական ներկային վրայ, ինչպէս նաեւ զալիք լուսաւոր ապագային վրայ: Հայրենասիրութիւն, որ լսեալութեան վրայ խարսխուած չէ, ատելութեամբ սերմանուած չէ. որ սէր է, պաշ-

տամունք միայն ժողովուրդի յաւիտեանական ձգտումներուն, ներքին էութեան, անբիծ դիմադրին. որուն արմատները հողին մէջ են, հայ ժողովուրդի հոգիին մէջ են. ամէնօրեայ ապրում, միս ու սուկոր եղող հայրենասիրութիւն:

1903 Յունուար 18-ին, կը գրէր, ներսէն եկող ընդվզումի ճիշով մը, և... Կապուտիկեանի ի պատիւ կազմակերպուած փառահեղ ընդունելութեան մանրամասնութիւններուն տեղեկացայ «Զարթօն»ի կ'ընդուն, եւ դիտե՛ս ինչ դպացի՛ մեծ ամօթ մը եւ տառապանք մը՝ խորունկ եւ անպատեխի տառապանք մը՝ ի տես մեր աւուր հացի կարօտ՝ թանձրացեալ շտեմութեան... Այս մտածումն ու զգայնութիւնը վստահաբար պիտի փոխարինուէր հպարտութեան եւ գիտակից Հրճուանքի, եւ շատ այլ բաներու, եթէ մեծարանքը, որ ցուցաբերեցաւ Կապուտիկեանի հանդէպ, բիւէր անոր բանաստեղծութեանց արժէքին զնահատանքէն եւ ըմբռնողութենէն. մինչդեռ, եւ վստահ եմ այս մէկին, ցուցաբերուած մեծարանքը, որ կու գար բազմութեան մը եւ մարդոց կողմէ, որոնք տող մը իսկ չեն կարդացած անկէ, կամ բովանդակ հայ քերթողութենէն:

«Վասն հայրենասիրութեան, կ'ըմբռնեմ, պիտի բռնեմ, այդ մեծարանքն ու ցուցամոլութեան արտայայտութիւնները. սակայն, ըսէ՛, ինչպէ՞ս մէկը, երկրի սկրլը, որ նման է ծօր մը կամ զուկի մը հանդէպ տածած սիրոյն, որ մտացածին սէր մը չէ եւ չի կրնար ըլլալ - վերածէ ցուցամոլութեան, վասն հայրենեաց, կամ հայրենասիրութեան պատճառաբանութեամբը: Աւելի լաւ է փակեմ այս էջը, կրնամ սխալ հասկըցելի...»

«Ուսթանասեանի բաց նամակը իրապէս որ ոչ միայն աղուոր էր, այլ սըրտաբուխ: Մենք կը ճերձենանք, սակայն կ'ըսենք նաեւ մեր խօսքը... Յաթանասեանինը այդ խօսքը կ'ըսէր... Յետոյ, սիրելի Բարպէն, անոնք են որ 40 տարի մերջ, տատամսիւով, կէս բերան խօսքե-

րով, սկսան զալ ժեր դծին. աւելի ճիշդ է ըսել, սկսան զալ կեանքի, բնակութեան, մարդկայնութեան եւ ասոնց համարութիւնը հղող Հայութեան գծին...»:

Կը յիշեմ, 1947-ին, երբ դեռ նոր մեկնած էինք ընտանեօք Պէյրութէն Պաղտատ: Քաղաքի փողոցներէն Լեւոնի ճեւո քալած ատեն, հանդիպեցանք երիտասարդի մը, որ մանկութեան խաղընկեր եղած էր ինձի, ու ծանօթ էր Լեւոնին նաեւ, որպէս բարեկամ: Աւաջարկեց երթալ իր գրասենեակը, (անձնական գործ ունէր), եւ սուրճ մը առնել միասին: Փացինք: Ներգաղթի տարին էր, Պաղտատէն եւս ներգաղթ կատարելու համար կազմակերպուած աշխատանք կը տարուէր այդ օրերուն, եւ ժողովուրդի խօսակցութեան նիւթը այդ էր: Երիտասարդ Ա. Թ. ի գրասենեակին մէջ, սուրճին ճետ, մենք լսեցինք հետեւեալ ելոյթը՝

«Լեւոն, դուն ալ պէտք է Հայաստան երթաս. բանաստեղծ ու գրադէս մարդ ես, ըստ տեղի Հայրենիքն է, Հայաստանն է: Հոն շատ պիտի գնահատուիս, ու շատ պիտի արժէքաւորուիս: Հայրենիքին ալ օգտակար պիտի ըլլաս. Հայրենիքը, Հայրենիքը...»

Ես ու Լեւոն Ստեփանեան, լուռ իրարու նայեցանք: Աւարտեցինք սուրճը ու դուրս ելանք: Հակառակ խառնուածքներու տարբերութեան, որ բնական պիտի դարձնէր իմ պոռթկումս, բոլորէն առաջ, Լեւոնն էր որ պոռթկաց, հայհուակութեամբ աշխարհին.

«Հէյ... անիծած աշխարհ... մարդիկ, որոնք Հայրենիք բառին իմաստը չեն գիտեր, իրենց բերանն իսկ չէին առներ զայն երէկ. մարդիկ, որոնք ոչ Ռուբէնի անունը ըսած են, ոչ Արամ Մանուկեանի. մարդիկ, որոնք Անտոքա օտարին տեղը չեն դիտեր, հաւանաբար Արազածին ինչ ըլլալն ալ չեն գիտեր, աջ սօք ելած են մեզի, մեզի՛ Հայրենասիրութեան դաս տալու... Եւ կը կարծես թէ այդ խօսքերը ըսողը ինքը կ'երթայ Հայաստան... Չհաւատա՛ս. ասոնք բոլորը լուսկի Հայրենասէրներ են. Հայ-

րենասիրութիւնը ծախու ապրանք է իրենց համար, այս օրերուն: Սրիկայ, աշխարհ...»

Լեւոն Ստեփանեան ինկաւ, կայծակնահար: Հայրենասիրական ճառ խօսող Ա. Թ. ն կ'ապրի, վստահ եմ այս տողերը պիտի չկարդայ, որովհետեւ հաւանական է որ ո'չ մէկ Հայ թերթ կը տառնայ, ոչ մէկ Հայ վրական ամսագրի բաժանորդ է ան, ոչ մէկ տող կարդացած է վարուստնէն, Սիամանթոյն, Թէքէեանէն, Չարենցէն, Պարոյր Սեւակէն, Համօ Մահաւանէն, Մ. Իշխանէն, Ե. Պոյաճեանէն: Ձէ կարդացած նաեւ, հաւանաբար, Լեւոն Գարմէնէն բան մը, չի գիտեր թէ Լ. Գարմէն կը դրէր՝ «Հայաստան» վերնագրով իր բանաստեղծութեան մէջ՝

Զարեցի փերթութեան մէջ անհուն,  
Մերք քրվեժ մըն եւ դուռ վայրառու...  
Մերք ազգիկ կապտաչուի ու փխրում...  
Մերք խոցում մարմնէր երանու:  
Զարեցի երգերում մէջ խոնու,  
Թէժ, ամմար կրակն եւ դարերում:  
.....  
.....  
.....

Փիրթոցներ դեռ բազում, կապեցինձ  
կրգի խալովն իրենց, քու ճարտուով,  
Հարստեաց ջանքը վառեցինձ՝  
Տրոփող մեծ արտիկ բոցերով: —  
Հայաստան՝ տարտուր առաջինձ՝  
Մեր արեան հրարոր տնջամբին:

Երկար տարիներ կը նեղէր զիս Պաղտատի «ժիրա» բառը՝ — իրաւ գրագէտ, իրաւ բանաստեղծ... իրաւ մարդ... մինչեւ որ կեանքը սորվեցուց, թէ անցնող յիսնամեակի ընթացքին, մասնաւոր արժեզրկման ենթարկուած են, եւ այլ չես իմաստ չունին՝ առանց յատուկ ընդգծումի, կամ յաւելեալ մակդիրի մը: Բանաստեղծ, կամ գրագէտ, կամ Հայ, Հայրենասէր, մարդ, մա՛րդ բառը անգամ... գործածուած են այնքան յաճախ ոչ բանաստեղծ, ոչ գրագէտ, կի-

աստ հայ, կեղծ հայրենասէր եւ սմար-  
դի մարդոց համար, որ այլեւս անհրա-  
ժեշտութիւն դարձած է ընդդէմ՝ իրաւ-  
բանաստեղծ, իրաւ հայրենասէր, իրաւ  
մարդ: Յեղային, ազգային, հանրային  
բարոյականի ըմբռնումները, նիւթաղաչ-  
տական պատեհապաշտութեան մը ճըն-  
շումին տակ, այնքան դունաթափուած  
են, այնքան մաշած ու առաձգական  
դարձած, որ վաղը ԻՐԱՆ բառն ալ ան-  
բաւարար պիտի ըլլայ քնորոշելու հա-  
մար իրաւ մարդ մը. որովհետեւ ան եւս  
պիտի գործածուի շարաշահներուն կող-  
մէ, որակելու համար իրաւ մարդ, մար-  
դիկ, որոնք դիմակով միայն մարդ են,  
եւ իրաւ հայրենասէր կոչելու համար  
մարդիկ, որոնց համար հայրենասիրու-  
թիւնը հազուա է միայն:

Քանի դեռ ամբողջովին չեն աղա-  
ւաղուած բաւերու իմաստները, եւ դեռ  
կարելի է ԻՐԱՆ բառը ըմբռնել որպէս  
այդ, ըսենք թէ Լեւոն Ստեփանեան իրաւ  
մարդ էր, իրաւ հայ, իրաւ հայրենա-  
սէր, եւ որ չեղաւ, չկրցաւ ըլլալ երջա-  
նիկ, մնաց միշտ ապերջանիկ:

Կ. Չարեան, իր «Լեւոնը» եւ իր  
ճամբան» վէպի յառաջաբանին մէջ տեղ  
մը, դեռ 1926-ին կը քնորոշէ հայր, ներ-  
կայի անձկութեան մէջ ապրող, իր մը-  
տածումներուն արձագանքը փնտոող,  
տառապող էակ՝

«Ամէն մի խորհող հայ՝ մրրկահար  
ույս դարու ալիքների կատարին՝ նմա-  
նում է յուսահատ ուղիօկայանին, որ  
անյայտ տարածութիւններին պատգամ-  
ներ է դրկում, բայց ոչ մի պատասխան  
չի ստանում:»

Լեւոն ուժգնութեամբ կ'ապրէր  
մրրկահար այս դարու ալիքներու կա-

տարէն ճշացող հայ մարդու կեանքը,  
որուն ձայնը անձկութիւն է, երբեմն  
ոռնոց է, խաւարը պատուել փորձող ճիչ,  
օգնութեան կանչ:

Իր «Յայրերուն արձագանքը», եթէ  
յմխախտուեցաւ հովերու մեծ ու տխ-  
րեական համերգին, ուր կան ձայներն  
ու շշուկները հողին, ասողերուն եւ ան-  
ղենականին, բայց բարձրացան կեանքի  
սայրակներուն վրայէն, ու տատանելով  
Հասան մինչեւ քաղող մարդուն լսողու-  
թեան պատուհաններուն:»

Կեանքը... Իր կեանքը. ընդհատ-  
ւած յանկարծ, դեռ իր ներքին լքումին  
չհասած... Ինչ փոյթ:

«Օրերը կ'անցնին, — ինչպէս կը գրէ  
ինք, իր Բարեկտնեան Տոմարի վերջին  
էջին վրայ, — կ'անցնին եւ մեր մեծ ու  
պզտիկ բոլոր երազները... Ճակատագրի  
ճամբաները արեւոտ կամ մութ կը յան-  
պին միակ հանդրուանի մը, անձանթին,  
կեանքէն ու օրերէն վեր՝ առեղծուածը  
անդենականին, — ափ մը հող, որմէ  
բարձրացող շշուկը կ'երթայ միախառ-  
նուել հովերու մեծ համերգին, որուն  
կշռոյթով կը հաղորդուին ապրողները  
եւ այսպէս անսկիզբ ու անվախճան»:

Մեր շորս դին դարձող շշուկներուն  
մէջ, ապրողներու եւ մեկնածներու յա-  
ւիտենական միախառնումին մէջ, շշուկ  
մըն ալ ինք, Լեւոնը, զոր անյայտ տա-  
րածութիւններուն պատգամներ զրկեց»  
եւ անձկութեամբ սպասեց պատասխանի:

Իսկ պատգամները կը մեկնին մար-  
դէն, անվերադարձ, անպատասխան: Պա-  
տասխան չկայ: Յաւիտենական ընթացք  
մը միայն: Շշուկներու տիեզերական,  
մշտնջենական համանուագ մը միայն:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

## Վ Ա Ց Ր Կ Ե Ա Ն Ի Մ Ը Հ Ա Մ Ա Ր Գ Ե Թ

Յաներժանալ վայրկեանի թեւաթախման մէջ լռին,  
 Ու շտեմնել պարը խենթ առօրեային լորճաշուրթ.  
 Նայն իսկ շռտնալ գոյաթեանդ ծանրութիւնը իրական  
 Դառնալ ովկիան մը անհուն իր խորութեան անգիտակ :

Միաձուլուիլ հովերու արշաւանքին հետ վայրի,  
 Տանիլ հոգին աստղերուն, ամիւտ մետել անդունդին,  
 Ըլլալ երգի մ'անձանօք հնչիւնները քաղցրալուր՝  
 Արձագանգուիլ ամբխիւն սրտերուն մէջ կիզամուտ :

Քայրկեանի մը համար գէթ համայնանալ, տարածուիլ,  
 Ըլլալ վարար գետ մ'անասնձ՝ իր հուներէն յարգաբուխ,  
 Ու խնդութեամբ սոռգել՝ տափաստաններն լայնածիր :

Ի՞նչ փոյթ թէ պահ մ'վերջ կրկին քու ցեխակերտ գոյաթեամբդ՝  
 Յաներժութեան բարձունքէն պիտի իյնաս ժայթերունձ՝  
 Ու պիտ' ապրիս կեանքը սին՝ ունայնութեամբը կեանքիդ :

## Հ Ա Ր Ց Ա Պ Ն Դ ՈՒ Մ

Հոգի՛ս, հոգի՛ս, որ գեհեմի բոցերուն  
 Կը տանիս զիս արշաւովդ այս ամեկուն,  
 Դուն անողոք բռնակայք իմ եսիս,  
 Ըսէ, ըսէ, ո՛ր կը տանիս այսպէս զիս :

Ո՞ր անձանօք առեղծուածի գորշ գրկին,  
 Կամ ձիւնապատ ո՞ր բարձունքի վերելքին  
 Կը սուրաս զուն ուղեկորոյս, գերաբաժ,  
 Քու տեսիլիդ աւիճովը կուրացած :

Հոգի՛ս, հոգի՛ս, ըսէ ինձի յանուն ինչո՞ւ  
 Մրրկաշունչ խռովքդ այս ահարկու,  
 Ըսէ, ինչո՞ւ, ինչո՞ւ չապրիլ կեանքը պզտիկ  
 Բոլորին հետ, բոլորին պէս երջանիկ :

Լ Ե Ւ Ո Ն Գ Ա Ր Մ Է Ն

### ԼԵՒՈՆ ԳԱՐՄԵՆ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Համաշխարհային երկրորդ պատերազմէն անմիջապէս ետք, 1947-ին, Միջազգեացի երկնակամարին տակ տրոփող իր «Վալյրկեաններ»ով, Լեւոն Գարմէն բանաստեղծը եթէ չէր բերեր յայանութիւն մը, զէթ կը ճշգէտ իմֆոլքիւն մը սակայն աստանդական մեր զերթողութեան մէջ:

Տասնամեակ մը առաջ, նորէն Մերձաւոր Արեւելքէն ճամբայ ելած զբոսորդներու աւազ ներկայացուցիչներուն յուսահատ մաքսուումը, կեանքի մութիւն առթած տառապանքը, անստույգ ապահանձ ճիշդ է որ հոս ալ կը կազմեն անզաւարկան կուրծքին խորքն ու հէնքը, բայց արուեստի ըմբռնումը տարբերութիւն մը կը կրէ, եւրոպական արդի տարրեր և զգայութիւններ կ'ընդունի իր մէջ, բանաստեղծին դիրքորոշումը կը փոխուի զգայաբար, քնարը կ'արտաբերէ նոր թրթիռներ ու հնչիւններ: Քերթողական արուեստը չի հասնիր նախորդներու բիւրեղացման, լեզուի ճոխութեան, տեղ-տեղ կը տառապի նոյնիսկ փոքր մեղքերէ, տհասութենէ ու տարտամութենէ: Բայց՝ էութեամբ կ'անջատուի ժուժկալ եւ անսեթեւեթ ոճի ինքնուրոյն փնտռուումով. մնալով հանդերձ քնարական՝ զոսպականէն կը հակի դէպի իմացական սպրում եւ արտայայտութիւն, խոհական տարրերով կը դիմէի, աւելի քան միւսները՝ կը հոգիխոնարէ իր ժամանակին, իր դարու ոգիին ու կեանքին:

Այս բոլորը՝ առանց յաւանութեան սակայն, այլ հարազատ տրոփումը արիւնին, անկեղծութեան կնիքովը՝ հոգիին, ժուժկալ արամբանութեամբը մտքին: Սփիւռքի բանաստեղծն է որ կը

կանգնի դառն ճակատագրին դէմ յիման, հայրենիքէն հեռու, անոր կարօտով տուրբուն, օրերու անսաղութենէն հալածական, ինքն իր ճամբան ու կեանքին իմաստը որոնող: Ու կը կարչի վայրկեաններու իրականութեան, կ'ապաւինի անոնց կարճատեւ սփոփանքին:

Հայրենիք, սէր, կեանք՝ միջովայրի դունաւորումով եւ տարբեր (կանաչ երիտասարդութիւն) զամոցէն անցնելով, փոխիփոխ կը լեցնեն վայրկեաններու բաժակները, զորս կ'ըմպէ բանաստեղծը անյազուրդ, ու ցմբուր: Քիչ անգամ իրականութեան լոյսը (ձմեռուան արեւ) կը պայծառացնէ դէմքը, այլ յաճախ կ'իյնայ, կը փչրի դառնախում այդ բաժակը բարկութեան սալալատակին:

Հայրենիքը չէ տեսած, բայց երզած է զայն մայրը օրօրոցին մօտ, արձազանգած՝ հօրը բռնեբուն մէջ: Ու հարց կու տայ, ինչպէս ամէն հայ վտարանդի, թէ օր մը պիտի հասնի՞ անոր հանդուանին տեղիծուած, ապա կը հաւատայ որ ան՝ հայրենիքը պիտի բացուի օր մը մեր բոքը երազին առջեւ: Ու սիրտը կը մնայ յորդազեղ անոր կարօտով:

Կեանքը լեցուն է յուսահատութեան հասցնող դառնութեամբ, մարդիկ՝ անհեւք, որոտացող թնդածոթները կը խաչեն ամէն հաւատք ու կը փչրեն ապագայի ամէն երազ: Բայց կայ բան մը, նոյն այդ կեանքի մէջ, որ յաւերժութեամ կը տամի վայրկեանները կարճատեւ: Այդ մէկը Սէրն է, կնոջ սէրը, որուն շուքը կը դողայ միւս բանաստեղծի հոգիին խոտով ջուրերուն մէջ: Ու մերկ սրտով քնարահարի լրիւ խոստովանանք կատարելով Լեւոն Գարմէն կը վկայէ արուի իր սէրերու մասին՝



«Որ հրաքորք կը քոնկիմ արշալոյսէ  
արշալոյս  
Որ արմաքամ կը նաւադիմ վերջալոյսիմ  
մէջ ծածուկ» :

Կ'ափոտոսայ առաւելարար ինքն իր  
Հաշուոյն, որ ճիւղէ-ճիւղ ոստոտումով  
կը քանդէ անվերջ երջանկութեան զղեակ-  
ները, ուր Հոգին կրնար գտնել խաղաղ  
ապաւէն :

Կրնա՞ր գտնել այդ ապաւէնը սա-  
կային : Զէ՞ որ այդ Հոգին դերուած է  
նաեւ երկնասլաց կատարներու շքեղան-  
քէն, դադափարական ճախրանքներու  
վերթեւումէն : Կ'ուզէ շատերուն հետ,  
շատերուն պէս երջանիկ ապրել կեանքը  
պղտիկ (Քէլարցանդուս), բայց դերար-  
բումովը տեսիլքին՝ յոյգերն ու տագ-  
նապները կը հեռացնեն զինք խաղաղ  
կզդիի գեղածիծաղ ափունքէն : Կը տեն-  
լայ Հպարտ մենակեաց մ'ըլլալ, բար-  
ձունքէն դիտել թաւարդ կեանքը, բայց  
ամբոխը եւ անոր եռացող առօրեան կը  
հրաւիրեն զինք դոյապալքարի կրկէս  
(«Տառապանք») : Ու սրամտրո՞ք կ'ա-  
ղաղակէ մերթ անտոյգ իր երթը :-

«Անհանգրուամ ծովերու եզ քոնկիմ  
յանձնուած  
Սիրտս, սիրտս կը ծիայ տաշնդի մը  
հանգունակ» :

Բայց մերթ ալ կը յաղթահարէ ինք-  
զինք ու կ'ելլէ կեանքի համար անհաւանջ  
ու վճռական պայքարի :-

«Պէտք է, պէտք է քարճրանալ ու  
կրկեսիմ մէջ կեանքիմ  
վայրկեաններում հետ քոչող՝ ապրիլ  
հեւքը դարբում,  
Քամ թէ այսպէս ինքնամոփոփ յանձնուիլ  
գորշ մշուշիմ  
Զերդ տերեւ մը՝ անձնատուր  
նախատագրի հովերուն» :

Ու որքան ալ, շատ վաղ տարիքէն,  
մահուան սրափուրը զգայ տխուր վայր-  
կեանքներուն՝ արեւածաղկերու Հրաշա-  
փառ յարութիւնը չ'ուշանար դօտեպնդել  
զինք եւ յաղթազոռ ու թեւաւոր պատ-  
կերներ քանդակել տալու իր գրչին :-

«Թագէ՛ք... քացէ՛ք  
Դարպասները ամրափակ  
Փապուղիէն մթուքեան  
Դուրս կը նետուի  
վայրաշարժը արեգին...»

\*\*\*

Կ'անցնին քսանի չափ տարիներ  
«Վայրկեաններ»ու Հրատարակումէն : Լ.  
Գարմէն, սակաւախօս մարտիկի մը պէս,  
պատնէչի վրայ է միշտ, զաղափարական  
աշխատանքի առաջին դիժերու վրայ,  
ոնկերային պարտականութեանց դուրսը,  
գրչին ու գրքերէ անբաժան սակայն :  
Սփիւռքի գրագէտին «Ոճ»ին մէջն է : Կեն-  
սաչառութիւն՝ այլ ասպարէզէ ձեռք կը  
բերէ, իսկ ազատ ժամեր կը բաժնէ իր  
ժողովուրդին անմիջական կարիքներու  
նուիրաբերման եւ արուեստի աստուծու  
երկրպագումին : Կը կարդայ մանաւանդ,  
օտար գրականութեանց ընթերցումով  
կ'աւելցնէ, կը կուտակէ մտազայաբը,  
կը ջնարակէ զգայարանները անըդհատ :

Համեմատաբար՝ կը գրէ քիչ սա-  
կայն : Մոլութիւն մը չէ գրելը իրեն հա-  
մար այլ պահանջի մը դրսեւորումը :  
Սնափառութիւններ չի հետապնդեր, այլ  
իր մտքին ու սրտին կեանքի հետ ունե-  
ցած բախումներէն ցայտած կայծերը կը  
հաւաքէ, կեանքի խաւարը պատուելու  
ի խնդիր : Կու տայ ճիւղերուն հետ ճամ-  
բը (արձակ), կը խորհրդածէ գրական  
հարցերու շուրջ (ամսագրերու եւ շաբա-  
թաթերթերու մէջ), կը թաթխէ գրչի  
մերթ քաղաքական ու դադափարական  
հարցերու մեղանին : Այսուհանդերձ չի  
մտնար բնաւ ճերթողութեան գեղեցիկ  
մուսները, չի դաւաճաներ անոնց տը-  
ւած երգումին : Քսան տարիներու ըն-  
թացքին կը գրէ նաեւ քսանէ աւելի ճեր-  
թուածներ (\*) , «Վայրկեաններ»ու վտիտ  
հատորին չափով նոր հատոր մը կազմե-  
լու բաւարար :

\*) Այլ էրբուածները լոյս տեսած են ա-  
ւարկարար Էլիպոսի եւ «Թագիճի» մէջ :

Նիւթները ետ յեն են միշտ, ներշնչումները կու գան միեւնոյն ազրիւրներէն, միայն թէ աիեղեբքի խորութիւններուն աւելի սեւեռուն է նայուածքը հիմա: Ու առաւելաբար տիեղեբքի շունչը հովն է կարծես, շարժում ու խորհուրդ ստեղծող ոգին, որուն անցքը առիթ կու տայ մէկէ աւելի բարախուն քերթուածներու եւ կ'ընդլայնէ՝ նոր իմացումով, կը լեցընէ նոր կորովով բանաստեղծին միտքն ու հոգին —

..... հովն է միայն  
Որ առածին գիշերին մէջ կրնայ յազալ  
Ինքն իր լոյսով նամբամ բացած...  
Երգը հովին  
Աննգրակամ ճամբաներէն արձագանգող  
Երգը անհաւն տիեղեբքին  
Գում ունկնդրէ  
Միմչել յեցուի լոյսն անհունին  
Քու սեղանակամ արիւնիք մէջ:

Բայց զժգոհ բանաստեղծի խառնը-  
ւածքը, կեանքի բիրտ ու տղեղ իրազրու-  
թեանց մէջ զեղեցկութիւնն ու հաւատքը  
փնտռելէ յոգնած ու յուսահատ՝ արուես-  
տագէտի անոր աչքը յոռետես ու ցնցող  
պատկերներու կը սեւեռէ յաճախ —  
կեանքը հիմա ինչպէս դժնէ ու անդիմակ

պատու մը անց  
Իր գրկին մէջ առած հոգին՝  
գգուանգներով հեշտագրգիւ,  
կը տանի զիս իր մանիսին — իր միսերուն  
ցարտ աւ անհեւք,  
Ականջս ի վար մրմնջելով՝ սիրերգը  
աւուտ հոգիին իր:

Այսուհանդերձ՝ տարիներուն Հետ  
կուսնուած է հոգին: Ու իր զարէն խը-  
նով, տազնապահար՝ գլուխկի անխնայ  
հարուածներով կը փորձէ քանդակել  
մարդկային հոգիին զեղեցկութիւնները  
Հետզհետէ ճզմող, ճմլող անոր կուպրէ  
ոգին՝ արուեստի սեւ մարմարի մը մէջ,  
հեղեանքը ընդելուզուած արիւնող սրտի  
տրտունջին:—

Թող անարգել կուպրագոծուին  
Համբաները — մեր երազին ու մեր սրտին,  
Որպէսզի մեր ստեղծած՝  
Ամենագոր մեքենան,

Հանգստաւէտ ու անարգել,  
Բարձրամայ վեր...  
Թող սպոցուի երգը սրտին —  
Թմրուկներու ու նագիբու  
Աղմուկին մէջ յաղթակամ... .

Սակայն հաւատքը չէ կորսնցուցած  
քերթողը: Երկու հզօր սիւներ վեր կը  
պահեն զինք առօրեայի պղտոր յորձան-  
քէն, ու կը պարզեն աչքերուն դէմ վար-  
դալոյս հորիզոններ:

Մէկը՝ Մէքն է, կնոջմէ եւ մարմնի  
հեշտանքներէ ձերբազատուած իմացա-  
պաշտ ու բիւրեղացած զգացումը, լիու-  
թեան, իմաստութեան հասած մարդու  
վերացնող ապրումը, որ իր արիւնէն սե-  
րած զաւկին, ու նոր սերունդի բուրբ  
մանուկներու աչքին մէջ կը գտնէ պայ-  
ծառ ու մշտահոս սիրոյ ազրիւրը:

Միւսը՝ Հայրենիքն է, անոր զոյու-  
թեան առհաւական զեղեցկութիւնը, որ  
անմահ կը մնայ անոր բանաստեղծներու  
շունչին մէջ, ստեղծագործուող մշակոյ-  
թի կոթողներուն վրայ բարձրադիր:

Յիսունի սեմին՝ զգալապէս լայնցած  
է շունչը բանաստեղծ Լեւոն Գարմէնին,  
արուեստը ձերբազատուած է փոքր մեղ-  
քերէ, գտած է իր կշռոյթը: Գրեթէ ա-  
պահով ենք այլեւս որ ստեղծագործա-  
կան նոր երկունքի մը ուրախութիւնը  
պիտի պատճառէ, երբ ամէն բան մէկ  
կողմ դրած՝ լոկ դրչի մարդ զարձած է  
այլեւս:

Բայց... ուս՛ող, յուսազրութեան  
կարճ պահ մը, վայրկեան մը, պարզե-  
ւելէ ետք՝ կեանքի սեւ սլաքը կանգ կ'առ-  
նէ յանկարծ, անակնկալօրէն կը տապա-  
լէ լիութեան, հասունութեան բերքը զեռ  
չուուած, ըսելիքները վճռականօրէն դեռ  
նոր փոխանցել սկսող Սփիւռքի այս օժ-  
տրեալ ու կազմաւորեալ քնարահարը:

Ինչպէ՛ս շարտասանել հիմա, իր  
կիսաւարտ գործին առջեւ, մեր նախադ  
յանձնած իր դամբանի տույն հարսի  
համբոյրին, սրտամորթոջ սա տղերքը,  
զորս ինք, դեռ շատ երիտասարդ, երգած  
էր ուրիշ Տզու մը ետեւը —

Ե. ԳԵՂԱՐՅ

## ՓՇՐՈՒԱԾ ԵՐԱԶԸ

Տէ՛ր, ինչո՞ւ այսֆան Վազածամ  
 Փշրեցիր երազը բիրեղեայ,  
 Այս եէ՛ք տղուն,  
 Որուն հոգին այսօր թշուառ,  
 Որուն հոգին այսօր տխուր  
 Կ'արտասուէ լուռ :

Երազն անոր,  
 Ճառագայթն էր –  
 Լուսաւորող արահետն իր մութ, ամպամած,  
 Երազն անոր,  
 Առանցքն էր սեփշերուն,  
 Խենթ սէրերուն...

Սակայն այսօր չկայ, չկայ երազն թովիչ,  
 Ու ան կանգնած լուռ, միայնակ,  
 Տառապանքով մը անյատակ,  
 Անյուսօրէն ու տրտօրէն,  
 Կու լա՛յ, կու լա՛յ...

Դեռ երեկ էր,  
 Երազ մը թովիչ, երազ մ'ազուար...  
 Երբ օրերու մշուշապատ սահմանները  
 Անոր համար հեփաթ էին կախարդակա՞ն,  
 Երբ թեւուոր իր երազը կ'օղեպարէր՝  
 Երկնքի մը տակ արեւտ,  
 Անոր հոգին կը երճուէր,  
 Ու կեանքն անոր՝  
 Արքիւր մըն էր լուսածորակ.  
 Օ՛, այն օրերն,  
 Ան երգ մ'ուներ  
 Քաղցրահնչիւն, իր շրթներուն...  
 Սակայն այսօր ան տժգումած,  
 Իր երազի շիրմին առջեւ,  
 Անյուսօրէն ու տրտօրէն,  
 Կու լա՛յ, կու լա՛յ...:

ԼԵՒՈՆ ԳԱՐՄԷՆ

### Լ. ԳԱՐՄԷՆԻ

### ԱՆԿԱՐԵԼԻ ՈՐՈՆՈՒՄԸ

Երբ 1947-ի շուրջերը Լևոն Գարմէնի ձայնը լսելի դարձաւ, Միջին Արեւելեան Միութեան իր բոլոր սերնդակից բանաստեղծները արդէն հրապարակ իջած էին լաց ու կոծով ու սանկ նանկ տեղ մը ապահոված իրենց վտիտ տաղարաններուն համար: Կաղապարուած էր նաեւ այն ոճը ու աշխարհը՝ որ սահմանուած էր իշխելու Արարական երկիրներու մէջ ու նաեւ ջիշ մը ամէն տեղ՝ բացի Փարիզէն: Մինչեւ 1947, մեր կողմերու ըՍ-փիւռքը 40 հատոր տաղարան կը հաշուէ ու 25 անուն կամ ծածկանուն բանաստեղծ (\*): 1933-ին Ա. Անոյշ ու Վ. Վահանան, 1936-ին Մ. Իշխան, 1938-ին Ժ.

Յակոբեան, 1939-ին Ա. Մատուկեան, ու 1945-ին Եղ. Պոյանեան՝ ինքնատիպ ու նոյն ատեն հասարակաց ու շեշտուած քնարեբան, զգացական որակ մը կը յայտնարեին: Բայց անկասկած որ այդ որակը շատ աւելի հոգեբանական պահանջներն էր, ջախջախուած ժողովուրդի մը անանուն զանգուածէն դուրս գտնելու, արուեստի լոյժ ու վաղջ ստալամուրի մը մէջ տեւելու՝ քան քնարեբանական վճիտ, անխորտակ զգայնութեան մը շնորհիւ մարդու խօսքը նետելու ժամանակին ու տարածութեան: Փաստը այն եղաւ որ այս բոլոր մարդիկը, Ժ. Յակոբեանէն զատ՝ թափառեցան արձակի մէջ եւս, մտան պատմուածքի, վէպի, քննադատութեան, հրապարակագրութեան ու թատրոնի մէջ ու կորսնցուցին իրական իրենց յստակ նկարագրերը:

Այս բոլորին մէջ, Գարմէն բացառութիւն չեղաւ: Երեւան եկաւ որպէս քերթող, նախ 1947-ին, 7 տարի ետք մուրհիւն համար արձակի դաշտերուն մէջ: Մոլորիլ՝ հոս իր տկար իմաստով կ'առնենք, նկատելով որ ան միայ խորապէս բանաստեղծ:

Աւ հոս է իր տոամը: Գարմէն իր սերունդին մէջ միակը եղաւ, որուն արուեստը իմացական (կը վարանինք իմաստասիրական բոտր գործածելէ) ակերէ՛լ ալ սնունդ առաւ, բայց չկրցաւ ոչ միաձուլել այդ տարրերը իր ընդլայն զգայնութեան, ոչ ալ յաջողեցաւ իմացական արժէքաւոր սեւեռումներով իր միտքը

\* Տ. Ոսկերիչեան, Մ. Մազմանեան, Ե. Մուրադեան, Յ. Աւետիսեան, Հ. Մուրադ, Հրայր Ոստանի, Ոսկան Օնան, Արմէն Սիւնի, Վ. Տօնայտեան, Լ. Եանայեան, Բ. Բարսիսեան, Օ. Էմիլեան, Գ. Զեֆրեան Եւայլն - ք'ը կորում այս մտայնիկը, ձեզիդի չ.Մ.Չ.Մ.ի գրողարժանացիտ, կայերեմի կատարի ուսուցիչ, պատմական միութեան վարիչ, բնատ լուսանկարիչ, մասլլ գրաշար եւ տակալիմ վարի խաւնբու բարբ ցուեցեղ սիպարմեքը՝ ուրիշ անտէ, իր սկիզբէն ի վեր, մեր գրականութիւնը: Հաւանաբար կեանքի ցաւը այնքան մեծ էր, որ չկրցան վայն պարունակել շիգերու ցանցին մէջ ու ռուսաւորի մէջ ապաստանեցաւ: Բայց այնքան ուժգին էր ցաւի ետամբը, որ չկրցամ չեքթողութեան բարդ հիւսիքի մէջ մեռլ ու կտկեանքի մէջ օտգուեցան, քաշուեցան ու անհետ կորան գացիմ:

պարտադրել մեր ուշադրութեան: Ասկէ տուեցցին թէ՛ քերթողը թէ ալ մտածողը՝:

Բարեղոնեան Տամարի տոսմը, իր ամէնէն հասարակ ձեւին մէջ՝ իտէպլին, բացարձակին, երեւակայութեան հակադրումն է բիրտ բայց խաբուսիկ իրականութեան. ոչ միայն Հայո՛ւ իրականութեան այլ մարդկային ողորմելի, անխուսափելի առօրեային: Անհասարակ, նման կացութեան մը դիմաց, Հայերն կը բռնենք զազնուական փախուստի ճամբան: Ա. Անոյշ, Վ. Վահան, Մ. Իշխան, Ժ. Յակոբեան, Եղ. Պոյաճեան, Ա. Սառուկեան, յիշելու համար միայն ամէնէն քարեօրները, այս փախուստը առաջնութեան վերածեցին ու կարծեցին, կարծեցինք՝ թէ կեանքի իմաստութեան մը հասեր էին, երբ պարզապէս յուշուած, ճաշակաւոր երազանքի մէջ կը ծփային, բարեմտօրէն:

Գարմէն սակայն չի նկատ այս ինքնախաբէութեան մէջ: Բարեղոնեան Տամարի մէջ ան իր անձին է որ կը փորձէ փախիլ, իր բնագոյսին, ընկերային ու նոյնիսկ խոհուն անձին, ու կը ձգտի հասնել ո՛չ թէ պատրանքներու, երազներու թմբած երանութեան՝ այլ իր բուն, իմաստասիրական էութեան, իր մարդկային յատկանիշին: Սփիւռքի առաջին իւմանիզմը, եթէ չհաշուենք Թէ՛ջեօեանը: Գարմէնի իւմանիզմը սակայն կը մնայ մեկնակէտ ու ծրագիր, չի հասնիր իրադրութի: Ու ամբողջ հատորը, իր խորհրդածութիւններով, ինքնավերլուծումներով, մենախօսութիւններով ու խոստովանութիւններով՝ այս վրիպանքին յուզիչ փաստը կը բերէ:

Յուզիչ՝ շատ մը կողմերով: Նախ իբր իմացական ձեռնարկ: Իր զաղափարները, հասարակ տեղիքներէ զատ ուրիշ բան չեն: Իր բոլոր մտածումները կին էակի մասին, արուեստներու հոլովոյթի ու սահմանումի շուրջ, քաղաքակրթու-

թեան, իմացականութեան ու ժամանակի յղացքի մասին, մարդկային ախարհի, արուեստագէտի բնութեան, դարու ոգիի բնորոշման ու այլ երեւոյթներու մասին, շատ անստորջ շահեկանութիւն մը ունին այսօր: Մարդ կը ցուի այդ յուսկնութեան հաշուին, սակայն չի կրնար չհաստատել Գարմէնի անկեղծութիւնը՝ կրկնապէս սրտածմելի՝ մեր Միջին Արեւելքի գրական ճաշակին մէջ ներմուծելու իմացական բովանդակութիւն մը:

Այս ճիգը, սակայն, ամբողջական վրիպանք մը չէ: Տամարը կը բացուի գրբարիչ, յանդուզն ձգտումով մը, ուր ոչինչ կայ որ թելադրէ գալիք էջերու իմացական միամիտ արկածախնդրութիւնը: Գարմէն ճամբայ կ'ելլէ քայքայելու իմացականութեան գերիշխանութիւնը, ընդունուած յղացքները՝ որոնք պաշտպանուած են ընկերային ու բարոյական ճշունքի նպաստով, հասնելու համար իր մէջի մարդկային էութեան ու կորսուած ինքնութեան: Փառաւոր ձեռնարկ. պահ մը մարդ կը տարուի մասածել թէ արդեօք Սփիւռքն ալ, յանձինս Գարմէնի, կը մտնակցէր այն հսկայ ծրագրին (որու լծուեցան Ռէնպօ ու Պոլէռ, ինչպէս եւ Օսքար Ուայլըտ, մինչեւ մեր օրերու Պարրուզ ու մանաւանդ Կինդպուրկ) որ կը ջանայ մերթապատուի բանականութեան բանականութենէն, բանաբերելով գոյախրանքներու բնական կատարքը՝ շէնորհու ու յանուն Արուեստին: Ներքին անձի յաճախանք...: Գաղտնի իմաստութիւններու մահացու գլխապատյար ու նաեւ հմայքը...: Գարմէն նոյնիսկ կը թելադրէ միջոցներէն ոճանք - կին ու սեռականութիւն, գինի, արուեստ, վերացում, երեւակայութիւն: Բայց արդէն հատած է շունչը, կը պակսին տարրական ու հազուադիւրս պէնքերը - գրական բարդ գոյախրանք, իմացական պայծառ, մեծդի ուժ, Արեւմտեան մտաւորականի խառնուածք:

Գարմէն ճամբայ կ'ելլէ, բայց հազիւ քանի մը քայլ առած՝ կը չեղի ու կը մուրբի դիւրին ընդհանրացումներու

\*) Գարմէն, Լ., Բարեղոնեան Տոմար, 107 էջ: Մէլրաբ, հրատ. Արամազ, 1954:

դիր կըլ: Ճամբայ ելլելն իսկ սակայն տաքիտութիւն է, եթէ մտածենք թէ իր սերունդէն քանի քանի բանաստեղծներ չնշահեղձ եզան մածուցիկ կամ արուեստական զգայնութիւններու գիրկընդ-խտանումէն: Գարմէն իմացականութեան դէմ ելած է, բայց մտածումն է իր գործին ամէնէն վերաւոր բաժինը, մինչ հոն ուր պարզ ու համեստ բանաստեղծի շը-շուկը կը հասնի մարդկային ու Ֆիզիքա-կան բնութեան մշուշներուն քսուելով՝ հոն ապրում մը կայ որ վաւերական է: Աւերկին յաջողագոյն շնչտերը կրկին սիրոյ շուրջ կը գտնան կամ ալ, երբ ան կը հակի իր կեանքին վրայ, փնտրելով իր Թուլիեայ էութիւնը, լսելու համար քայքայումի մեղմ բայց յամառ խշրաու-բը, առանց անդրադանալու թէ Պաղ-տասի մը անկիւնը ինկած Հայ ինքնու բանաստեղծ-խմբագիր մը, տէրտէրին ու թաղականին բարոյական ազցանին մէջ բռնուած՝ դիտէն վեր բանի էր որ մեռք կը զարնէր: Այնպէս որ, մտածու-մի, զգայնութեան, սիրային զգացում-ներու ու իրապաշտութեան այս անհա-մողիչ խառնուրդին մէջէն է որ կ'անց-նինք իր Հետ զանկարելի որոնումին» լծուած ու յուսալով, որ բառերու զաղտ-նի շողարձակումին շնորհիւ, բացառիկ առիթը կ'ունենանք թափանցելու կեանքի թաքուն իրականութիւններուն: Բայց կը լքենք ձեռնարկը, որովհետեւ գրողը չի կրնար դիմանալ կեանքի դիւրին, հա-ճելի, երկրորդական երեւոյթներուն քա-չողական ուժին: Վերջ անցին մեր դառ-նութիւններն ու հանապազօրեայ ըժգո-հութիւնները ... էականը բոլորն է Հե-տաւոր երկինքներու» — բայց ա՛յդ՝ ար-դէն բանաստեղծութեան սկիզբն իսկ է:

Այնպէս որ կրնայինք ճամբայ իսկ շնչ-լի: Ի՞նչ շահեցանք:  
 Շահեցանք՝ լալկան, Թարսիսակամ, ահաս, նեղ ճակատով ու խոշոր, խոնաւ ասիերով բանաստեղծներու սողանցքին մէջ՝ խոհուն, լուրջ, զուսպ գրողի մը մտերմութիւնը: Մ'էջ էր գիշ մը այս հանդիպումը, 1964-ին: Փրանսայի մէջ, Սարաֆեան արդէն լրջացեր էր 26 տա-րի առաջ, մինչ մեր կողմերը երկու լուրջ ու խորունկ գրող գինք կը կանխէին — նախ Եղիվարդը, յետոյ Պոյանեանը, մարդիկ՝ որոնք սակայն տարբեր նկա-րագրի իմաստութեան մը լոյսը բերին իրենց երկերով, աւելի ապրուած՝ քան մտածուած:

Գարմէն ուշ եկաւ ու կանուխ գնաց, իր զանկարելի որոնումին համար հա-զիւ 30 տարիներու փորձառութեան պա-շար մը ապահոված: Մեզի կը մնայ մը-տածել որ եթէ ասորէր՝ ես բանաստեղ-ծութեան պիտի գար, որմէ շատ չէր հե-ռացեր ու խոկուն, զգաստ, ջերմ թը-թողական երակ մը պեղէր: Այն ոք ան-փոխարինելի է գրականութեան՝ ինչպէս եւ կեանքի մէջ. ու հաւանական է որ Սփիւռքը, այսինքն Նոր Հայերու Հայ-րենիքի բնակիչները, տարուած անտիպ կիրքերէ ու պահանջներէ՝ շատ ալ համ-բերութիւն չունենար զայլք 26 տարե-ներուն՝ օրագրային գրականութեան մը համար, որուն դիտաւոր առաջնութիւ-նը քնարերգական ջերմութիւնն է: Յէ՛ն-մի՛նսօ՛ժի՛ք նորերը մասնաշէտներ են, առարկայական ու սկեպտիկ: Մանաւանդ անգուժ:

Իսկ անոնցմէ՞ վերջ...:

Վ. ՕՇԱԿԱՆ

## Ի Ղ Զ

Բաց դաշտերուն մէջ՝ հեռուն, մութ անեզր,  
 Թո՛ղ մոխիր դառնամ...  
 Թո՛ղ ըլլամ խարոյկ - ճարճատուող կրակ...  
 Թո՛ղ ըլլամ վառուող անտառ մը անհուն՝  
 Բարձունքներն ի վեր,  
 Ու ճակատագրի հովերը անհագ,  
 Թո՛ղ մտրակեն գիւ անվերջ, անդո՛ւք:

Թո՛ղ դառնամ մոխիր -  
 Մոխիր ցիրուցան...  
 Ու հովերը խենք՝  
 Տանին գիւ հեռո՛ւն ափերն անծանօթ,  
 Ու խառնուիմ ես -  
 Հողին, քարերուն, ջուրին ու ծառին:

Մեծ հրդեհներու մոխիրը վերջին  
 Թո՛ղ դառնամ օ՛վ Տէր,-  
 Համբաներուն մէջ տարածուած անտես,  
 Որպէսզի վազը, երբ գամ մանուկներն՝  
 Սեւաչուի, պայծառ,-  
 Դողողոջ քայլերով՝  
 Անցնելու կեանքի ճամբայէն դժնէ,  
 Թո՛ղ մոխիրներն իմ՝  
 Տան ջերմութիւնը  
 Այն մեծ հրդեհին.  
 Որուն բոցերուն մէջ հրակարմիր,  
 Վատեցան անվերջ,-  
 Մրտերն արիւնտ, իրենց հայրերուն:

Թո՛ղ մոխիրներն իմ,  
 Ներբաններուն տակ անոնց մանկունակ,  
 Ջգան տրոփինն անոնց օրտերուն,  
 Անոնց նօր կեանքին:

ԼԵՒՈՆ ԳԱՐՄԷՆ

**ԱՅՍ ԱՄԱՌ...**

Կեսերը սրբա՞ն տխուր եղաւ այս ամառ ... Եղուարդը... Լեւոնը...

Երկու երեք տարին անգամ մը հոս հուլիսը, տարին երկու երեք անգամ նամակ կը գրէինք իրարու, Պապատա զայցողին նեա քաբու կը գրէինք, Պէյրութ կնոզնեբնն բարեւ կը ստանայինք: Պարբերական նանգամանք մը ունէր մեր յարաբերութիւնը, այսու-հանգիստ, Լեւոն Պարմէնին նեա ունեցան մեր կապը ի միջի այլոց կապ մը չէր, ումեկ էր, քաղցր, բախտուար պահու մը ստորագրան մէկ բախտուար էջիկ պէս բան մըն էր, բարախուն, իրաւ: Ուրախութիւն մը կ'ողողէր սիրազ Պէյրութի հողին երբ ոտք կը դնէր ու մեկնելէն ետք՝ դիտելի թէ տեղ մը բարեկամ մը ունէր, որ նակառակ ժամանակին ու նակառակ տարածութեան, նաւաստրիմ կը մնայ գեղեցիկ կերան աչ ու նայինք:

Կղզուան հողինեբրով իրարու մտանալու եւ կղզուան հողինեբրով իրարմէ բաժնուելու դան գործառութիւններ ապրան մարդերը յա՛ն կը նախնան այս եղբայրութեան գինը: Բացարաւ մարդ էր Լեւոն Պարմէն, բարեկամներուն բերքով ուրախանող գիտէր, սերբէի մը տարան յաղթանակին առջեւ կը մոռնար իր անձը, իր անձը ցայեք նանելու նամար չէր թուաւարեք միջնուրաջը:

Վերջին շրջանին, Պէյրութ նաւաստուելէ ետք, զրեթէ ամէն օր ճիւղիցէն ճիւղ-դակէ կ'իջնէի, պա՛ւ մը միտան ըլլալու նամար: Եղուարդին անողոք հիւանդութեան ա-նողոք լուրը նոր առան էինք եւ՛ զօրերը գեղեցիկ լինն ու սրտակիցները ամէն բան էին Յղոստոսի այդ շաբաշաբ օրերուն: Նոր ստանձնան էր ճիւղակիցի խմբադրակակի պաշա-տը ու մեզի նեա ու մեզի շափ կը տաւաղէր.

- Նաւաստ՝ որ յեմ կրնար աշխատիլ, - կ'ըսէր մեռքերը սեղանին զարեւում, - մելում մը կը գգամ սրտիս: Սարսափելի բան է այս աղուն հիւանդութիւնը:

Երկու անգամ միտան զայցից Եղուարդին այցի: Կը խօսէինք ընդհանրապէս գրա-կանութեան մասին, գեղեցիկ նոսանկարներու մասին, այն բոլոր բաներուն մասին, որոնք կրթային Եղուարդին միտքը ազատադրել Վերջին մելումէն ու պատրանքով մը օրօրէն հո-դին: Անաւոր օրեր էին: Ճամբայ կ'ելլէինք զէր խաղալու անգութ պաշտօնով ու բաժնուե-լէ ետք անմիջապէս կը զգայինք պէտքը մեծ մեզմէ փախչելու: Սրճարան կ'երթայինք ապա եւ օդի կ'ապսպրէինք:

Եղուարդը Արեւոյ փոխադրուեցաւ՝ օգափոխութեան, կաղզուրուելու: Դեղ տարի իրեն ու վերադարձայ կէտօրին: Ճիւղին նանդիպիցայ ու անմիջապէս ճիւղակից ի-ջայ նարէն:

- Ինչպէ՞ս է Եղուարդը, - հարցուց Լեւոն խունապանար:
- Պատասխանի փոխարեն նակատաղին հայհոյեցի:
- Սարսափելի բան է, - շարունակեց զլուրը շարմելէն:
- Լոպեցինք:
- Պայէ երթանք օդի մը խմենք, - ըսի պա՛ւ մը ետք:

Ձեկաւ: Ուրիշ բարեկամի մը նեա պիտի երթար, Գնաց: Երեք ժամ յետոյ լու-ջինք բոթը: Երեք ժամ յետոյ զարսափելինք երկու եղաւ:

Բայց սրբա՞ն տխուր ամառ էր այս ամառը: Այն աղուն հիւանդութիւնը, այս աղուն դանաութիւնը: Այս աղուն անակնկալ մա՛ւը, այն աղուն սուպը: Մէկը անիծա՞ն էր արդեօք մեզ: Այն աղուն մա՛ւեցնող մաշումին ակոստոսեւ ըլլայ ամէնորեայ ու գծեղակ հարկադրանքը, այս աղուն յանկարծաւս մաշունան կակիծը: Այս ամառ ինչ ախա՛ւր ա-մառ էր: Այս աղան զնաց, այն աղան շմաց: Ու մեծք խունկ շիտեցինք, ու մեծք աղօթք-նեք շմբանչեցինք: Բայց այս ամառ սրբա՞ն նայհոյեցինք, սրբա՞ն մեղքեք կուտակեցինք մեր սնունին դիմաց այս ամառ:

Պ. Մ.





# ԻՎԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

## ՀԱՅԱՊԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

### ՍՓԻՒՌՔԻ ՄԷՁ

Armenology must not be allowed to become a second-class science

Sir HAMILTON A. R. GIBB

Վերջերս, ընդհանուր, համագաղութային հետազոտութիւն մը սկսած է ծաւալիլ Սփիւռքահայ կեանքի մէջ հայկական ուսմանց նկատմամբ:

Հայագիտութիւն, Հայագիտական ամսագիր, Հայագիտական կեդրոն, Հայագիտական դասընթացք բացատրութիւնները մամուլի մէջ յաճախակիորէն կրեցող եւ յոգուածներու, նոյնիսկ յոգւածաշարքերու տուն աւուղ, նիւթ մատակարարող խորագիրներ են: Կր խօսուի ու կը գրուի հարցերու մասին, որոնք առանց անպայման դրուելու այս խորագիրներուն տակ, կը վերաբերին անոնցմով Հասկցուած իրականութեանց:

Այս բոլորով կը մատնանշուի Հասարակաց ճիւղ մը, Հայ Սփիւռքի այլազան դադուրներուն մէջ, Հայ մշակոյթին՝ Հայ պատմութեան, Հայ լեզուին, Հայ գրականութեան եւ ընդհանրապէս հայկական արուեստներու արժէքները երեւան յերելու եւ պիտական վերլուծման ու պարզարանման միջոցով Հայ թէ օտար Հանրութեան ճանչցելու:

Ամերիկայէն մինչեւ Իսֆահան եւ

Անգլիայէն մինչեւ Պէրսիա՝ կը Հանդիպինք Հայագիտական ուսմանց վերաբերող այնպիսի երեւոյթներու, որոնք այլազան զրգապատճառներէ են թելադրուած, ծնունդ են տարբեր-տարբեր մտահոգութիւններու, կը ծառայեն բազմատեսակ նպատակներու, եւ սակայն, որպէս ընդհանուր յայտարար ունին անկեղծ եւ հեռզհետէ աճող հետազոտութիւն մը Հանդէպ Հայութեան անցեալին եւ ներկային, Հայ կեանքի քաղաքական, կրօնական, մշակութային եւ այլ երեսներու մէջ Հաւասարապէս:

Ոչ միայն Հայութեան ծոցին մէջ կը տեսնուի Հետազոտութեան վերաբարձու մի այս երեւոյթը, այլեւ օտար գիտական, ակադեմական, Համալսարանական շրջանակներու մէջ: Պատմական մեծ հռչակ վայելող բարձրագոյն Համալսարաններու կամ նոր սկիզբ առնող Համալսարանական Հաստատութիւններու մէջ Հայագիտութեան դասընթացք մը, ճիւղ մը, երբեմն ամպիոն մը՝ կը Հաստատուի կամ արդէն իսկ գոյութիւն ունեցող Հայագիտական ուսմանց աւանդութիւն մը

կը վերականգնականայ կամ նոր զարկ կը ստանայ:

Ճ

Բնականօրէն նոր չէ այս հետաքրքրութիւնը: Անցեալի աւանդութեան շրջագիծին մէջ դիտուած՝ նոյնիսկ — եւ ցաւով անշուշտ — նահանջ մը կը կարգացուի այսօրուան տուեալ պատկերին մէջ: Մասնաւորաբար ժ.թ. դարուն եւ մինչեւ Համաշխարհային Առաջին Պատերազմը, Ի. գարուն, Հայագիտութիւնը Հայաստանէն կամ Հայկական շրջանակներէն դուրս, եւրոպական համալսարանական ուսման կեդրոններու մէջ, մեծ նուաճումներ կատարեց եւ մասնաւորաբար Արեւելագիտական Ուսման կալուածին մէջ ապահովեց պատուաւոր տեղ մը եւ իր նիւթին ու բովանդակութեան ճորտութեան վայել դիրք մը:

Պատմական հարեանցի ակնարկի մը մէջ երբ փորձենք սեղմել պատկերը Հայագիտութեան անցեալին՝ պիտի դժուարանանք գտնելու սկզբնական մեկնակէնք այն հետաքրքրութեան, որ արտայայտուեցաւ Հայութեան նկատմամբ ուսումնասիրական մարզին մէջ: Հայագիտութեան մօտենալով ամէնէն լայն հասկացողութեամբ, կարելի է սկսիլ Հերոդոտոսէն, Քսենոփոնէն, Մար-Արսա Կատինայէն կամ Եւսեբիոս Կեսարացիէն եւ կամ Հնագոյն շրջանի նման այլ պատմագիրներէն, որոնք Հայութեան նկատմամբ ցոյց տուին մասնաւոր հետաքրքրութիւն եւ իրենց պատմագրական գործերուն մէջ առաւել կամ նուազ չափով, ուղղակի կամ անուղղակի մեւով, տեղ տուին Հայութեան, անոր կեանքին այս կամ այն երեսին կամ երեսիքին եւ կամ շրջանին անդրադասուելով: Եթէ Հայագիտութեան հասկացողութիւնը աւելի սեղմելով՝ զայն բժրունք բնակում մեթոտի եւ գիտական ճանաչումի մասնաւոր ճիգի տեսակէտէն՝ այն աստիճանի վրայ է սկսիլ պատմական-բանասիրական ուսման սեղմ իմաստով գիտականացման,

քննական-վերլուծական մեթոտի բարձրացման շրջանէն — ժ.Ը. եւ մասնաւորապէս ժ.թ. դարէն, զոր պէտք է բնորոշել որպէս Հայագիտութեան ամէնէն բեղուն շրջանը օտար գիտական շրջանակներու մէջ: Տը Լաբրոզ, Վիլլըֆորտ, Լը Վայ-եան Տը Պարիզի, Տիւրքի, Գաբրիէր, Աէն-Մարտէն, Պրոսէ, Լամպլուա, Բրիտոմ, Ֆելիքս Եւլ, Եւսման, Պետրուս, Տըլակայտ, Միլլեր, Հիւպըրման, Գուտշմիդ, Սորշիկովսքի, Ֆրետեր, Մալան, Կոնիքեր, Գիլգեր — ահա աւելի ընտրուած ամփոփ ցանկ մը միայն ժ.թ. դարու Ֆրանսացի, Գերմանացի եւ Անգլիացի գիտնականներու, որոնցմէ ոմանք իրենց ամբողջ կեանքը, ուրիշներ իրենց ուսումնասիրութեանց կարեւոր մէկ բաժինը նուիրեցին Հայագիտական պրպլատմներու, լուսաւորելով մութ անկիւններ Հայոց պատմութեան, ճանչցնելով Հայ լեզուն, դրականութիւնը, եկեղեցիին, ձեռագիրները, ճարտարապետութիւնը եւ յատկապէս հայ պատմագրական երկերը եւրոպական գիտական աշխարհին (\*):

Ժ.թ. դարու Հայագիտութեան այս դիժը մինչեւ Ի. դարու առաջին տասնամեակները երկարող գէժքերէն — Աթուան Մեյլէ, Ֆրետերիք Մալէր, Նիկոլայոս Մառ՝ Թուելու Համար միայն երեք աչքառու անուններ — ետք, պէտք է խոստովանիլ, որ որոշ զանդաղեցում մը կրեց Հայագիտութիւնը թէ՛ օտար շրջանակներու մէջ եւ թէ՛ Սփիւռքահայութեան կեանքին մէջ: Արդար է հետեւաբար Մըր Համիլթըն Կիպ (Օքսֆորտի Համալսարանի Արարագիտութեան նախ-

\* Լրի գաղափար մը կարգուելու համար ժ.թ. դարու հայագիտութեան ձախարակ օտար գիտնականներու եւ անոց գիտական հետազոտութիւններու մասին, պէտք է կարգաւ Հ. Գ. Ա. Ի (Հայր Գարեգին Արքեպիսկոպոս) կազմէ բարգաւաճարար Երատրակուած պատկանի խտորը. «Մասնաւորութեան յԱրեւմուտ», (Էջ՝ 47-890, Վենետիկ, 1895):

կին դառախոս եւ Հետազոյին Ամերիկայի Հարվըրտ Համալսարանի Միջին Արեւելիան Ուսմանց Կեդրոնի Վարիչ), երբ Հարվըրտի մէջ Հայագիտական Ամպիոն մը հաստատելու ջանքին ահնարակելով կը գրէ. «(Անոր) առաջին պատասխանատուութիւնն է վերականգնել եւ բարձրացնել Հայագիտական ուսմանց մակարդակը Արեւմտեւոր մէջ»։ Հայագիտութեան ներկայ կացութիւնը դիտելով եւ դատելով յարաբերաբար Արեւելիայի տական այլ ճիւղերուն՝ կ'աւելցնէ. «Մասնագիտներու փոքր խումրի մը դուրս, քիչ մարդիկ աւելանկ են թէ վերջին տասնամեակներուն քրքան եւ մնաց Հայագիտութիւնը այն ընդհանուր յառաջդիմութիւնէն, որ իրագործուեցաւ ուսման յարակից դաշտերուն մէջ» (\*):

Պիտի լուսչէի մտնել մանրամասնութեանց մէջ բացատրել ջանալու Համար այս նախնային պատճառները։ Համալսարանային Առաջին Պատերազմի աղէտի տարողութիւնը հայ կեանքին մէջ չի չափուիր այն կորուստներովը, որոնք ջարդին եւ աւերումին տառջին եւ անմիջական սեւ արդիւնքները եղան մարդու եւ նիւթի բնաջնջումով, քանդումով եւ բռնադատումով։ այլ՝ այն երկարաձրգուող ջլատիչ ազդեցութեամբը, որով վերապրող ուժերը նախ ուղեցին իրենց կեանքը վերայինն անմիջական եւ ամէնէն կենսական պայմաններու հայթայթումով։ Հաց ու հագուած, բնակարան ու արհեստ, եկեղեցի ու դպրոց — ահա՛ աւագազոյն եւ անյետաձգելի կարիքները Հայ մագապուրծ ու վերածնող ժողովուրդին, որոնց զոհացումը սեպուհ պարտքը եղաւ հայ մարդուն։

Միւս կողմէ, օտարներու Հետաքրքրութիւնը գրաւուեցաւ ցաւատանջ ու բնաջնջուող ժողովուրդի մը տազնապներով, որոնց փչրանք-արձագանգներն իսկ պահ մը ալեկոծեցին եւրոպական ժողովուրդներու սիրտը եւ յառաջ բերին

կարեկցութեան, դժուրեան եւ օգնութեան տրամադրութիւն մը անոնց մէջ։ Հայագիտութիւնը նահանջեց հայաստանի արեւ, այս վերջինը ըմբռնելով բարեփոխական հասկացողութեան մը սահմաններուն մէջ միայն։

Այս պարզ, թէեւ դառն, իրողութիւններն իսկ կը բաւեն, բացատրելու համար Հայագիտութեան ընթացքին դանդաղումը։ Մեր անմիջական եւ հասկան նպատակը ըլլալով ներկայ կացութեան վերլուծումը, այժմ դիտենք պարզապէս պատկերը որոշ յատկացումներէ ետք Հայագիտութեան հասկացողութեան շուրջ։

Ճ

Առաջին հերթին, պիտի ուզէի անդրադառնալ Հայագիտութիւնը բառով հասկցուած իրականութեան եւ պարզել անոր բովանդակութիւնը ընդհանուր դիտելու մէջ.

- Հայագիտութիւնը դիտական ուսմանց այն ամբողջութիւնն է, որուն նըպատակն է կարելի յատկութեամբ, ճշգրտութեամբ եւ ամբողջականութեամբ մարդկային ծանօթութեան լոյսին տակ բերել Հայ ժողովուրդի անցեալի կեանքը իր բոլոր երեսներուն եւ երեւոյթներուն մէջ, նախապատմական ժամանակներէն մինչեւ մեր արդի կեանքը։

- Հայ բնաշխարհը՝ հայ կեանքի աշխարհագրական պայմանները թէ՛ նիւթական տարածութեան եւ կազմութեան եւ թէ՛ պատմական զարգացման գետիներու վրայ դիտուած.

- Հայ ցեղային միութեան յառաջացումը, անոր բաղկացուցիչ տարրերու եւ կազմաւորման ընթացքի ճնարկութեամբ.

- Հայ լեզուի կազմութիւնը, պատմական հոլովոյթին եւ ձեւաբանական ու շարահիւսական դրութեան մէջ դիտուած եւ ուրիշ լեզուներու հետ իր յարաբերութեանց մէջ ճնարկուած.

- Հայ գրականութիւնը, ուրարտա-

\* See Status of Armenian Studies by Dr. A. K. Sanjian, p. 2, Harvard 1962.

տական սեպագիրներէն, նախամեքոպեան շրջանի հայ բանահիւսական օտեղծագործութիւնէն ու Ռուկեդարեան դասական շրջանէն սկսեալ մինչեւ արդի աշխարհաբարի արեւելեան ու արեւմտեան ճիւղերը, դրաւոր ստեղծագործութեան բազմասեռ կայունածնեբուն մէջ գիտուած .

- Հայ կրօնքը, նախնադոյն բնապաշտական, ոգեպաշտական, տոստմակուն հաւատալիքներէն, Հեթանոսական քառասունութիւններէն սկսեալ մինչեւ Հայ Եկեցեոյ արդի դրութիւնն ու կացութիւնը .

- Հայկական Ընկերային դրութիւնները, նախնադոյն վիճակներէն, ընկերութեան մայրատիրական ու հայրատիրական սիստեմներէն, աւատապետական կարգերէն սկսեալ մինչեւ արդի սփիւռքահայ ցանուցիք ու բազմադոյն վիճակները .

- Հայ կեանքի տնտեսական տպումները, ուրարտական մետաղագործութեան վաճառականութիւնէն սկսեալ մինչեւ արդի տնտեսական արդիւնաբերութիւնները Հայաստանի եւ Սփիւռքահայ այլատեսակ պայմանները .

- Հայ յարաբերական կեանքը, Ուրարտու-Ատորական բախումներէն սկսեալ մինչեւ Ի. դարու մեր բազմաճիւղ ու լայնածաւալ շինարարութիւնը, անցնելով հայ-մարական, հայ-յունական, հայ-հռոմէական, հայ-բիւզանդական, հայ-արաբական, հայ-սելճուքեան, հայ-վրացական, հայ-երուպական, հայ-թաթարական, հայ-մեծլուքեան, հայ-օսմանեան, հայ-պարսկական, հայ-ուսական եւ հայ-արեւմտեան պետական բազմադարեան եւ բազմակնճոտ հանգրըւաններէն .

- Հայկական տրուստները, նախապատմական եւ նախաքրիստոնէական հնագոյն շրջաններէն մեզի ժառանգ մընացած եւ հոգի ընդերքէն յաճախ յայտնաբերուած յիշատակներէն, կոթողներէն եւ յուշարձաններէն սկսեալ մինչեւ մեր ձեռագիրները, մանրանկարները, ճարտարապետական կոթողները, խաչքարներն ու դարդանկարները, սրբազան

ու աշխարհիկ երաժշտութիւնը եւ մինչեւ արդի հայ արուեստի ամէնէն արդիական ձգտումները .

Մարդկային կրեակայութեան համար անպարփակելի թուող համեմատութեան մը կրնայ հասնիլ նիւթերու այս ուրուագծային եւ ընտրովի շարքը, եթէ փորձենք զայն երկարիլ ու մանրամասնիլ : Բայց ակնթարթային այս բնորոշումներն իսկ բաւարար են մեզ համոզելու համար, թէ ընդարձակածաւալ եւ խորունկ աշխարհ մըն է Հայագիտութիւնը իր նիւթին, բոլորակապութեան կայունածին մէջ գիտուած : Այլապէս է այդ նիւթը եւ հարուստ՝ թէ՛ տեսակի եւ թէ՛ որակի տուեալներով : Հետեւաբար, ծանր կըսող բաներէն մէկը պէտք է ըլլայ Հայագիտութիւնը զայն արտասանող կամ դրող մարդու մտքին մէջ :

Գիտական յեֆնիքի տեսակէտէն գիտուած՝ մարդկային պատմութեան վրայ կիրարկուող բոլոր մեթոտները պէտք է ունենայ ան իր գիտական լրջութիւնը կարենալ արդարացնելու համար : Հնաբանական պեղումներ, ազգագրական հաւաքումներ, ձեռագրական պրպտումներ, քննական հրատարակութիւններ, պատմական քարտէսներ, քննադատական, բազմապատկան մենագրութիւններ եւ այլ անհրաժեշտ մեթոտներ, ինչպէս նաեւ ուրիշ գիտական տիւրիւններէ փոխ առնուած գործիքներ - երկրաբանական, մարդաբանական եւ այլ թեքնիք ուսումնասիրութեան միջոցներ - պէտք է կիրարկուին հայ պատմութեան վրայ հում նիւթ, նոր ատաղձ հայթայթելով : Ահաւասիկ նիւթին չափ ընդարձակ, բարդ եւ դժուարին մեթոտներու եւ միջոցներու խումբ մը, առանց որուն կիրարկումին անկարելի պիտի դառնար իրացումը Հայագիտական ուսմանց .

Պարզ է, ուրեմն, որ Հայագիտութիւնը բառին տակ կարելի չէ գետեղել այն նեղ հասկացողութիւնը, որ Հայագիտութիւնը կ'ըմբռնէ որպէս հայերէնագիտութիւն : Կարելի չէ Հայագիտութիւնը բառով հասկնալ այն թոյլ եւ լոյծ տարազը, որ այնքան դիւրին եւ ամուսնաց

կը հագցուի մարդոց, որոնք այս կամ այն ձեւով, այս կամ այն չափով եւ յաճախ առանց պիտական լուրջ սխտեմի՝ բանի պիտեն Հայութեան մասին կամ Հայութեան պիտութիւնը ունենալէ աւելի՝ այդ պիտութեան պատրանքը կը պատցեն իրենց հետ: Յրիւ փլըանցներ Հայագիտութեանը՝ չի նշանակեր Հայագիտութիւն, ինչպէս անջատ-անջատ քարեր չեն նշանակեր շէնք կամ կառոյց:

Նոյնքան անհեթեթ պիտի ըլլար անուշտ մտածել, թէ Հայագիտութեան ընդհանուր մտածելու կողմէն կրնայ վաւերականորէն կրող անձը կրնայ ըլլալ միայն այն մարդը որ իր գանկին մէջ կրնայ սեղմել ամբողջ - եւ անուսման - նիւթը Հայագիտութեան բառին մէջ սեղմուած բոլոր պիտական ճիշդութիւնը:

Հայագիտի գլխաւորագոյն, որոշողը յատկութիւնը այս կամ այն ճիւղին, այս կամ այն նիւթին տիրութիւնը: Եւ նոյնատեղ մասնագիտական հանգամանքն է մարդու մը՝ որ իր ուսումնասիրական ճիւղերուն առանցքը, կեդրոնը եւ կամ, նուազագոյն, կարեւոր մէկ բաժինը յատկացուած է Հայութեան ճանաչումին: Հայագիտի բնորոշիչ պիտի, հետեւաբար, Հայութեան ճանաչումի պիտական, սխտեմաթիկ, մասնագիտական ձեւին կը վերաբերի աւելի քան ծանօթութեան քանակին: Գիտական պրպտումի թէքնիքը ունեցող պիտական մարդն է Հայագիտը, որ կը ձգտի նորութիւններ բերել, սխալներ սրբագրել եւ Հայ անցեալին վրայ լոյսի շող մը իջնել այս կամ այն մութ անկիւնը աշխարհին բանալու արդար նախանձախնդրութեամբ եւ անսրբնկերացող նոյնքան արդար պատասխարութեամբ (ամպլիսիսմ):

Հայագիտին համար Հայերէն լեզուէն զատ անհրաժեշտ են օտար լեզուներ - դասական եւ արդի - իր ճիւղին յատուկ ակադեմական լուրջ պատրաստութիւն, իր ուսումնասիրութեան ընդհանուր շրջագիծին (քննքիսք) առողջ եւ լայն ծանօթութիւն: Սէրը, նախանձախնդրութիւնը, միտքն ու աշխատանքը ստիկ բաւարար չեն: Անհրաժեշտ է թեք-

նիքը, զործիքը, արուեստը պիտական որոնումին եւ վերլուծումին, առանց որոնց՝ դիւրին ընդհանրացումներու, հապճեպ գատաստաններու, մակերեսային մեկնաբանութիւններու եւ յաճախ անպատասխանատու յայտարարութիւններու փորձութիւնը շուշանար զինք Հայագիտութեան իսկական ծառայողի - նպաստողի - տեղ՝ գոնի վերածելու...:

Տակաւին, յստակ գատորոշում մը պէտք է ընել Հայագիտի այն երկու տիպարներուն միջեւ, զորս կարելի է բնորոշել որպէս մտնագետ-հայագետ եւ հայագետ-մտաւորականը:

Առաջին բնորոշումին տակ կը հասկընանք այն մարդը որ որոշ կալուածի մը մէջ անյայտ իրողութիւններ կը ջանայ ի յայտ բերել, գիտեր կատարել - ինչպէս սովոր ենք յաճախ ըսել - , համբերատար, մանրազնին հետազոտութիւններ կատարելով: Այս դասակարգին կը պատկանին գլխաւորապէս բանասէրը, հնայագէտը, ազգագրագետը, լեզուագետը, բանաստեղծը, եւն...:

Երկրորդ բնորոշումին տակ կը հասկընանք այն մտաւորականը, որ աւելի ընդհանուր - բայց հիմնաւոր - ծանօթութիւններու, իւրապատուկ աշխարհահայեացքի տէր՝ կը մեկնաբանէ Հայ պատմութիւնը իր քաղաքական, կրօնական, իմաստասիրական, գրական, գեղարուեստական, տնտեսական, ընկերաբանական եւ այլ երեսներու վրայ, մտալով տակայն այս կամ այն կալուածին մէջ, առանց տարածուելու բոլորին վերայ, իր արժեւորումի եւ մեկնաբանութեան տարրերը քաղելով մասնագետ-հայագէտէն եւ իմաստաւոր համադրութեան մը յանգեցնելով զանոնք: Պատմաբանը, գրական քննադատը, գեղագետը, իմաստասէրը, աստուածաբանը կը դասաւորուին այս տիպարին ներքեւ (\*):

\*) Ինչ, կարելի էր իրարմէ գատարելի այս երկրորդ տիպարին մէջ այն՝ զոր բնութագրեցիք արդէն իսկ անոր մօտ եղող այն միւս անձը որ կը ժողովրդականացնէ գիտութիւնը, բառին

Հաղուագիւտ երեւոյթ է այս երկու տիպարները մարմնացած, ներդաշնակուած տեսնել մէկ անձի մէջ, Մտաւորական դիմագծութեան Հարցն է սա: Միտքի, խառնուածքի, բնական նախասիրութեան, մտաւոր պատրաստութեան հետ կապ ունի:

Մեր մէջ Մանուկ Արեղեան մը, կամ աւելի նեղ իմաստով, Նիկոլ Աղբալեան մը Հայ Հին եւ Միջնադարեան գրականութեան պարագային, Օրմանեան Սըրբազան մը կամ Կարապետ Եպիսկոպոս Տէր-Մկրտչեան մը Հայ Եկեղեցւոյ պատմութեան պարագային, Թորոս Թորոմանեան մը Հայ Ծարտարապետութեան համար, Կոմիտաս Վարդապետ մը Հայ Երաժշտութեան պարագային, Յակոբ Մանանդեան մը կամ Նիկողայոս Աղունց մը Հայ քաղաքական պատմութեան պարագային, Հրաչեայ Աճառեան մը Հայ լեզուի պատմութեան պարագային, Սիրաբոյի Տէր-Ներսէսեան մը Հայ մանրակարգութեան պարագային, բացառութիւններ են, որովհետեւ յաջողած են իրենց բանասիրական քննութիւնները յանդեցնել Համադրական կառուցումներու: Բայց շատեր կը մնան մէկ կամ միւս մարզին մէջ: Եւ լաւ է որ մնան

ագնի իմաստովը, քով ամ չի շփոթուիր պոռու ճառարանի, զգացական զեղումներով, սոմանթիզմով շարժող, ազգասիրական ձգտումներով առաջնորդող փրփակածախտիմ հետ: Գիտական առաջը եւ տնայն տնայններու վրայ կանգնած՝ հայագետի այս տիպարը շեքիմ ունի եւ իրեն իբրեւ առաջնորդիմ ընտրած է պարզագոյն, գրաւիչ ըմտայն, ծաղվարդիմ ստաշիլի գարձնի հայագիտութեան յայտնութեամբ ծանօթութիւնները, որոնք այլապէս տնայնագործ պիտի մնային համարութեամբ: Բուն հայագետի եւ ծաղվարդիմ միջեւ գտնուող կառուցումները է ան:

Անթիլիսա

եւ իրենց կալուածի սահմաններուն մէջ տարածեն եւ խորացնեն իրենց ուղղութիւնները, որոնք անհրաժեշտօրէն լրացուցիչ են իրարու: Ստեփանոս Մալխասեանց մը Հայ մատենագրութեան պարագային, Գալուստ Տէր-Մկրտչեան մը կամ Հ. Յակոբոս Տաշեան մը բանասիրական-մենագրական ուսումնասիրութեանց պարագային, Գարեգին Սըրբանձունեանց մը կամ Երուանդ Լալաբեան մը Հայ ազգագրական նիւթերու պարագային, Գարեգին Կաթողիկոս մը Հայ զրչութեան եւ մանրակարգութեան պարագային, կամ Եղիշէ Դորեան մը մատենագրական եւ լեզուաբանական մասնակի Հարցերու ուսումնասիրութեան կալուածին մէջ, Հ. Ներսէս Ալիսեան մը քիչ մը ամէն նիւթի մէջ, բայց մանաւանդ եկեղեցական-մատենագրական ուսմանց կալուածին մէջ, եղան եւ մնացին առաւելապէս բանասէր:

Անշուշտ ուրիշ անուններ դեռ կարելի է շարել այս կամ այն ցանկին մէջ առանց սակայն մոռնալու որ այսպիսի դասակարգում մը մաթեմատիկ ճշգրտութեամբ կարելի չէ ընել եւ ըլլալ յճուական եւ վերջնական բնորոշումի եւ դասակարգումի ճիշտի մէջ, որովհետեւ կան երանգաւորումներ, զգալի տարբերութիւններ նոյնիսկ մէկ խումբին մէջ կամ այս եւ այն դէմքերու պարագային: Մանաւանդ նկատելի կերպով եւ երբեմն անխուսափելիօրէն պիտնական մը կ'անցնի մէկ կալուածէն միւսին, կ'երթայ մէկ ուղղութիւնէն միւսին:

Մեր բուն նպատակն էր ցոյց տալ միայն, աւելի ճիշդ՝ մատնանշել այն ճշմարտութիւնը, թէ որքա՞ն այլազան ե ի՞նչ նրբերանգ կալուած է Հայագիտութիւնը եւ ի՞նչ պէտք է հասկնալ ամէն անկամ, երբ բառը կը գործածուի անձի մը, գործի մը կամ ուսման ընթացքի մը համար:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
(Վերջը յաջորդով)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԿՈՐՍՈՒԱՄ ՍԵՐՈՒՆԻՐ

Երբ Փարիզ ազատագրուեցաւ, էր-  
նէսթ Հէմինկուէյ, որ բարձրատիճան  
սպայ էր, հրամայեց իր զինուորներուն,  
որ երթան եւ անմիջապէս գրուեն Ռից  
պանդուկի մարանները: Եւ իրեն պէս ու-  
րիշ շատ մը տարեց եւ երիտասարդ զը-  
րոզներ, որոնք մաս կը կազմէին զօրա-  
մար Փաթլընի բանակին կ'ուզէին վերա-  
դրուել այն վայրերը, ուր կը հաւաք-  
ւէին բոլոր այն զրոզները, որոնք առա-  
ջին համաշխարհային պատերազմէն ետք  
բնակութիւն հաստատած էին Փարիզ՝  
Մոնփարնասի սրճարանները, Ռիցի սը-  
րահները եւ Մոնմարթի փողոցները:  
Շատերուն համար առիկա տեսակ մը  
ուխտագնացութիւն էր գէպի անցեալ:

Ճիշդ է որ այս երկրորդ համաշ-  
խարհային պատերազմը առաջինին չի  
նմանիր եւ թէ ամերիկացի զինուորը  
զաղորած է բարի դրօսաւրջիկ մը ըլլա-  
լէ, եւ զարձած է գրուած երկիրներուն  
տէրը: Սակայն զրոզներուն սրտին մէջ  
իտէալը միշտ նոյնն է՝ արդարութիւն,  
ազատութիւն, մարդ էակին երջանկու-  
թիւն: Սակայն, որովհետեւ իրենց ի-  
տէպիները չեն իրականանար, եւ կը տես-  
նեն զբաւուած երկիրներու ժողովուրդ-  
ներուն թշուառութիւնները, յուսախաբ  
կ'ըլլան իրենց հայրենիքէն եւ կը նա-  
խարարեն բնակիլ Ամերիկայէն դուրս:  
— «Աւելի մեծ ազատութիւն կայ Փարի-  
զի մէկ քաղաքասիւն մէջ, — կ'ըսէ Ռի-  
չըրտ Ռայթ, — քան ամբողջ Միացեալ  
Նահանգներու մէջ»: Եւ կը սկսին քըն-

նադատել ամերիկեան ապրելակերպը,  
զոր իրենց ներկայացուցած էին իբր ջո-  
ղաբակրթութեան կատարեալ ձեւը:

Հարուստ եւ մարդոց համար աւելի  
հանդարտ պայմաններ ստեղծած իրենց  
երկիրը կը բաղդատեն Եւրոպային հետ,  
որուն քաղաքները փլատակներ են եւ  
ժողովուրդը տառապած, սակայն կը  
նախընտրեն այս երկրորդը, որուն ժո-  
ղովուրդը աւելի մօտ է իրենց սրտին եւ  
աւելի կը հասկնայ զիրենք:

Այսպէս ծնաւ ահարի գրականու-  
թիւն մը, որուն արժանները իբրած են  
յուսախաբութեան եւ ատելութեան մէջ:  
Յիշենք. ձոն Պրիմի Մարդ միշտ ա-  
ռանձին կը մեռնի, Նորման Մայլըրը  
Մերկերը եւ Մեռելները, Ալֆրէտ Հէյրի  
Սիրոյ մը պատմութիւնը եւ Իրվին Շո-  
յի փոթորկալից եւ երկարապատում վե-  
պերը: Տէքորը միշտ պատերազմն է,  
ուր կան մէկ կողմէ ամերիկացիները,  
իրենց սնանկացած հոգիներով եւ միւս  
կողմէ՝ Եւրոպան, իր բոլոր թաղամա-  
սերով, ուր կ'ապրին մարդիկ թշուառու-  
թեան եւ յուսահատութեան մէջ: Այս  
վէպերուն հերոսները ընկերութենէն  
դուրս ապրող մարդիկ են, փարիսանք,  
մտաւորական ըլլան անոնք, թէ՛ հրեայ,  
սեւամորթ ըլլան, թէ՛ միասեռական:

Այս զրոզներուն անկեղծութիւնը եւ  
վեհանձնութիւնը անատարկելի են: Սա-  
կայն շատ մօտէն կապուած կը մնան ի-  
րենց փորձառութիւններուն եւ չեն կըր-  
նար զանոնք տիեզերականօրէն արժեւո-  
րել, ինչպէս ըրած էին Հէմինկուէյ եւ  
Տոս Փաստո: Որքան ալ հետաքրքրական

ըլլան այս վէպերը, շունին իրենց նախորդներուն արժէքը: Ասոնց համար երկրորդ համաշխարհային պատերազմը շարունակութիւնն է առաջինին, եւ գործերն ալ կը կրեն հիներուն գրոշմը:

Պէտք է ըսել, որ Քորէայի պատերազմը անւի մեծ ազդեցութիւն ունեցաւ ամերիկեան ժառանգութեան վրայ, քան համաշխարհային երկրորդ պատերազմը: Այս պատերազմը եղաւ հակառակ ժողովուրդի կամքին, եւ վերջացաւ ընդհանուր յուսախարութեան մէջ: Այս միակ պատերազմն է, ուրկէ Միացեալ Նահանգները յաղթական զուրս չեկան: Մարտափի մթնոլորտ մը, անապահոյութեան հով մը կը փչէր ամէն կողմ: Եւ ասոր արձագանգը կարելի է գտնել Պիքսերուօնի գերիտակալու եւ անդունական բանաստեղծութեան մէջ:

ԱՐՈՒԵՍԱՊԷՏԸ ԿՐ ԼԱՇՏՈՒԻ ԻՐ ԼԱՅՐԵՆԻՔԻՆ ԼԵՏ

Առաջին համաշխարհային պատերազմը եղած էր աքորի նախասնեակը, երկրորդը՝ առիթ դարձաւ, որպէսզի գրողները իրենց կապը կտրեն ամերիկեան մթնոլորտին հետ: Սակայն եթէ առաջիններունը՝ դառնացած սրտերու գաղթ մըն էր, ինչպէս Հանրի Միլէր եւ Էդրա Փաունա, նորերը հաճելի եւ հանգրստաւէտ կեանք մը կ'անցընեն Փարիզի եւ Հոտի լուսադոյն վայրերը, եւ յաճախ նպաստ կը ստանան իրենց կառավարութենէն կամ մշակութային հիմնարկութիւններէ:

Պատճառն այն է, որ Ամերիկան սկսած է Հաշտուիլ իր արուեստագէտներուն հետ: Հաշտութիւն մը՝ որ տեղի կ'ունենայ ակամայ, եւ որուն պատշգնբը արդէն սկսած են հասունանալ:

Փոյէն եւ Մէլլիլէն ի վեր, ամերիկացի գրողը նկատուած է տեսակ մը տարագիր, դատապարտուած յաւիտենական աքորի: Եւ գրողը կը մղուի ինքզինք յանձնել զինովութեան, միասեռականութեան եւ անձնասպանութեան:

Ճիշդ է, որ ամերիկեան ընկերութիւնը արժատական փոփոխութիւն չէ կրած, սակայն կառավարութիւնը յաճախ դժմած է մտաւորականներուն երկրին նոր ուղղութիւններ տալու համար: Ամերիկան որ դրամատիրական եւ կղզիացման երկիրն էր՝ հիմա դարձած է գրեթէ ընկերավարական երկիր մը: Նոյնիսկ այն հեղինակները, որոնք պատճառ ունէին շտրկու ամերիկեան ապրելակերպը, յուսախար ըլլալով համայնավարութենէն հեռացան քաղաքականութենէ եւ համակերպեցան իրենց երկրի ապրելակերպին հետ:

Նկատեցին, որ Ամերիկան այնպիսի երկիր մըն էր, ուր խօսելու եւ մտածելու ազատութիւնը գոյութիւն ունէր, եւ ուր մտաւորականութեան նիւթական վիճակը, նայելով միւս երկիրներուն, նախանձելի էր:

Համալսարանները եւ դուէնները մեծ գեր խաղացին այս հաշտութեան մէջ: Անուանի վիպասանները եւ բանաստեղծները հրաւիրուեցան իբր դառատու, հարուստ եւ ազնուական ընտանիքներու օրիորդներուն ուսուցանելու գրելու արուեստը: Եւ դուրսի աշխարհէն պաշտպանուած հաստատութիւններուն պարիսպներով եւ զանգակատուններու նորփոթական երազով, զարգացուցին զարգարուած եւ տեսլապալատ գրականութիւն մը:

Այս հեղինակները պատերազմներուն շմանակեցեցան. իոկ մասնակցողներն ալ նկատեցին, որ այդ թեման իրենց չէր յարմարեր, չէին յարմարեր նոյնպէս արկածախնդրութիւնը, ալքոլը, որոնք պատրուակներ էին կեանքին խուսափելու: Նախընտրեցին ուսումնասիրել իրենց հերոսներուն ներքին կեանքը, հոգեբանական պայքարները, սեռային հարցերը: Եւ դասն իրենց վարպետը յանձնին Հէնրի Ճէյմսի եւ Ուիլիամ Չոքսերի: Այս սերունդէն կարելի է յիշել Փոլ Պոլլըս, Ճոն Յիլիփս եւ Փիթըր Մաթիէսըն:

Նոր քննադատութիւն կոչուած շարժումը չ'ընդունիր գործի մը ընկերային



եւ Հոգեբանական արժեքը, այլ կ'ընդգծէ անոր ձեւը, ոճը, կառոյցը: Անոնցմէ շատերը ծնած են Հարաւի մէջ, եւ ըմբոստացած են իրենց երկրին մէջ տիրող նիւթապաշտ եւ քաղցենի քաղաքակրթութեան դէմ: Անոնց փախուստը օտակայն կ'ըլլայ ներկայէն դէպի անցեալ: Իբր վարպետ կ'ընդունին Փօն, Մէլիւրը եւ Պոտլէրը:

Այս խումբին ամէնէն նշանուոր անդամը կը կոչուի Ռուպէրթ Փէն Վարըն: Գրած է մեծածաւալ վէպեր ճարտար կառոյցով եւ ուր կ'ուսուսանալիք մեղքի եւ Հասուցումի հարցերը: Վէպը՝ իր դրէին տակ կը վերապահ իր ուժակաւորութիւնը:

ՆՈՐ ԳԻՒՏԵՐ ՀԻՆ ԹԵՄԱՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Պահ մը մտանալով Եւրոպան, Հարաւի գրողները կը ջնանս վերադառնալ դէպի իրենց գրականութեան բուն աղբիւրները: Իրենց նախորդներուն պէս ասոնք ալ ունին բնութեան Հանդէպ Հեթանոս սէր մը, նոյն բանաստեղծական զգայնութիւնը, նոյն ճաշակը դէպի տարօրինակ բաները եւ նոյն մտասեւեռումը դէպի սեռականութիւնը: Ձեռն Հետաքրքրու իր փրիսոփայական եւ արուեստագիտական հարցերով: Կը բաւականանան նկարագրել, ճարտար միամտութեամբ մը՝ ծիծաղելի եւ ողբերգական աշխարհը, որուն մէջ մեծցած են: Ամերիկայի նախնական ձայնն է, որ կը լսուի, մուկ վիպապաշտութիւնը Փոյի կամ Հովթորնի:

Թրումէն Քափոթի, Քարսըն Մով Քրլըրս եւ Թէնիսի Ուիլիամսի գործերուն մէջ կը գտնենք նոյն թիմաները, ասարօրինակ կամ խելապար անձեր, թաւաքական մթնոլորտ մը, սեռային աշխարհակառթիւններ: Խնթ պատուելին՝ որ կը քարոզէ Միթմի եւ Գոմորի վախճանը, պատաս. ազնուականուհին՝ որ իր ցնցոտիներուն մէջ իսկ կ'ուզէ պահել ձեւակերպութիւնները եւ սուանդութիւնները... Եւ այս յուզիչ եւ նեխած աշ-

խարհին մէջ կ'ապրի մանուկ մը՝ Հիացած ու տխուր, որ Հեղինակին երազները կը խորհրդանշէ:

Եւ միշտ իրապաշտութիւն

Հարաւը ընդհանրապէս աւելի իտալիտա եւ աւելի բանաստեղծական ոգի դրած է իր գրականութեան մէջ, քան Հիւսիսը, որ ընդհանրապէս Հաստարիմ մնացած է իրապաշտութեան: Առաջինը ընդհանրապէս միջակ քաղաքներու եւ լայն տարածութիւններու երկիր մը ըլլալով, Հեղինակը դրած է բնութեան հետ սերտ հաղորդակցութեան մէջ: մինչ Հիւսիսը, իր հսկայ ոտաններով, ինչպէս Նիւ Եորք եւ Շիքագօ, ուր միայն կ'ապրին իրանտաքի, լեհ, իտալացի եւ հրեայ գաղթականներ, իրենց տառապանքներով եւ թշուառութիւններով, Հեղինակը առօրեայ շփման մէջ դրած է սպիկ իրականութեան հետ:

Այս իրապաշտութիւնը չունի նախկինին գոյները եւ վայրագութիւնը: Հոն կարելի չէ հանդիպել Մանսպուրիի, Թվոտոթ Տրէյլի կամ Սինքլէր Լէվիսի մը բուռն ու կատաղի էջերուն: Եթէ ընտրուած թիմաները նոյնն են, տարբեր է սակայն մտեցումը, ոճը. Հոս կայ աւելի բանաստեղծութիւն եւ Հիւսիսը:

Նէլսըն Ալիքէն կը նկարագրէ Շիքագոյի ազատ լեհերուն կեանքը, ինչպէս նաեւ թմրեցուցիչ վաճառողներուն միջավայրը: Պէրնարտ Մալմուս կը պատմէ աղքատ հրեաներուն թափառումները հսկայ քաղաքներու անապատին մէջ: Չանտլըրի մը, Ալֆրէա Հայդի մը գործերուն մէջ կարելի է Հանդիպել կծու իրապաշտութեան նկարագրութիւններուն քով՝ էջերու, ուր կը զեղու Հեղինակին Հիւսիսը եւ գուրգուրանքը:

Կան նաեւ Փորթօ-Ռիբոյցիներու եւ սեւամորթներու յատկացում մէջներ: Հոս տեղ չունի Հիւսիսը, որովհետեւ մթնոլորտը մուկ է՝ իր Հերասներուն գոյներուն պէս: Պզտիկ անօրէնութիւնները Հոս կը վերածուին վայրագութիւններու, կողպուտի եւ մարդասպանութեան: Յիշենք Չէպթըր Հայմսի Խնձար-

նրան Թագուհին վէպը, ուր հեղինակը մեզ կ'ապրեցնէ Հարլէմի սեւամորթներուն հետ :

Իրապաշտութեան հոտնքին կը պատկանի Թէլըսի Ուիլիամսի հետեւորդը՝ Արթուր Միլլէր : Որ՝ Փերնզակի մը մաւր, Տեսարան մը կ'առնարքէմ թատերականերուն մէջ մեզի կու տայ ամերիկեան ընկերութեան մէջ ողբերգական պատկերը, հոն խտանելով նաեւ քաղաքական եւ ընկերային կծու քննադատութիւններ :

Հիւմորի մարզիմ մէջ

Յորնթըն Վիլտէր արուեստագէտ զրոյզ մըն է եւ կը պատկանի եւրոպական աւանդութեան : Հակառակ անոր որ Վիլտըր կը պատկանի Համալսարանական դաստիարակին, եւ իր երգիծանքը ունի շատ նուրբ երանգներ, գործերը մեծ յաջողութիւններ կ'արձանագրեն Պրոտվէյի թատերասրահներուն մէջ : Նոյնպէս արուեստագէտ երգիծաբաններ են Տոնալտ Վուլֆ, ձոն Ըփտայք եւ Վլյուսիմիը Նապոլոն : Հիւմորը միջոց մըն է խուսափելու ներկայ իրականութեան տգեղութիւններէն : Ան ծնունդ կ'առնէ թատրոններու քուլիսներուն մէջ, խմբագրատուններուն մէջ եւ նաեւ քլիւպներու եւ քապարէներու գիշերային կեանքին մէջ :

«Նիւ Եորքըր» պարբերականին մէջ լոյս տեսած են ամերիկեան երգիծաբանութեան լաւագոյն գործերը : Ամերիկեան երգիծաբանութիւնը խառնուրդ մըն է իրլանդական յոռեսես հեղինակին, եւ անկլո-սաքսոն պաղարիւնութեան : Այս ճիւղին լաւագոյն ներկայացուցիչները կարելի է նկատել հետեւեալները . ձէյմս Թուրպըր, Մէրի Մաք Քարթի եւ Մարիան Մուր, որոնք նոյն ասան ճարտար գծագրիչներ են :

Թափառաշրջիկները

Այս բոլորէն դուրս, ծնած է նոր սերունդ մը, որ չէ տեսած զէնքերու շալիւնը եւ թնդանօթներու որոտումը, այլ ապրած է Քորէյայի պատերազմին քաղաքական եւ արհիւրմաթիք պարտութիւնը : Այս սերունդը խոյս կու տայ քաղաք-

ներէն, համտեսելէ յետոյ ալքոլը, թմրեցուցիչները . ան խոյս կու տայ քաղքենի բարոյականը նկատելով տեսակ մը կեղծաստութիւն եւ կը քալէ երկրին տնվերջանալի համբաներուն վրայ, Թաղաղականէն մինչեւ Ատլանտեան ովկիանոսը եւ Հիւսիսէն Հարաւ :

Ասոնց կեդրոնատեղին է Սան-Յրանսիսքո քաղաքը : Անոր մտանկներուն եւ մութ կապելաններուն մէջ կարգացուցած են Պիք սերունդին առաջին բանաստեղծութիւնները : Պիթնիք բանաստեղծութիւնը ըմբռնողութիւնը ըմբռնողութեան գործերուն դէմ, որոնք կ'ապրին ապահով լիցուն զբոսաններով : Պիթ բանաստեղծութիւնը օրէնքի չի հրպատակիր, շունի ճշգրտութիւն, կը դործածէ աղտոտ բառեր, բարոյական ըմբռնումներ շունի, կը գովաբանէ քրիստոնէական սկզբունքները եւ կը յարգէ հինաու փիլիսոփայութիւնը : Ասոնք գորաւոր ազդեցութեան տակ կը գտնուին աթոմական ուււմքին, Ատոտածաշունչին եւ հոգեբանութեան : Կը փնտռեն հիմունքները անիմաստ բարոյականի մը եւ կը նանան ապրիլ զայն՝ շնորհիւ աղմուկին, արագութեան, բարեկամութեան, ալքոլի եւ մարիխուանայի : Եւ Սան-Յրանսիսքոյի նէոններով վիրաւորուած մշուշին մէջ՝ այս սերունդը կը վերակենդանացնէ Մէլլիլի եւ Վիթմանի վիպապաշտութիւնը, որ երբեք չի մեռնի ամերիկացի երիտասարդին հոգիին մէջ :

Այս նոր-իրապաշտ սերունդին լաւագոյն ներկայացուցիչը կը կոչուի ձէք Քըրուէք, որուն Վալլիսիմ բեմադրուած է պատաստի վրայ, իբր հերոս ունենալով ձէյմս Տիւրը : Այս հեղինակին Համար, ինչպէս նաեւ Ձէքիկէթի եւ Ալէն Կուինզպէրկի համար, աշխարհի երեսը չկայ իտէալ մը, որ արժանի ըլլայ մարդէ հակին զոհողութեան : Ուստի կ'ապրին ընկերութեան լուսանցքին վրայ, եւ յարատեւ ըմբռնութեան մէջ են, բայց առանց նպատակի : Ծնունդ տուած են սու Պլուզոններու շուարած սերունդին :

Կեանքին դէմ այս ըմբոստացումը ամերիկեան դրականութեան աւանդութիւններէն մէկն է: Ատոր աւալին վկաներէն մէկը Փոն է, աւելի իր կեանքով, քան իր դործով, ինչպէս ձէք Լոնտըն կամ Նարթ Գրէն: Յաւիտենական մահընթացութիւն մը եւ տեղատուութիւն մը, ուր նուրբ եւ խորհրդաւոր բանատեղծներու կը յաջորդէ ըմբոստացածներու սերունդ մը, ընտպաշտութեան՝ յիպպաշտութիւնը:

Այսպէս, ալիքները իրարու կը յաջորդեն, զպրոցները կը ծնին ու կը շարունակեն իրենց զոյութիւնը կողք կողքի: Այս թուրքահին մէջ շատ դժուար է գանազանել իսկական արժէքները, համոզումները: Արտվհետեւ, այդ երկրին մէջ արուեստի ամէնէն յառաջագէմ գաղտնարները անմիջապէս կ'օգտագործուին շահագիտական նպատակներու համար՝ սինեմայի, թերթիկիցիսի եւ աստիոյի տէրերուն կողմէ: Եւստ մը պիտի սերունդիմ պատկանող գրողներ կը պա-

հեն միայն արտաքին նշանները իրենց ինքնատպութեան:

Ըստ երիտասարդ ջննադատ ձոն Ալտրիճի, ներկայիս մեծ շիրթ մը կը տիրէ միտքերու մէջ: Ատոր պատճառները բազմաթիւ են. պատերազմի մթնոլորտին շարունակութիւնը, ընկերային անարդարութիւն ստեղծող տնտեսական յերեւը, ցեղային պայքարը եւ հաւատքի պակասը: Մեծ գրականութիւնը կը շարունակուի շնորհիւ քանի մը բողոքողներու: Ասոնք քաշուած իրենց քարայրներուն մէջ, կամ անտաւաներու խորը եւ կամ ազատական դասձ համալսարաններու եւ դոյլճներու անդորրութեան մէջ՝ բարձր կը պահեն մտքին իրաւունքները այս բարբարոս ովկիանոսին մէջ: Նոր միջին դար մը պիտի ծնի անկասկած այս պատերազմներու եւ տտելութիւններու ժամանակաշրջանէն, այս մեծ անձկութենէն, որուն մէջ կ'ապրի ամբողջ Արեւմուտքը, շրտելու համար համայն աշխարհը:

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԻՈՒՏԵԱՆ



### «ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ»...

#### ԹՂԹԻ ՎՐԱՅ

( Հայաստանում երեսուցակուսիներին տարի )

Գ.

Հայ-վրացական պատմամշակութային յարաբերությունների արդի խորհրդահայ ուսումնասիրությունը եւ այն զբարեկամութեան» նշանախօսքերին ծանուցնելու միտումը բաւական տարբեր բնոյթ է կրում: Եթէ Հայ-աղբերջանական յարաբերությունները հրապարակւող գրականութեան մէջ ներկայացւում են գերազանցապէս քարոզչական, անցեալը քմահաճօրէն զվերախմաստութեամբ ուղղութեամբ կամ մշակութային մասնակի ներթափանցումները ճշդելու դիտարկութեամբ, Հայ-վրացական յարաբերությունների լուսաբանումը բացառապէս դրուած է գիտական հողի վերայ: Հայ-վրացական բարեկամութեան մասին համեմատաբար քիչ է խօսուած եւ զբաղուած, չհաշուած, անշուշտ, յոբելեանական աւիթները եւ լրագրական-պաշտօնական արտայայտությունները: Ժիշդ է, համապատասխան, ընդհանրապէս անցեալ կապերին վերաբերող աշխատություններում եւ շատ մեծ տեղ է տրուած «բարեկամութեան» նիւթին ու ամէն անգամ այդ աշխատությունները սկսւում եւ աւարտւում են Համարեայ նոյն կաղապարում արտայայտություններով (զգարերի խորքերից է գայիս երկու եղբայրական ժողովուրդների բարեկամութեանը), բայց եւ այնպէս ներանց բովանդակությունը հիւսուած է իրական փաստերից:

Հայ-վրացական պատմական յարաբերություններն ուսումնասիրելիս կամայական յօրինումների կարիք չի զգաց-

ւում, որովհետեւ բուն փաստերը ինքնին առատ են: Մնում է միայն դրանք դասուորել եւ մեկնարանել: Եթէ ազատ մեկնարանումների համար խոչընդոտները շատ են, տրամադրելի փաստերը դիտականօրէն դասուորելու համար որեւէ մնայուն արգելք չկայ: Ուստի եւ հիմնականում վերջին ուղղութեամբ է ընթանում Հայ-վրացական պատմական յարաբերությունների ուսումնասիրութեան գործը:

Ամէնից առաջ պէտք է ընդգծել, որ Հայ-վրացական յարաբերություններ, էլ չենք ասում բարեկամութեան, արդի անմխիթար վիճակը պատմական իրթին հանկուկներից մէկն է: Երբ օտ-վրացացը պնդւում է, թէ երկու հարեւան ժողովուրդները դարեր ու դարեր շարունակ իսկապէս բարի դրացիներ են եղել եւ պատմութեանը յայտնի չէ Հայ-վրացական քիչ թէ շատ տեւական ու նշանակալի հակամարտութիւն, - դա դեղեցիկ խօսքի համար չի աւուում, իսկապէս այդպէս է եղել եւ այն ժամանակ, երբ Հայաստանը աչքի ընկնող ու նոյնիսկ համեմատաբար հզօր պետություն էր, իսկ Վրաստանը տակաւին աննրշան կազմաւորում, եւ թէ այն ժամանակ, երբ Հայ պետականութիւնը վերացուած ու Հայ ժողովուրդը օտարների իշխանութեան տակ էր, իսկ Վրաստանը՝ կայսրութեան համազօր հռչակուած պետություն: Ուրեմն, քաղաքական կշռի վերիվայրումներից անկախ, գոյութիւն է ունեցել փոխադարձ բարեկամութեան փաստը:

Բայց կողմասը Ռուսաստանին միաց-

ւելուց մի քանի տասնամեակ անց աստիճանաբար դուրս բարձրացրեց հայ վրացական անհիմն եւ անհասկանալի հակամարտութիւնը, որը տեսւմ է մինչեւ օրերս: Այդ ցաւալի իրողութիւնը շատ է դրաղեցրել եւ մտահոգել երկու ժողովուրդների լուսամիտ եւ հայրենասէր տարրերին, իրականութիւնը բացատրելու գանազան փորձեր են եղել, որոնք, ըստ երեւոյթին, սպարդին են մնացել: Այդ նիւթի շուրջ ահազին գրականութիւն կայ, որը ստեղծուել է նախախորհրդային ժամանակաշրջանում եւ ապա, հայերիս ժօռ, Սփիւռքում: 20-ական թուականների «ՀԱՅՐԵՆԻՔ» Ամսագրում տպուած փաստաւից ուսումնասիրութիւնները մի ամբողջ դասընթաց կարող են կազմել: Հարցի ճինական ուսումնասիրութեան ստպարէզում իրենց խօսքն են տեսլ եւ հայ կոմունիստ մտաւորականները: Նշանաւոր Բագրատ Բորեանը իր ուսերէն երկհատոր հոշակաւոր աշխատութեան մէջ ահազին տեղ է տաւել եւ հայ վրացական նորագոյն հակամարտութեան պատճառները ճննելուն: Եւ առհասարակ կոմունիստական դրականութեան մէջ այն դրոյթն է արմատաւորուել, թէ հայ վրացական կոչւող հակամարտութիւնը իրականում հակամարտութիւն էր վրացական քայքայւող ու տնտեսական հիմքեր որոնող ազնուականութեան եւ հայ վերլնթաց դըրամատէրերի միջեւ, որոնք իրենց գաւնակարգային հակամարտութեանը վերադրում էին համազգային բովանդակութիւն, Սակայն եթէ դա այդպէս լինէր, ապա 1920 թուից յետոյ, երբ ոչ վրացի տիրող ազնուական, ոչ էլ հայ տիրող գրամատէր մնաց երկրում, հակամարտութիւնը ինքնին պիտի վերանար: Մինչդեռ նա վերանալու փոխարէն աւելի բարրաբուեց կոմունիստական իշխանութեան պայմաններում: Ուրեմն հարցը մնում է անբացատրելի, գոնէ մինչեւ հիմա:

Հայ վրացական պատմա-մշակութային յարաբերութիւնների ուսումնասիրութեամբ զբաղուած են եւ հայ եւ թէ

վրացի պատմաբաններ, լեզուաբաններ, գրականագէտներ, գրողներ եւ այլն: Այդ ստպարէզում վերջին ժամանակներս դիտական անձնակազմը աստիճանաբար ստուարանում է, երեւան են գալիս նորանոր անուններ եւ դիտական հանդէսներում եւ թէ առանձին հրատարակութիւններում: Այստեղ տեղին է նշել, որ հայ վրացական պատմական յարաբերութիւնների ուսումնասիրութեան եւ հայ վրացական բարեկամութեան գաղափարը անընդհատ արժարժեւոր ապարէզում վրացիների կողմից հանդէս եկողների շարքում, եւ անցեալում եւ թէ ներկայումս, նկատելի դեր են խաղում նրանք, որոնք ծագումով կապուած են հայութեանը, ինչ որ գործնականում նշանակում է, որ նրանց մայրերը հայրուհիներ են եղել կամ են: Սա անկարելոր պարագայ չէ՝ որոշ հոգեբանական հանգամանքներ հասկանալու համար: Հայ վրացական բարեկամութեան անկեղծ ջատագոյնների շարքում, ուղղակի տարօրինակ է, մասների վրայ կարելի է հաշուել այսպէս ասած զգուտ վրացիներին: Ոստքը սկանաւոր մարդկանց մասին է, անշուշտ որոնց առաջին շարքում է գտնուում վրաց անսանի ու հայրենասէր վրիպասան Կոնստանտինէ Գամսախորդիան:

Հայ վրացական պատմական յարաբերութիւնների դիտական ուսումնասիրութեան ստպարէզում հայերի կողմից մեծագոյն վաստակն ունի հանդուցեալ փրոֆեսոր Լեւոն Մելիքեթ-Բեկը: Միշտ սպրելով թրիլիտում՝ Մելիքեթ-Բեկը հայկական դիտական մամուլի մնացուն աշխատակիցներէն էր: Բազմաթիւ են նաեւ նրա առանձին աշխատութիւնները: Մասնաւոր արժէք ունի «ՎՐԱՅ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ» եռահատոր գիրքը (Առաջին հատորը լոյս է տեսել Երեւանում 1934 թուին, Երկրորդը 1936 թուին, իսկ Երրորդը՝ 1935 թուին): Վերջին տարիներս լոյս տեսաւ, յետմահու, Մելիքեթ-Բեկի «Հայ գրողները եւ վրաստանը» գիրքը: Մելիքեթ-Բեկը լինելով նախա-

խորհրդային կոփումների վաւերական գիտնական, անսակարկելի հետեւողականութեամբ զործեց իր ասպարէզում եւ պատմադիտական միտքը իսկապէս 'հարստացրեց' իր դերը բարեխղճօրէն կատարելով: Դրանով նա, անշուշտ, իր սեփական քարը դրեց պալիք բարեկամութեան շէնքի կառուցման զործում: Նրանից յետոյ Հանգէս եկած գիտնականները հիմնականում ընթանում են նոյն անշեղ ուղղութեամբ:

Տասնամեակներ շարունակ Մելիք-սէթ-բեկը գրեթէ միակն էր իր ասպարէզում, որպէս կարկառուն դէմք, եւ ինքնատիպ էր իր ուսումնասիրութիւնների բնոյթով: Վերջին տասնամեակում երեւան եկած հեղինակները հարցի հանդէպ ցուցաբերած իրենց մտեցումով ակամայից միշտ էլ յիշեցնում են Հանգուցեալ փրոֆեսորին: Այսինքն, շեշտը դրում է պատմական դէպքերն ու իրողութիւնները ըստ էութեան ներկայացնելու վրայ եւ քարոզչական ճամբարակութիւններ համարեայ թէ չեն նկատում: Այսպէս, Երեւանի Համալսարանի դասախօսներից Վաչէ Նալբանդեանի պրիւն է պատկանում «Թրիլիսին հայ մատենագրութեան մէջ. սկզբից մինչեւ 18-րդ դարի վերջը» աշխատութիւնը (1958 թ.): Դա փաստելով յազեցած մի գրքոյ է, որի օգտակարութիւնը պայմանաւորուած չէ ժամանակով ու տարածութեամբ: Ձեւն անպատ (զբաբար աղբիւրներից բերուած քաղուածքների ու աշխարհաբար թարգմանութիւնների զուգահեռ զետեղումով) յիշեցնում է Յակոբ Մանանդեանին: Այդպիսի գրքեր անպայման կարող են նպաստել եւ գիտութեան զարգացմանը եւ թէ ժողովուրդների իրական բարեկամութեանը:

Շարազրանքի գիտականութեամբ աչքի են ընկնում ոչ միայն հետաւոր պատմական անցեալին վերաբերող, այլև վերջին 100-ամեակին վերաբերող աշխատութիւնները, թէեւ վերջին գէպքում գիտական պատշաճ մակարդակի վրայ մնալը անհամեմատ մեծ դժուար-

ութիւնների հետ է կապուած: Տեղրան Կարապետեանը իր «Վրաց դրական միտքը Հայաստանի եւ Հայերի մասին» (1962 թ.) գրքոյկում ջանում է ամփոփ ձեւով ներկայացնել, թէ ինչ կայ առհասարակ վրաց գրականութեան մէջ արձանագրուած Հայաստանի եւ Հայերի մասին: Ակում է 11-րդ դարից, «Բարթիւն Յիւզիւրեան» նշանաւոր վրաց տարիգրութեան մէջ պատմիչ Լէոնտի Մրովելու մտքբաժ առասպելով, Հայերի ու վրացիների նախահայրեր Հայոսի ու Գարթիւսի հարազատ եղբայրներ լինելու մասին, եւ աւարտում մեր օրերով: Թէեւ գրքոյկում շատ են եւ ընդհանուր նշանախօսքերի վերակրկնութիւնները, ոչինչ չապացուցող մերկ յայտարարութիւնները, այնուամենայնիւ հիմնական հիւսուածքը փաստերի վրայ է յենում, որից ամէն մարդ կարող է սեփական եզրակացութեան յանգել:

Հայ-վրացական պատմական կապերի ուսումնասիրութեան զործում այժմ բաւական աչքի ընկնող եռանդ է ցուցաբերում Միքայէլ Զուարեանը: Դրա ասպոցոյցն է նրա «Ուրուազներ Հայ-վրաց դրական-կուլտուրական կապերի պատմութեան. 19-20 դ. դ.» գիրքը: Հեղինակը յայտնում է, թէ ևստեղիս աւարտուած չենք համարում մեր ուսումնասիրութիւնը, քանի դեռ այն չի կրում «Հայ-վրաց ժողովուրդների զուրկան-կուլտուրական կապերի պատմութիւն» վերնագիրը եւ չի ընդգրկում սկզբից մինչեւ մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Դրքին կցուած «Համառոտ բիրիոգրաֆիան» վկայում է, որ Զուարեանը քրտնաջան աշխատանքի է լծուած՝ իր նպատակին հասնելու համար: Զուարեանի այդ գիրքն էլ նիւթը գիտականօրէն ներկայացնելու ակնյայտ ճիշդ է: Այնտեղ եւս կան լուսանկարներ եւ փաստաթղթերի պատճեններ: Բայց դրանք չեն ներդրուած արհեստական ինչ-որ զուգահեռներ յուշելու միտումով, այլ պարզապէս բնականօրէն գրքին յատուկ բնականօրէն պատկերազարդումներ են, որոնցից գիրքը շահում է մի-

այն, այլ ոչ թէ տարօրինակ տպաւորութիւն թողնում:

Զուարեանք իր զբըմ ոչ միայն առատ փաստական նիւթ է ներկայացնում, այլևս ջանում է բացատրել պատմական երեւոյթները, գնահատել այս կամ այն փաստը: Նա եւս յիշատակում է, որ «Հայ եւ վրաց ժողովուրդների դարաւոր բարեկամութիւնը լուրջ խոչընդոտների է հանդիպում անցեալ դարի 80-ական թուականներից սկսած», կրկնում է ընթացիկ զարողչական բացատրութիւնները, բայց նաեւ չի վարանում իր խորհրդածութիւնները շարադրել: Ի հարկ է, գրականագիտական աշխատութիւնից չի կարելի սպասել այն, ինչ որ հասարակագիտական ուսումնասիրութիւններում պէտք է քննութեան առնուի, որպէսիք առայժմ չկան: Զուարեանք երկուր կանգ է առնում յատկապէս գրական կապերի վրայ: Նա թէեւ համոզւած է, թէ «մինչև սովետական կարգեր հաստատուելը, Հայ եւ վրաց ժողովուրդների գրական յարաբերութիւնների մէջ բացակայել է ծրարային աշխատանքն ու հետևողականութիւնը», եւ հաստատիացնում է, թէ ինչ որ հնարաւոր չէր անել անցեալում, իբր «հնարաւոր դարձաւ միայն սովետական կարգերի հաստատման շնորհիւ», այնուամենայնիւ եզրակացնում է, որ այդ ապարդիւցում «զեռ ջիշ բան է արուած»: Ուշադրաւ է, որ աւելի քան 100 տարի է, որ Հայ եւ վրացի մտաւորականները ամէն անգամ, երբ խօսք է լինում Հայ-վրացական գրական-մշակութային կապերը սերտացնելու մասին, միշտ նոյն հաստատումն են անում. «զեռ ջիշ բան է արուած»: Ուրեմն, պարզում է, որ խորհրդային իշխանութեան 40 տարում եւս «զեռ ջիշ բան է արուած»: Որոշ լատիով գրական քալ եղաւ «Վրաց գրականութեան ընտիր էջեր» ժողովածուի հրատարակութիւնը, 650 մեծագիր էջերով (1961 թ.), բայց ի սկզբանէ հարեւան, մշակութապէս ընդհանուր ամամբ համագոր երկու ժողովուրդների համար դա ջիշ է, անպայման: Սովորաբար բա-

րեկամութեան հաշուին են գրանցում նաեւ Հայ բանաստեղծների Վրաստանին նուիրուած ու վրաց բանաստեղծների Հայաստանին նուիրուած ոտանաւորները: Այդ ոտանաւորներն, անուշտ, որոշ բան նշանակում են, բայց ոչ այնքան, որքան վերագրում են նրանց: Այդ ասպարէզում հազիւ թէ ցոյց տրուին մի քանի իսկապէս յաջողուած, որտով գրուած բանաստեղծութիւններ, տեւելու սահմանուած: Իրանք ընդհանրապէս անսնուն պատուէրով թխուած յանպատրաստից տողեր են, պարզամիտ գովքեր, առանց իսկական ներշնչման եւ լուրջ նըպատակաւայութեան:

Վերջին ժամանակներս Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի «ՏՏՆԵ-ԿԼԳԻՐ» ամսացրում գետեղուած ներթերը (Պարոյր Մուրատեան «Հայ-վրացական գրական-մշակութային փոխյարաբերութիւնների սրտմութիւնից. ըսկրգրից մինչև Ս. Գրոց թարգմանութիւնը» (թիւ 10, 1964 թ.), Վ. Հ. Վարդանեան «Հայ-վրացական յարաբերութիւնները 7-րդ դարի նախօրեակին» (թիւ 11, 1964 թ.)) - ցոյց են տալիս, որ Հայ-վրացական յարաբերութիւնների ուսումնասիրութեան ասպարէզում առայժմ գերիշխում է գիտական տարրը: Զուտ զարողչական բնոյթի աշխատութիւններ տակաւին չկան: Քարոզչութիւնը ծաւալում է ընթացիկ մամուլի սիւնակներում միայն: «Նարեկամութեան» մասին, որպէս կանոն, յաճախ ճառում են նրանք, ովքեր կամ ոչ առհասարակ պատկերացում ունեն յարեկամութեան մասին եւ ոչ էլ հաստատում են այդ կարգի խօսակցութիւններին: Մինչդեռ իսկական յարեկամութեան գործին նպաստում են նըրանք, ովքեր իրենց վաւերական գիտական ուսումնասիրութիւններով լուսաբանում են անցեալը եւ ջանում նախադրեալներ ստեղծել դալիք հնարաւոր յարեկամութեան համար: Քանզի եթէ լոյսը ի վիճակի չլինի նպաստել մարդկանց ու ժողովուրդների միջեւ յարեկամութեան հաստատելուն, իսկապէս անուշտ եւս գուրկ է այդ կարողութիւնից:

Ծ.

«Ժողովուրդների բարեկամութիւն» նշանախօսքի արծարծումը ընդհանուր է ամբողջ Խորհրդային Միութեան համար եւ ըստ էութեան կրում է վերացական-«սկզբունքային» բնոյթ: Այդ նշանախօսքով են երգւում անխորհրդ քաղաքացիական պատերազմի անուղից խօսող քարոզչները, անկախ նրանից, թէ իրականում ինչ-ի՞նչ կայ այդ մասին ճշտելու համար: Ամէն մի այս կամ այն առանձին ժողովրդի ու ռուս ժողովրդի բարեկամութիւնը անվիճելի է համարւում: Առանձին-առանձին ժողովուրդների մէջեւ եւ բարեկամութիւնը պարտադիր է դառնում: Իսկ եւ այնպէս սովորաբար նախապատուութիւն է տրւում այն պարագաներին, երբ այդ մասին խօսելու որեւէ շօշափելի առիթ կայ: Հայաստան պատմական յարաբերութիւնները, անկախ իրենց բնոյթից, իրական են եւ մնում է միայն «յարաբերութիւն», «կապ» բառերի փոխարէն պէ՛տք է արարեկամութիւնը» եւ ահա պատրանքը պատրաստ է: Նոյնը եւ հարեւան ժողովուրդների՝ աղբրեջանացիների ու վրացիների նկատմամբ: Իսկ քանի որ տարրական ողջմտութեան դէմ է անձանթ ժողովուրդների պատմական բարեկամութեան մասին» խօսելը, ապա այդպիսի դէպքերում շեղուղ զբերում է ներկայի խորուղ լինելութեան եւ գալիք «ճեղանկարների» վրայ:

Սակայն Խորհրդային Միութեան մէջ կայ մի ժողովուրդ, որը թէեւ հեռու է Հայաստանից, բայց պատմական բաւականաչափ տուեաններ է տալիս՝ բարեկամութեան հարց առաջ քաշելու: Դա ուկրաինական ժողովուրդն է: Վերջին տասնամեակում առանձին շեղուղ ասացել Հայ-ուկրաինական բարեկամութեան հարցը: Դրա համար նախ հիմք է ծառայում պատմութիւնը: Այնուամենայնիւ տարակոյս չկայ, որ դեր են խաղում նաեւ հոգեբանական եւ այլ հանգամանքներ: Պէտք է ընդգծել, որ խորհրդային ռուս ազգերի մտաւորականութեան մէջ Հայաստանի նկատմամբ

ցուցտրեմ իրենց մտանաւոր հետաքրքրութեամբ ու համակրանքով աչքի են ընկնում ուկրաինացի մտաւորականները եւ գրողները, թէ քանակով եւ թէ անկեղծութեամբ: Եւ սուհասարակ ուղղակի կարելի է ասել, որ այդ բոլոր ազգերի շարքում ուկրաինացիներն այսօր իրենց ազգային բնասրութեամբ համեմատաբար աւելի մօտ են Հայերին, քան ուրիշ որեւէ ազգ: Ընդէ է, կայ Հիմնական տարբերութիւն, այն, որ Հայաստանը Հարաւային երկիր է, իսկ Ուկրաինան Հիւսիսային: Դա անպայման իր դրոշմն է դրել երկու ազգերի պատմութեան եւ խառնուածքի վրայ: Իսկ եթէ զգուշութեամբ մօտենանք հարցին եւ նախօրօք հաշուի առնենք, որ ամէն մի ընդհանրացում ինքնին պայմանական է, կարող ենք ասել, որ Հայերը հարաւի ուկրաինացիներն են, իսկ ուկրաինացիները՝ Հիւսիսի Հայերը, իրենց ստեղծագործական աւելում, ինքնատիպութեամբ, դրոշման հակամեծքով, ստիպանութեամբ եւ կամքի ուժով: Այստեղ աւելի խորանալու հարկ չկայ: Վերելի ընդհանուր կարգի ընդդժուժ արուեստ ստեղծում համար, որ Հայ-ուկրաինական փոխադարձ մերձեցումը ունի նաեւ ըստ երեւոյթին հոյեբանական հիմք, որը թէեւ այժմ արտայայտւում է գլխաւորապէս մտաւորականութեան ոլորտում, բայց միատեղանակ արտացոլում է եւ ժողովրդական բնասրութեան որոշակի մակարդակը: Հայ-ուկրաինական բարեկամութեան մասին այժմ անկաշկանդ հելտութեամբ է խօսւում նաեւ այն պատճառով, որ այդ երկու ժողովուրդները իրար հետ քաղաքական Հայիւններ չունեն եւ կարելի է ուզածի չափ արծարծել այդ հարցը՝ առանց դուրս գալու անկեղծութեան ոլորտից: Քանզի թէեւ այդ բարեկամութիւնը «պատմական» է եւ որեւէ զոհողութիւն չի պահանջում ոչ մէկից, բայց զոհէ սուտ ու կեղծ չէ:

Հայ-ուկրաինական բարեկամութիւնը արծարծելու Հիմնական աստղծր պատմական է: Յայտնի է, որ իր ժամա-



նակ արեւելեան անապատային վայրերի բազմութիւններէ ճնշման տակ հայոց պետականութիւնը վերացուելուց յետոյ՝ հայ զանգուածներէ մի զվալի հատուած բռնեց զաղթի ճանապարհը դէպի հեռաւոր երկրներ: Հայերի մի բազմամարդ խումբ տեղաւորուեց Ղրիմում, իսկ այնտեղից էլ մերձակայ երկրներում: Փամասնակի ընթացքում քաղաքական վերէվայրումների հետեւանքով փոխուել է հայաբնակ վայրերի աշխարհագրական պատկանելիութիւնը. այնպէս որ մենք գիտենք, որ եղիլ են լեհահայեր, հունազարահայեր, ուսմինահայեր: Բայց փաստորէն այդ հայերը մեծամասնաբար ապրել են բուն ուկրաինական Գալիցիայում և չընկալաբար: Այնպէս որ ճիշդ կը լինէր ասել, որ զրեթէ բոլորն էլ աւելի կամ պակաս չափով ուկրաինահայեր են եղել, բայց որովհետեւ ուկրաինական պետութիւն չկար, ժողովրդեան է արուել ճէնց «Ուկրաինա» արտայայտուելները, յարակից ստորոգելներով:

Հայերը գեոեւս 11-րդ դարում բընակութիւն են հաստատել Վիիեւան Ռուսիային մայրաքաղաք Կիւեւում, իսկ այնուհետեւ բազմամարդ զազութներ հիմնել Լեովում, Կամենեց-Պոդոլսկում եւ այլուրեք: Այդ զազութների մասին իր ժամանակին հարուստ գրականութիւն է կուտակուել: Բայց Հայաստանում մինչեւ 1939 թուականը այդ զազութները պատմական գոյութիւնը յայտնի էր միայն օսկաւաթիւ մասնագէտներին: Երբ պատերազմական դէպքերի քերուածով Արեւմտեան Ուկրաինան եւս միացուեց բուն Ուկրաինային, թերթերում սկսեցին տեղեկութիւններ հրծուլ Լեովի Հայոց Մայր Եկեղեցու եւ այլնի մասին, ճանապարհ բացելով զալիք պատմական հետախուզումների համար: Սակայն, ինչպէս երեւում է, հայ-ուկրաինական պատմական կապերի գիտական լուրջ եւ հետեւողական ուսումնասիրութիւնը յետստալինեան տասնամեակի արդիւնք է: Վերջին տասը տարում է, որ միանգամից ահազին գործ կատարուեց, աւելի ճիշդ՝ մի հեռանկարներ խոստացող գործի սկիզբ դրուեց:

Նախապատրաստական տլխատանքներից յետոյ 1959 թուի Հոկտեմբերին Երեւանում անցկացուեց շրտօրեայ գիտական նստաչըջան՝ Հայաստանի և Ուկրաինայի Գիտութիւնների ակադեմիաների ու Մատենադարանի նախաձեռնութեամբ: Այնտեղ կարդացուեցին երկու տասնեակի մօտեցող զեկուցումներ, հազորդումներ: Տպուեց գիտական նստաչըջանի նիւթերի ժողովածուն (1961 թ.) «Ուկրաինական եւ հայ ժողովուրդների պատմական կապերը եւ բարեկամութիւնը» վերնագրով: Հայ եւ ուկրաինացի գիտնականների այդ համատեղ նախաձեռնութիւնը նշանակալի իրադարձութիւն հանդիսացաւ եւ գիտական մամուլում աւելի շատացաւ Գալիցիայի երբեմնի հայութեան կեանքը ներկայացնող ուսումնասիրութիւնների թիւը: Յիշեալ նստաչըջանի զեկուցումները բոլորն էլ համարժէք չէին. բաւական թիւ էին կազմում ընթացիկ քարոզչական կրկնութիւնները: Բայց եւ այնպէս զուտ գիտական բաժինն էլ իր տեսակարար կշիռով աննշան չէր: Որ մինչեւ այդ թուականը այնքան էլ շատ բան չէր արուել տուեալ ասպարէզում, երեւում է նաեւ ժողովածուի նախարանից: Այնտեղ ասուած է. «Հայկական ՄԱԻ Գիտութիւնների ակադեմիայի հասարակական գիտութիւնների բաժանմունքի ինտերսուտները հասցրել են շատ բան անել յատկապէս հայ-ուս յարաբերութիւնների հետազօտման գըծով: Բայց մինչեւ վերջին տարիներս շատ թիշ բան է արուել Ուկրաինայի եւ ուկրաինական ժողովրդի հետ հայերի ունեցած կապերը ուսումնասիրելու գըծով, թէեւ այդ հարցի այժմէականութիւնը ակնյայտ է»: (1965 թուի սկզբին Ուկրաինայում տպուեց Հայ-ուկրաինական երկրորդ գիտական նստաչըջանի նիւթերը պարունակող ժողովածուն, որը կայացել էր Լեովում եւ Կիւեւում):

Գալիցիայի եւ չընկալաբի Հայոց պատմութեան ուսումնասիրութեան գործում հայ գիտնականներին պատեհ առիթով սժանդակում են նաեւ ուսմինա-

ցի, հունդարացի եւ լեւ առանձին գիտնականներ: Բայց աշխատանքին հիմնականում մասնակցում են ուկրաինացի գիտնականները (մանաւանդ Լեովում), գործը կիսելով: Գործով զբաղւում են ոչ թէ սոսկ առանձին մարդիկ, այլ գիտական ամբողջ հիմնարկութիւններ: Գիտական կապերը այնքան սերտացան, որ Հայաստանի Ակադեմիան 1962 թուին հրատարակեց Եւրոսյաւ Դաշկեւիչի «Ուկրաինայի հայ գաղութները 18-19րդ դարերի աղբիւրներում եւ ուսումնասիրութիւններում» ռուսերէն պատմագիտական ակնարկը (176 էջ): Հեղինակի հաւաստիացմամբ՝ դա դեռ իր ծրագրած աւելի ծաւալուն աշխատութեան սկիզբն է եւ պիտի շարունակուի: Դաշկեւիչը լայնօրէն իրազեկ է այդ նիւթի շուրջ ստեղծուած հին եւ նոր գրականութեանը՝ զանազան լիցուներով: Բայց եւ այնպէս դժգոհ է գործի վիճակից: Նա գըրում է: «Որքան էլ սա տարօրինակ լինի, մինչեւ հիմա աշխատանք չի տարուել Ուկրաինայի հայ գաղութների պատմութեան գիտական ներածութիւն կազմելու վրայ, մի ներածութիւն, որտեղ արուեստը լինէր հիմնական աղբիւրների ու հետազոտութիւնների բնութագրութիւնը եւ որը ուղեցոյց լինէր տուեալ հարցին նըւիրումը մեծ քանակութեամբ պատմական աշխատանքների շարքում»: Դաշկեւիչը իր պաշտօնակիցների հետ միասին անպայման արդիւնաւէտ գործ է կատարում: (Նրա փոքրածաւալ յօդուածները կտրելի է տեսնել նաեւ Փարիզի հայագիտական հանդէսի անդրանիկ համարում):

Գալիցիայի եւ շրջակայ երկրամասերի երբեմնի հայ գաղութների կեանքի նկատմամբ վերջին տարիներս հետաքրքրութիւնը անընդհատ ծաւալւում է Հայաստանում: Այդ գաղութների կեանքն

ուսումնասիրում է ոչ միայն մեկուսացւած կարգով, ոչ օրդանապէս կապւում է Մայր երկրի իր ժամանակի իրադարձութիւնների հետ: Այսպէս, Վարդան Պարսամեանի նախածնունդով 1962 թուին լոյս տեսաւ «Լեւհայերի մասնակցութիւնը Դաւիթ-Բեկի ապստամբութեանը» վերնագրով գիրքը, «Նոր նիւթեր 18-րդ դարի հայ ազատագրական շարժումների վերաբերեալ» ենթավերնագրով: Ծիշոյ է, այդ գիրքը մասնագիտական սուր քննադատութեան հանդէսի» էջերում, բայց որպէս հրատարակութիւն եւ ոչ որպէս գաղափար: Քննադատները փաստաթղթերը հաւաքող Հեղինակին կշտամբեցին եւ նշեցին, որ առկայ պատմական փաստերը աւելի լուրջ լուսաբանութիւն են պահանջում, քան թէ տուեալ գրքում է արուած: Կարեւորն այն է, որ Գալիցիայի հայոց կեանքը ներկայացւում է հայրենիքի հայութեան կեանքին առնչուած ձեւով, ինչ որ ունի, անտարակոյս, սկզբունքային նշանակութիւն:

Այսպիսով, Գալիցիայի երբեմնի հայութեան դոյութիւնը այն պատմական հիմքն է, որի վրայ յենւում է հայուկրաինական բարեկամութեան այսօրուայ տակուին զուտ գիտական ու մտաւոր շարժումը: Մովորաբար դա կապւում է իշխանութեան քաղաքական նշանախօսքերին, դրում նրանց ծառայութեան ներքոյ, բայց ինքնըստինքեան արդէն ծառայելու որոշ նախադրեալներ ունի եւ նոյնիսկ տեսանելի հեռանկարներ: Աւսյժմ միայն թղթի վրայ, ինչ որ կարող է իրական բովանդակութիւն ստանալ նպատաւոր պայմաններ լինելու դէպքում:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

(Վերջը յարդգով)

**ԹՈՏՐՈՆ ԵՒ ԲԵՄՈՒԿՆ ԵՐՈՒԵՈՑ**



**ՄԱՐՍԷԼ ՄԱՐՍՈՅԻ ՀԵՏ  
ՋՐՈՅՑ ՄՆՋԱԽԱՂԻ ՄԱՍԻՆ**

Ձրա տարի տալ, մեկտալի (Pantomime) վարպետը, Մարտիլ Մարսո Պլյուսի հասարակութիւնը դրանք էր անգամ մը էր կատարելագործուած արտայայտութիւններով, որոնք անէր իտալիան են քան իտալացիները: Կը վերագտնար երկարտուն շրջապատէ մը, որու ընթացքին այցելած էր նաև: Հայաստան:

17, 18, 19 Նոյեմբերին, հաջնո Տիւ Լիպանի ընդարձակ թատերատարին մէջ, մեծ ժամով նոր յայտագրով մը կը ներկայանար Մարտիլ Մարսո՝ Փռուցիկ քոցնոյ սպան, վառարկու, Անպարսքը, Պարսքոյն, Եօքը մեղքերը, Դիմակ շինող վարպետը, Պիփ՝ որպէս ցլամարտիկ, որպէս երաժշտական բնութիւն անցնող քեփուտու, Պիփ՝ որ կ'երազէ Տոմ Ժուան մը ըլլալ, Պիփ՝ ընդամենապէս մը ընթացքին, եւ Պիփ՝ Ձիմուտը:

Հրացանի, հրացանի, հրացանի պակեր են, որ իրարու կը յաջորդեն երբ Մարտիլ Մարսո ընծ կու գայ, էր մեղքի, մարտի, գեղքի շարժումներով պատմութիւն մը պատմելու մեղքի, ԱՌԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՏԻՍՈՅԻՆ ՀՐՈՅԻՆ, ուր ցուեր կան, ցանկութիւններ, երազներ, անհուն բարութիւն, եւ կեանքին եկող հարգանքներուն շինող սնորհ աստուածը ու անհուն արժանութիւն մը:

Հրացանի՝ թէ ինչպէ՞ս կըցած է զաննի նրբին ան կեցուածքը, շարժումը, որ անմիջապէս կը հասկնան որեւէ ազգի զատկանոց համարանախն, թէ այս բովանակի վանդակի մը մէջ կը ինչպիսի մարդը, հակառակ որ բեմին վրայ ոչ մէկ վանդակ կայ: Կամ կը յազն ան պարսքոյնը անտարբեր, անխիղճ ժամերու մէջ մարդը հասարակութիւն, անհասին համար կարելու կողմ այս կամ ան հարցին, որը պարտաւանդին համար վերածուած է զինն ցանկից սաղարկի մը, որ պէտք է անտարբեր շարժումով մը զրկել յաջորդ պաշտօնակին, միւս անհանկարծ:



Մով մը զրկել յաջորդ պաշտօնակին, միւս անհանկարծ, միւս պարսքոյն:

Հրացանի պակեր՝ էր սեւ նրբին արտադրանքին, որուն թեթեւեղ կանգը կը վերակերտուէր բեմին վրայ, հակառակ շարժանակ լուսթան, կանգը էր բազմաթիւ երեսներով, նիւթակի, ու արժանեցնող կողմերով:

Եծեսքը իր բարեք, - կ'ըտէ Մարտիլ Մարսո, - անհրաժեշտ է գայն հազուայեցնող մտածում մը, անհրաժեշտ է որ ճշգրիտ ըլլայ պատկերը, որ մտածումը պիտի տայ, եւ վերջապէս անհրաժեշտ է Ո՞րք:

Մարտ կը հմայէ ճիշդ այդ սևաճմարտի-  
ւան ճշգրտութեամբ, իր յորշող եւ հանգի-  
տառեղ զբաւոյ ժամանակներով, եւ հայակաղ  
սճով, որ իրն է, անճոռանայտօրէն իրն է:

Գիրակի 20 նոյեմբերի առաւօտեան ժամը  
իննիս զնեք կը գանկեք Սէն Փորթ պահպոյի օրո-  
հը: Մէկ ժամ ետք, ժամը ճիշդ ստորին պիտի  
թոփ դէպի Զուիցերիա: Մէկ ժամ ունի արամա-  
ղըրեւիք Վաղիքի, որուն ներկայացուցչին  
հետ, կը յիշէ: զրոյց ժը ունեցած է շորս ասորի  
սասնը, 1902-ին (տ՛ս Վաղիքի, 1902, թիւ 11):

- Հանկեղա՞ք յայտարարէր, - կը հարցնէ:
- Անկապած, իր ամբողջութեան մէջ: Հո-  
յակապ՝ ինչպէս միշտ, ինչպէս անցեալ անգամ:  
Մակայն եթէ թոյլ կու տայք ձեզ ու ձեր արուես-  
տը սիրողի ժը մէկ-երկու զիտազութիւնները,  
ըսեմ:

- Անշուշտ, անշուշտ Կոլզեմ գիտեալ:
- Վժժը Անգլիոյ շատ երկար թուեցան,  
եւ իրենց յաջողող այդ գլուխ գործոցը՝ Վի-  
մակիեր շինող վարպետք եւս, կատարելազր-  
ծելու ձեր փոփոքին մէջ կործնու երկարած  
էիք: Այդ եղանակի իմ ապաւարութիւնս:
- Ո՞ր որը տեսաք ներկայացուստ:
- Հինգշաբթի, աստի՛ն զիշերը:
- Այդ է պատճառը ձեր ապաւարութեան,  
որ սխալ չէ, սակայն սխալ է ա՛յլ պատճառնե-  
րով: Եթէ Ուրբաթ, կամ Եարաթ երեկոյեան  
ներկայ ըլլայիք, բոլորովին ասորիք ապաւար-  
ութիւն պիտի ստանայիք:

Հինգշաբթի, նախ եւ ասով արահը կիտովին  
գատարկ էր: Կ'ըմբռնէք անշուշտ, թէ ի՛նչ կը  
նշանակէ ասիկա արուեստագէտին համար: Յե-  
տոյ, թիքիք պահաններ իրարու յաջողիցին,  
որոնք իազիս կըտոյթը խանդարեցին, փոխեցին:  
Օրինակի համար, ճիշդ այդ Վժժը Անգլիոյ  
զանազան մասերը խաղան ժամանակս, երբ լոյ-  
սը պէտք է մարեր եւ ես մտիքն մէջ հետմայի  
բեմէն, շմարեցաւ Կ'երեւակայէք վիճակս:

Ի՛նչ կը մտայ: Յաջողող բոլոր կատրեներուն  
մէջ ալ պրկուած բան ժը կ'ըլլայ, կըտոյթը կը  
խախտի, եւ զանազանութեան, երկարութեան  
տպաւարութիւնը կու գայ: Հարցուցէք Ուրբաթ  
եւ Եարաթ օրուայ ներկայացուցչներուն ներկայ  
գտնուողներու եւ պիտի տեսնէք, որ այդ ապա-  
ւարութիւնը ստացած չեն: Սբաւը յեցուն էր  
բերնէ բերան եւ թիքիք զփուարութիւններ լու-  
նեցանք:

- Զաւակներ Եարաթ օր տեսն, երէկ գի-  
շեր: Ուշ տանն վերադարձան, որով հարցնելու  
առիթը դեռ չունեցայ:

- Կ'ուզեմ որ անպայման հարցնէք, եւ զրէք  
ինծի տեսնց ապաւարութեան մասին:

Թուղթ ժը, մտախո մը...

Մարտի Մարտ արագ արագ կը զրէ իր  
հասցին:

- Եթէ Հինգշաբթի արահը ժամար պարագ  
էր, թերեւս պատճառը այն էր, որ ժողովրդա-  
կան լայն խաւերը ծանօթ չեն ձեր արուեստին,  
չեն զիտեր թէ մեղախաղով կարելի է այդքան  
բան արատայայտել:

- Ո՛ր, Ո՛ր թէ անծանօթ է մեղախաղի ար-  
ուեստը, այլ Վեմիւսթրիալիքս եղած չէ: Հոն  
որ թէյնգիտողը կայ, ժողովուրդը լուստանդան  
է մեղախաղի գոյութեան, եւ արուեստի արժե-  
քին ալ: Միւս կողմէ, թատերական զննադատ-  
ները մեծ զեր ունին խաղալիք, երբ երեւան բե-  
րին անհրաժեշտ ըմբռնողութիւնն ու զուրկու-  
րանք: Նիւ Երբէ մէջ, օրինակ, Վիւ Երբ  
Թայմզի թատերական զննադատը իմ մտիս իր  
զբանով, ամբողջ Ամերիկայի համար զիս զլսու-  
մէն ըբու, հանդիսատեսները զննադատի հաս-  
տատումին հետեւելով է, որ լեցուցին սրտները  
եւ ըմբռնեցին ու ըմբռնեցին մեղախաղը: Մեծ  
զննադատները կը նպատակն արուեստագէտի եր-  
կուցին, յայտնաբերումքն:

- Որքան կը յիշեմ, ձեր անցեալ տեսակցու-  
թեան ըսած էիք, թէ կը մտադրէք զերք ժը դը-  
րել մեղախաղի մասին:

- Այո՛, սակայն պզտիկ փոփոխութեամբ  
մը: Արդէն իսկ համաձայնութեան եկած եմ ա-  
մերիկեան հրատարակչական ընկերութեան մը  
հետ, Վիանքս գրելու համար: Մտանցի թէ  
միմիայն մեղախաղի մասին զերք ժը գրելը,  
պիտի հետաքրքրէր թիւով փոքր հետաքրքըր-  
ողները: Իսկ ժողովրդականացնելու համար մը-  
նախաղի արուեստը, պէտք էր լայն հասարա-  
կութեան խօսիլ այդ մասին. ասոր համար հա-  
մաձայնեցայ փոխել Երազիտ, եւ զրել իմ կեան-  
քիս մասին, ուր ընկանարք կարեւոր անգը  
կը գրաւէ մեղախաղը:

Ու յետոյ, վերջի վերջոյ արուեստագէտի  
կատարածը կեանքի իր ըմբռնումը ասուն է: Իր  
տեսածը, իր արժեքաւոր համարածը ներկայա-  
ցնելն է: Եւ ասիկա պէտք է ասլ որքան կա-  
րելի է լայն զանգուաններուն:

կանգը, եթէ պայծառ նայուածքով ժը, լայն բացուած աչքերով նայելու ըլլանք իրեն, յուսուսանցեցող բան ժըն է: Պէտք է նայել անոր կիսափակ աչքերով, զուրթի, սիրոյ նայուածքներով: պէտք է արթուն պահակ ըլլալ այդ ուղղութեամբ, բայց ոչ ցողաբական զեանի վրայ, ուր միայն աստիութիւններ է որ կը սերմանուին զանգուսաններուն մէջ:

Արուեստագէտին զիրջուորումն ու կնքումը ժարդկային զիրջուորում ժըն է կնքներն մէջ: Արուեստագէտը ժ'չ սուսցիւն ժըն է, ալ ալ քարոյսախոս ժը: Ան պարտաւոր է կնքներն նայել վերաբուծի ժը նայուածքով եթէ կ'ուզէր, որ զինան է կնքները եւ ապա կը վերադարձնէ ժարդուան կնքներ ժարդկային ու հարստացեց ժատրը, երազը, ժարդկային ձգտումները:

Մշտնադի արուեստին մէջ աւելի եւս շեղաւած է այդ դիմը: Սեփարի որպէսզի յաջողի, պէտք է միշտ կատարեալ ըլլայ: Նուազագոյն թիւացումը զգալի կը դառնայ անմիջապէս: եթէ կանդիսատեսը զգայ, կամ չզիտակցի, ինքը, արուեստագէտը կը զգայ ու ասիկա կ'ազդէ իր խաղարկութեան իսկ վրայ:

Երբ դերասանը խօսքեր սանի ըսելիք զնս կարելի է, կրնայ...

- Բարեւ արիւ. Ենեւանէ. կը խօսիմք մշտնադի ներկայացման ժատին, ծանօթացե՛ք, ինչպէ՛մ:

Տիկին Ենեւանէ, բանասերդ եւ թատերագիր ժարժ Ենեւանէի կիսն է, կիսն է նախորդ օր, կամ նախորդ օրերուն կիսաա մայցած խօսակցութիւն ժը շարունակելու, որ կը վերաբերի ժարժ Ենեւանէի մէկ նոր թատերակին, զոր Փիլիմի վերածնելու հարց ժը կայ մէջնակ:

Մարտի Մարտ օտգի է, կանաչը սուսած նուզում, մտպած թէ ժամը աստին աստը կայ, եւ աստին ինք պէտք է մեկնի: Իր անսակէն բացատրութեան մէջ է, կէս մտպ, կը լրացնէ: Ընդդի ու զէմքի շարժումներով:

- Բանքը ունեցող դերասանը կրնայ ինքզինք վերադանել յաջորդող առդրու թուալումին մէջ. մշտնադի մէջ կարելի չէ, պէտք է ամէն ինչ կատարեալ ըլլայ, վարձարար, լայն խաղ, արթուն, սրան, սրակի լուրթիւն, ջնքմասութիւն...

Պարն ու մշտնադը նմանակայական են անդիստաններուն համար:

Մարմնի լուս արտայայտութեամբ է, որ անդիստաններու հոգեկան աշխարհին մէջ արձագանգում ժը պիտի գտնեն, եւ պիտի խօսին անոր: Լուրթիւնները սրանք լուրթ չեն կանդիսատեսին համար, կարտուած լուրթիւններ են, բան չեն արտայայտեր: Լուրթիւնը որ կը լրտի կանդիսատեսին կողմէ, սեւ այդ լուրթիւնն է որ արուեստագէտի լուրթիւնն է, եւ արտայայտիլ լուրթիւն ժըն է: ժամը զանի՞ր է:

- Տառը:

Մարտի Մարտ արագորին արտաքը կը քաշէ վրան, շարկը կը սեղաւորէ մէջը: Հետուին արդէն կը ժատնան անա պանդորիկ սպասեակ ժը, իր գարնակատարը նաեւ: Պէտք է մեկնի:

- Մնաք բարով, լծոնաք զրելու մեք գուակներուն սպաւորութիւնները Ետքսթ սրուն ներկայացման ժատին:

- Վերջին հարցում ժը, պրն. Մարտ: Անցեալ ամառ այցելեցիք նաեւ Երեւան, ի՞նչ եղան մեր սպաւորութիւնները հան, այնտեղի հասարակութիւնին:

- Կը սիրեմ հայերը, ծանօթ եմ իրենց: Երեւանի մէջ կանդիկոպայ լուս խանդավառ երթաատարութեան ժը, որ ոգևորութեամբ կը հանուեր մշտնադի, ու կը զնահանէր: Նկատի անկցէք որ անցեցող մէկ երկու արտուայ ընթացքին երեք անգամ այնչաւ եմ Մովսէսական Թուստասան, եւ իրենց հրտակումով, պահանջով: Կատարած եմ իրենց հեւ Փիլիմ ժը դարձեալ, Կակուլէ զվերաբիւնս:

Երեւանը, այո՛, Երեւանը եւս մեծ խանդավառութեամբ ընդունեց զիս: Շատ լուս աքպաւորութիւններ օւնիմ հանկէ ալ:

Արդէն կը հետանայ, ինչեւշարժին մէջ կը միքնուի, զէպի օգակայան, զէպի Զուրիցերիս, ուր Պիփ ժամդրութիւն ունի կանդիսատեսներու հետ, սրանք ժարդիկ են, ասքերք լեզուով զգացող, աստագող, ուրախացող, սակայն ժարդկային նայն սպրումներով, ապա սարժին մշտնադի լուրթիւնը արտայայտութեան անկնդրելու աստի, ըմբոյնիկելու աստի: Պիփ վաղը զիշիւր պիտի ըլլայ Զուրիցերիս բեմերուն վրայ վանդակին մէջ բանարկուող ու խելզուող ժարդը, բնութիւնը պաշտալ, արուեստի ծարաւ ժարդը, որ զինուոր պիտի անին, ու զայտերուն մէջ զնգակաւար պիտի իմայ, ձնօրին Եազիկ ժը սեղման:

Ք. Փ.

# Բազմիւր Զրայնէրը .

## 9. ՄՆԱԳԵԱՆԻ

### « ԵՍ ԱՅԴ ՅՈՒՆՆ ԵՄ »

#### ԶԵԿՈՒՅՈՒՄ 4. ԱՍՍՈՒՆԻԻ

*Մեք քննած դերքը շուծի մը բնազդին եւ հրատարակեան իրական սկզբնաւորութիւն մը ունի: Այդ շունը թափառայած երկու հայեր կ'առաջնորդէ Ալլախնեան մէջ կորսուած իր հայ տիրոջ ազգապէս: Առ անոնք, այդ երեք հայերը, հազուկն էր բացուին անցեալի եւ ներկայի իրենց կեանքին վրայ:*

— Այս պատմութիւնը լսած օրէս առի՞ն, — կ'ըսէ Մնացեան, — Ալլախնեան շուն պատկերով կը գոցեմ կողմերս ու տրքօնցած պահուս, առտրին անգամ մտածուսմա կը բռնի հո'ն, մեծ լերան ստորոտին բարախոզ սպիկմ մաս... Սկսած ե՛մ արդէն շուն մը կրնի մէջս, յարմենեակ յսեցի այս պատմութիւնը, շուն մը սկսաւ հազել մէջս, շուն մը ասեալ'ն:

*Նկատի պէտք անենք, որ գրքին հեղինակը, Պ. Մնացեան 1900-ին կը գործադրուէր Փարիզ, նշանաւոր լրտեսի քաղաքը, Արեւմուտքի շունչին մասին հազարդ դասակարգ, լրտեսական լրտեսի սղողակուս համար:*

*Մուսա-Տաղի, Աննաբի, Երուսաղէմի եւ Պէյրութի մթնոլորտին յագեցած՝ Արեւմուտքի մշակութային կեդրոնին մէջ լուսաւորուելու, Նոր շունչ անելու, Նոր հիացմունքներ ունենալու բուն հնարաբարութեամբ նետուած այդ ոտանին մէջ, ուր դարձաւ կատայցները ուղարկու են, գրականութիւնն ու իմացական շարժումները հեղեղային են, ուր ասորեայ կեանքը ուղտն է, քանրասող ու խանգարիչ անհարկի տակ լէս Այս քաղաքին հետ շփուելէ առ Թանթութիւն հաստատելէ ետք, զուտ հայկական միջավայրի մէջ ապրող ու հայ մշակութիւնը սնած երեսասարդը, բնական է, որ հակադրութիւններ պիտի ունենար, պիտի փնտռէր իրը, պիտի կարծանար հարազատին, ցեղայինին:*

*Ներաշխարհի հակադր բախումներ զգացած պահուն, Մնացեան անս հանդիպած է այս շան պատմութեան: Շունը կը դառնայ ասուն մը կորսուած այլ հիմա դանուած մեռազիրը, շունը կը դառնայ իր հողին ու միտքը ասկիւնդրայ ընող խաղճները լուսաւորող խորհրդանշանը, հոգեկան վերլուծման եւ անկեղծ խոստովանութեան պատճառը:*

«Քիչ մը այդ շունին շինմ հմանքի միթէ, կ'ըսեմ իւրովի, անոր՝ որ անգուպ կը դառնայ, երբ մեր արիւնին հասնայ մայր մը կ'ալիքովէ շեղիւր, կը լսէ բոս մը ու կը պառայ, կը կանչէ, անհանգիստ կ'ապրի միջիւր որ հազարդ լսածը, ապրածը: Իր յափշտակութիւնը իմ հոգիս կրկնեցեսցը ըլլաք կարծես, իր յայտնութիւնը կենսազգրութեան խոստովանը ըլլաք կարծես: Իր պատմութիւնը լսած օրէս առի՞ն ի՞նչ կ'իշխէ վրաս:

Այն օրէն ազգին արիշ ձայնը չեմ լսեր ճագիս մէջ, այն օրէն առիմ ես ե՛ս չեմ կործնեմ, այն օրէն ազգին ես ե՛ս եմ կարծեմ, ես այդ շունն եմ:

«Շուն իմ, կարուած իմ ձեռագիր... Շուն իմ, իմ գտնուած ձեռագիր, իմ ճշդ-ընթաց ձեռագիրը»:

Առաջին էջին իսկ Պ. Մնայեան իր հոգեկան ապրումներուն, վերազնակաւ թեան եւ իմաստասիրութեան կալուածին մէջ է: Ամէն օր իրեն հետ ապրած, աչքն ու սիրտը լեցուցած Հայաստանը իրն էր սովորական բանի մը պէս, այնպէս ինչպէս Մուս-Տաղի լեռներն էին, Երուսաղէմի զբաղաբանն էր, Պէյրութի փողոցներն էին: Ան ահա, կեանքի հարկադրանքներուն մէջ, երբ իր սիրտը տառապագին կը զայլարուէր կորսուած «սովորական» բաներուն համար, կը լսէ իրական, հոստատ, իմաստուն այս շունին հո-նոցը ու ասով վերադառնալ կը զանի Հայաստանը իր հոգիին մէջ:

Հայու վերադառած հոգին է որ Հարազատ՝ զեղումի եւ խոստովանութիւններու կը մղէ հեղինակը, որ զնահատանքի արտայայտ խօսք ունի հին ու մոռցուած կարծուած բաներուն եւ չիկացած խօսք՝ աւերի, բոնութեան, կեղծիքի ու հալածանքներու դէմ:

Հայաստանի եւ Սփիւռքի հոգեկան ողորդութիւնը կայ այս «շուն» ներքին շնչ-զրուումին մէջ, ճշմարտութեան կանչը կայ:

Հեղինակը իր խօսակցութիւնը կը շարունակէ ուրիշ բարեկամի մը հետ, զրոյ՝ որ իմացական փայլ ունէր ասին մը, բայց հիմա նահանջի եւ ուրացման ճամբուն վրայ է: Անցած է կեղծին ու սուսին կողմը: Այս իրողութեան դիմաց՝ հասուածէ հասուած կը ծուռլի գայրտիքը, կը փայտասակի մասնումը մեր հուրթեան եւ երազանքներուն, որոնք խորունկ ենթահող ունին մեր ժողովուրդի հոգիի ծալքերուն մէջ:

«Ըս այդ շունն եմ» զիրքը հեղինակի հոգեկան զրոյցն է ինքն իրեն հետ, որ նոյն ասին խօսակցութեան մըն է յուր հայերուն հետ:

Գրուածքը բանաստեղծական շունչով կ'ընթանայ: Երբեմն ազօթողի, երբեմն բանական բողոքողի, երբեմն ալ զատուական ելեւէջներով կը զարգանայ, միշտ մտրով զբաներն սահմաններուն մէջ:

«Ըս այդ շունն եմ»ը վէպ մը չէ, — սովորական մտածող, բայց հեղինակի ներառութեան վէպն է: Գլխաւոր գերակատարը ինքն է, հեղինակը, իր անզնայնեքով:

«Ըս այդ շունն եմ»ը բանաստեղծական պոէմա մը չէ, բայց իմացական եւ ազգային տաղանայ մը արտայայտած է բանաստեղծական աշխարհով եւ խօսքի թափով:

Գրուածքը զբանական ուրոյն արտայայտութիւն մըն է՝ իր կատարողով, արտայայտչական մեղանով, սնով եւ բանաստեղծական սքեմով, եւ ասով իսկ արժեքաւոր է եւ վաւերական վկայութիւն մը կը հանդիսանայ իր սերունդի խորունկ ապրումներուն եւ տաղանայներուն:

Պ. ՍԱՊՈՒՆԻ



Չեղկուարերին խօսքն ետք, փնտրելուած  
զիրքէն կարգացուեցան մէկ-երկու հասուած-  
ներ եւ ապա ներկաները ձայն առին եւ խօսեցան  
«Ըս այդ շունն եմ»ի մասին, զիտեղով գայն զԸԸ-  
խաւորաբար, երեք անկիւններէ՝  
Իրբեւ վկայութիւն հեղինակի մը ներքին  
ապրումին,  
Իրբեւ վկայութիւն սերունդի մը տաղանայ-  
պին,  
Իրբեւ զբանական գործ:

Նախ արտայայտուեցաւ այն կարծիքը, թէ շէրքը վարակիչ է, կ'անձնուարէ սերունդի մը առջնադը, բայց թերի է իր կառուցումով: Անձնակնը, ազգայինը եւ մարդկայինը տանձին առանձին չեն նաւանուած ու վտառած են մեկը միտին:

- Ըթէ նշխակը մնար զուտ անձնակտի առջնադներու սահմանին մէջ եւ կարգ մը կ'ընթու: Երկնակով խորացնէ իր առջնադը, պիտի կարենար իմաստասիրական խորով իրական զբոնան գրտի մը առջ:

- Հայրենիքի մտան իրենց կազմած պայծառ երազին եւ շիրտ իրականութեան զիմաց, զաշտփարական հոռւագիտի մը մէջ՝ մարդիկ կը սիրեն, կ'առան, կը պաշտեն, իրականութիւնը թոյլ չի սար որ երազը մարմին անէ ու կը տազնապին: Երջան մը այդպէս կ'ոնցնի ու զորո մը, բախտուար պահու մը, խորհրդանիւղ կ'արտայայտէ այդ առջնադը: Այդ բախտուար խորհրդանշաններին մէկը կ'ընտել ճամբել ճեռ այդ շունն եմքը: Այս շէրքը կ'անձնուարէ սերունդի մը առջնադը:

- Սերունդի մը առջնադը չ'անձնուարէ: Այս ապրումներն ու մասնունները խորթ են մեր սերունդին:

- Ճիշդ չէ այս հաստատումը, որովհետեւ Սփիւռքի մէջ ապրող միայն մէկ սերունդ չկայ, ինչպէս նաեւ չկայ միասնակ նոր սերունդ: Ըթէ առան երեքը կը դանէ, թէ այս շէրքին մէջ արտայայտուած իր առջնադը չէ, մասնաւոր միայն պէտք է ընդունել սակայն, որ միւս ետքին առջնադը արուած է այստեղ:

- Պիրքին մէջ չկայ մեր ստորեան, ներկան, մեր մէջնորդայն կեանքը: Հետեւորոք մեր սերունդը չի կրնար ինզպիւր անոր մէջ զգալ եւ իր շէրքերէն մէկը համարել ճեռ այդ շունն եմքը:

- Ինչ կը վերաբերի ստորեային, այս, նշխակը իր հոգեկան առջնադներուն հետ ազգակի չէ տուած ստորեան, ստորեան ու իր առջնադը չէ ազուցած իրարու, բայց կայ անկեալ որպէս հետուէն երկուցող պատկեր, որուն ինք մասնակից չէր կրնար ըլլալ: Այդ մասնակից չկարենալ ըլլալու կրեւոյթը ինքին տաղնապի մը ձեռնը չէ՞ տար արդեօք: Մնաց որ, մարդու մը սէրերը, ստեղծութիւնները, ձգտումները, կրթները նոյնքան եւ թերեւ աւելի՞ խրական են, ստորեայն են, քան նոյնիքն իրական

ստորեան: Ըթէ այդ ապրումները անը շունին ստանց հոգիին մէջ, անոր մեղքը պէտք չէ անպայման վերադրել նոյն հարցերը ընդդէմը նշխակի մը:

- Իս շորո տարի Հայաստան ապրած եմ ու նա յայտնուած կարծիքներէն կը հետեւցնեմ, որ այս շէրքը աւելի անոնց ապրումներն ու առջնադները կ'արտայայտէ, քան մերը:

- Պիրքին պիտար ներուններէ՞ շունը խրաբու անձնութ երկու Հայեր քով քովէ բերած է ու իրը այդ զարմած խորհրդանիւղ մը: Բայց կը կարծէ՞ք թէ շէրքը պահու է իր խորհրդանշանին խորհուրդը: Ուրիշ խոսքով՝ այս շէրքը կարգապող երկու տարրեր Հայեր պիտի լնգւին նոյն արտադրութեամբ:

- Շունը միութեան խորհրդանշան մը չէ միայն, Հայութեան գիւտը ընող սղին է անհնին առաջ: Եւ յետոյ՝ ոչ միայն իր հանչանք ուրբութիւնները ուրիշի մը հազարդելու անապաշտեք ունի, այլ նաեւ սրբապիղծներուն գեմ դանոց պաշտպանելու, անոնց վրայ արթուն նսկելու յանձնառութիւն մը: Այս ձեռով պարզ կը դանձայ այլեւ, թէ անան անն պիտի ըլլայ անհաշտ, պիտի հաջէ, խանդէ:

Պիրքի գրական կողմին մասին խօսելով՝ անրկանքը դժուարութեամ մասնընթացմ Բշպիլու ամոք Բկարպիւրը, ճամի որ, գրական Բարպազութեան անկրամ յատուկ սարքեր քովանդակելով համոզներ՝ տրուածը ո՛չ բանաստեղծութեամ մարդին մէջ կ'իյնար, ոչ պատմութեան, ոչ ալ կրտարակարգութեամ:

- Ճիշդ հող է իր դիտարար արժանիքներէն մէկը: Պէտք շունինք ընդունուած կազապարենբուն մէջ տեղադրելու զայն: Պէտք է քննենք արուածը այնպէս, ինչպէս որ արուած է: Արդ, ճեռ այդ շունն եմք ինչպէս շատեր ընդգծեցին, մէկ շունով կարգապող շէրք մըն է եւ աստեղա պատիկ արժանիք մը չէ անոր զբոնան հանգամանքը վկայող:

- Մէկ շունով կարգապիւրը զբոնան յատկանիւ մը չէ: Ուստի անհանգ փնտրել աչ մէկ շունով կը կարգապիւր, բայց զբոնանութիւն չեն:

- Ատիկա ճիշդ է: Բայց շէրք մը, որ սովորական առումով շարժում չ'ընդունիր իր մէջ,



ոճեր, արկած, արկածախնդրութիւն չի պարունակեր, ստիկանական կանգոյցներ չի դնէր էջերուն, ու ապրումներու եւ մասնորոններու շրջանակէ մը մէջ կը յաջողի յափշտակութիւն մը ստեղծել ընթերցողին մօտ, պարտաւոր ենք նկատի առնել այդ յափշտակութիւնը էրբէ պարական յատկանիշ: Յափշտակութիւն ստեղծող եւ մէկ շունչով կարգադրող դերք մըն է ՎՅՍ այդ շունն եմքը, ու գրական դերք մը:

- Գրական դերքի մը հիմնական տարբերէն մէկը լեզուսն է: Մինչ ՎՅՍ այդ շունն եմքը ինքզինք պաշտպանող լեզու մը չունի:

- Շնչահասակն: Ըստեցաւ, որ դերքը սաք շունչ մը ունի, վարակիչ է, կրցած է յափշտակութիւն մը ստեղծել: Ինքզինք պաշտպանող լեզու չգնեցող դերք մը ոչ սաք շունչ կրնայ ունենալ, ոչ կրնայ վարակիչ գոտաւ եւ ոչ ալ յափշտակութիւն ստեղծել: Երբ այս յատկանիշները կան, կը նշանակէ նաեւ կայ լեզուն, կայ ըսելու կարող ձև մը, սե մը:

- Այո, բանաստեղծութիւն չէ ՎՅՍ այդ շունն եմքը, պատմաւածք չէ, սակայն հրապարակադրութիւն ալ չէ, հրապարակագրութիւնն շատ հեռու է, շատ աւելի բարձր, իր արտայայտութեան ձեւը գրական սպրուս մը կը բերէ, բանաստեղծական սցեմ մը սակ վրան, որով կ'իջնայ գրական կարուածին մէջ: Թէեւ միշտ զըմ-

ար է ու գժուար պիտի մնայ գրական այս կամ այն ժանրին մէջ զայն տեղաւորելու դարձել:

- Այս դերքը հեղինակի ստեղծագործութեան արտայայտութիւնն է: Իր խոսվելը կը ներկայացնէ միշտ, մինչև անգամ երբ կը խոսի Հայաստանի ժողովուրդին անունով, երբ այդ ժողովուրդին տաղանդները կը ներկայացնէ մեզի: Իսկանը այն է, թէ կրցա՞ն է պէտք եղած շերտ-ժուրթեր առ իրը եղող հոգեկան խոսվածքը: Անկասկած: Ձմռանեք նաեւ, որ չի կրնար դուրսի մտնելու բոլոր սերունդներուն հոգեկան աշխարհի ներկայացուցիչ հեղինակ: Ամէն մէկը, ուրիշ կամ չուրիշ, արտայայտիչն է մէկ մասին: Կարեւորը անկեղծութիւն եւ ապրումի շերտ-ժուրթին փոխանցել կարենալն է: Ու հեղինակը յաջողած է ստիկա ընել:

- Անշուշտ, եթէ կառուցումի թերութիւններն գերը ըլլաւ դերքը, եթէ այս նիւթը պատմաւածքով մը տրուէր, արուէր վէպով մը կամ զուտ բանաստեղծութեամբ, ասորքը բան մը պիտի ըլլար, այդ բոլոր եթէները զուր են սակայն: Ինչ որ ունինք հիմա մեր դիմաց՝ դրական շունչով տրուած վկայութիւն մըն է, անձնական ստեղծագործութիւն մը եւ սերունդի մը ստեղծագործութիւն ըլլալ մը:

Անկեղծ եմք մըն է այս դերքը:



# Կոմսարներ

## «ԷՍՕՐ ԼԱԻ Է ԿԱՆՅ ՎՈՒՐ ԷՐԵԳ»

Հայաստանի գրողներու և Համագումարի նախորեակին, գրողները, ընդհանրապէս որակաւորները յատուկ յօդուածներով բանաձևեցին իրենց տեսակէտներն ու բաղձանքները, դրականութեան շուրջ ստեղծելով աշխարհի երկու մը: Վէրքեր մատնանշուեցան, թերացումներ, քարացած մը-տանութիւններու դէմ արձակուած ըմբոստ ճիւղեր լսուեցան եւ ականատես եղանք Համեմատարար մէկէ աւելի յանդուզն կեցուածքներու:

Մտփետական գրակահոսութիւնն ամսաթերթի պատասխանատու խմբագիր եւ գրող Ստ. Կուրտիկեանը նախահամագումարեան լրջանին ստորագրեց երկու յօդուածներ, մէկը իր խմբագրած ամսաթերթի Յուլիսի թիւին մէջ, իսկ միւսը «Դրակամ Թերթ»ի Օգոստոսի (33 եւ 34) թիւերուն մէջ:

Կուրտիկեանի այդ յօդուածները կը վերաբերին Մփիւռքի գրակահոսութեան:

Երկու չափ եւ երկու կշիռի սովետական սխտեմը անտեսած չէ Կուրտիկեան, ծայրայեղ նեղմտութեան եւ ծայրայեղ լայնամտութեան օրինակները ցանցառ չեն իր յօդուածներուն մէջ, նոյն կեցուածքն բխող Հակասութիւնները աչք կը ծակեն, այտուհանդերձ, ատոնք Երկրորդական կը թուին պահ մը եւ մարդ պարբերաբար կ'ուրախանայ անոր էջերուն դիմաց: Ողջմտութեան բաժին մը ունի Կուրտիկեան, քաջութիւն կայ այդ տղերուն մէջ, իւրայիններուն բոլոր ըսածներուն Հաւանութիւն շտալու կեցուածք մը կը մատնէ եւ թշնամի Համարուած տաղանդներուն արգարութիւն ընելու ոգի մը կը բերէ:

Մենք, Հայաստանի գրողներուն գրութիւններուն մէջ, օրինակ, առաջին անգամն է որ կը Հանդիպինք Համակրական շեշտով արտասանուած Օջականի, Սարաֆեանի, Համաստեղի, Արամ Հայկազի եւ ուրիշ մէկ երկու գրողներու անուններուն:

— Ի՞նչ մեծ բան, — պիտի պոռայ Հարկաւ ընթերցողը, — ի՞նչ մեծ բան, որ Հայրենիքը կը զիջի յիշել իր տաղանդաւոր դաւակիրներուն անունները: Արդարեւ, այնքան անբնական եղաւ մեր Հայրենիքին կեանքը, այնքան անհեթեթ եղաւ Հոն ապրող մարդոց լրթներուն գրուած խօսքը, հերքումը, ուրացումը, որ վերահաստատուած որեւէ կարգ ուրախութիւն կը պատճառէ շահագրգռուողներուն:

Որովհետեւ, տակաւին մինչեւ երէկ, վերոյիշեալ գրողները կը խորացնէին գրութեան անկումայնութեան բնորոշ գծերը, թաղուած էին «ապականուած բանաստեղծութեան տիպին մէջ», դարձած էին «ամբարայ, հակաժողովրդական գաղափարներու արտայայտիչ» եւ կ'ընթանային «ամկմամ ուղիով, լիովին բացայայտելով իրենց վանողական ամբայութիւնն ու հակաժողովրդականութիւնը»:

Այդպէս էր երէկ: Բոլորովին այդպէս չէ այսօր: Աչքերուն ու մտքերուն մէջ զիջուած նախկին մշուշը քիչ մը փարատած կը թուի այսօր: «Էսօր լաւ է կանց վուր էրեգ»:

### Մ Ե Բ Կ Ա Ր Ծ Ի Ք Ո Վ

Իր ներկայացուցած շահեկանութեամբ համար՝ կու տանք ամբողջ հատուած մը կուրսիկեանի յօդուածէն, մերժելով հանդերձ կարգ մը մտնաներու քացուած վարկը: Գրական հասկացողութեան կամ քաջակի բնաւ յայտարար նշան չէ մեծերու կարգին յիշել, օրինակ, Սիտալի մը կամ Գուլումմեանի մը անունները: Նաեւ արդար չէ, բայց հետագայ հատուածներու մէջ նշարտութիւններ կան, կարդացէ՛ք եւ տեսէ՛ք—

«Մեր կարծիքով սփիւռքահայ գրողի հայրենի հողից հեռու լինելը եւ դրա հետ կապուած դժուարութիւնները վճռական նշանակութիւն չեն կարող ունենալ գրականութեան զարգացման համար: Յիշենք այն պատմական փաստը, որ հայ գրականութիւնը ժողով անցեալում գոյատեւել ու ծաղկել է հայրենիքից հեռու գաղութներում՝ Պետերբուրգում թէ Մոսկուայում, Քիֆլիսում թէ Բաքում, աւելի հեռուոր գաղթօճախներում՝ Պուլտում թէ Չմիւսնիայում, Վենետիկում թէ Փարիզում, Թեհրանում թէ Կալիֆայում եւ ովկիանոսից այն կողմ Ամերիկայում:

Գրականութեան գոյատեւման նիւթակուն եւ քաղաքական պայմանները Արաբական Արեւելքի երկրներում: Բայց այդ պայմանները անհամեմատ լաւ են, քան էին սուլթանական կամ երիտասարդ Թուրքերի կայսրութիւնում, ուր ամէն բոլոր ֆիզիքական ոչնչացման վտանգն էր կախուած հայ ժողովրդի գլխին եւ ուր ազատամիտ ամէն ստեղծագործութիւն ենթարկուած էր համարեան ուժիմի իրատ գրաքննութեան: Բայց այդ անընթաց պայմաններում էլ գոյատեւել ու զարգացել է հայ գրականութիւնը՝ շնորհիւ գրի ու գրականութեան նուիրուած իր անձնուրաց զաւակներին:

Հայրենիքից հեռու լինելը չի կարող վճռական նշանակութիւն ունենալ տաղանդի աման համար: Յիշենք, որ մեր մեծատաղանդ քանաստեղծ Վարաժանը, կամ մեր միւս քանաստեղծները՝ Մեծարնեցը, Թէքէեանը, Սեւակը եւ այլն, աչքի ընկան հայրենիքից հեռու իրենց գրած ստեղծագործութիւններով, որովհետեւ մի կողմից յարաբերում էին եւրոպական առաջնորդ գրականութեան հետ, միւս կողմից իրենց սերտօրէն կապուած էին զգում իրենց ծնող ժողովրդի հետ: Նրանք իրենց հոգում ունէին ժողովրդային այն մթնոլորտը, որ սնում էր նրանց միտքն ու զգացմունքները եւ նրանց համար միտմամանակ ստեղծում գրական ներքին մթնոլորտ:

Միթէ՞ ոչոյն չէր պարագան եղևոնից յետոյ, երբ արդէն ոչնչացւել էին հայ գրական համաստեղութեան շատ պայծառ աստղեր: Բայց ահա հեռաւոր Ամերիկայում, մի ամբողջ ովկիանոս հեռու հայրենիքից, ծաղկեց արձակագիր Համաստեղի տաղանդը, հայ գրականութիւնը ճոխացաւ Վահէ Հայկի, Անդրանիկ Անդրէասեանի, Բենիամին Նուրիկեանի, Սիտալի, Յակոբ Գուլումմեանի, Արամ Հայկազի, Յակոբ Ասատուրեանի, Սուրէն Մանուէլեանի եւ ուրիշների ստեղծագործութիւններով, որովհետեւ նրանց հոգում բարախում էր հարապատ ժողովրդի յոյզերն ու երազանքները, հայրենիքի ու կեանքի կարօտը: Միթէ՞ գրական մթնոլորտ, հանգստաւէտ կեանք ու նիւթական լայն հնարաւորութիւններ ունէր ուսուցիչ Յակոբ Օլականը, որ գիշեր ցերեկ աքնելով այնքան արդիւնաւէտ, այնքան արգասաւոր գրական ճանապարհ անցաւ եւ ոյնքան դրեց, ինչքան չգրեցին մի ամբողջ հայկական գաղթօճախի զրոզները միասին վերցրածոք:

### ... «ՈՐՈՒՆ ՄԱՀԸ ՄԵՐ ԱՆ ՄԱՀՆ Է»

*Ստեփան Կուրտիկեանի յօդուածէն կ'իմանանք, որ յօդուածագիր ոմն Մկրտիչ Հաճեան «Պայքար»ի մէջ հրատարակութեան տուած է «Ափիւնքի հայ դրողը մեր օրերու գրական յեղաշրջումներուն մէջ» խորագրով յօդուած մը, ուր ի միջի այլոց ըսուած է —*

«Այսօրուայ վիպասանը առողջ, խիզախ ու պարկեշտ կեց-  
ւած չեմք մը կ'իջնէ նախ իր էութեան ամէնէն խորունկ ծայփերում  
մէջ, կը փնտռէ ու կը գտնէ հոն բուն մարդը, որ անկախ իր ա-  
նունէն, գոյնէն, սեռէն եւ ազգութենէն՝ արարչագործութեան  
բարձրագոյն հրաշալիքն է եւ նոյն կերպով գոյութիւն ունի ամէն  
ժամանակակից մարդու մէջ: Ընդհանրական մարդն է ան, որուն  
խակիան կեանքը երկրագունտի բոլոր բնակիչներն ալ հաւասար  
կերպով կը շահագրգռէ, որուն ցաւը, մեր ցաւն է, որուն ուրա-  
խութիւնը մեր ուրախութիւնն է, որուն սէրը մեր սէրն է, որուն  
մտքը մեր ալ մտքն է»:

*Մինչև անգամ երկաթէ վարդոյրին այն կողմ ապրող երկաթի ու  
մեխենայի կցորդի ու պտուտակի վերածուած մարդերը սկսան մարդանալ  
քիչ մը, մինչդեռ մեր պտուտակները տակաւին կառչած կը մնան իրենց  
պտուտակային հին յանձնառութիւններուն: Այս ազատ պայմաններուն  
տակ, երբ ոչ մէկ ստիպում կայ, ինչպէ՞ս կրնայ մարդ մը այլանից քիչ ծա-  
նօթութիւններ ունենալ մարդուն մասին եւ անգիտանալով ցեղային, պատ-  
մական, մշակութային ազդեցութիւններով առաջացած էական նբարանգ-  
ները այս մարդուն մէջ, շփոթէ զայն այն միւս մարդուն հետ:*

*Բայց աշխարհաբազմազգիական այս դասընթացը մենք չտուինք  
բազմերանգներուն: Ստեփան Կուրտիկեաններն ու Մարգարէնիներն—Ստա-  
լինեան ուսմունքին հետեւած Հոկտեմբեր-Նոյեմբերները տուին զայն ի-  
րենց: Այս վերջինները տարբեր մտածումներ ունին հիմա, ուրեմն գործ  
ունին: «Պայքար»ի յօդուածէն վերի մէջը երումը կատարելով՝ Կուրտիկեան  
կը խորհրդածէ —*

«Մեր կարծիքով, նիշդ խորհուրդ չէ այս: Գրականութիւնն  
ու նորագործութիւնը բոլորովին չեն ենթադրում ազգային առանձ-  
նայատկութիւններ, ազգային նրբերանգների համահարբում ու  
նշնշտում: Ինչքան ազգային է գրողը, ինչքան խոր գեղարուես-  
տականութեամբ արտայայտում է իր ազգային իւրայատկութիւն-  
ները, այնքան աւելի նրա ստեղծագործութիւնը հասնում է գե-  
ղարուեստական բարձր մակարդակի, դառնում է միջազգային,  
համամարդկային: Դրան վտռ օրինակ կարող են ծառայել Պուշ-  
կինն ու Տոլստոյը, Գոթկինն ու Թումանեանը, Խաչակեանն ու Չա-  
րենցը:

Իւրաքանչիւր ազգ ունի իր առանձնայատկութիւնները, որն  
այն աւանդն է, ինչ նա մտցնում է համաշխարհային կուլտուրայի  
գանձարանը»:

*Իցիւ թէ մեր շտեմները սորվէին նաեւ այս դասը ու քիչ մը լրջանա-  
յին այլեւս:*

### «ԱՄԵՆԱՅՆ ԱՆԿԵՂԾՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԽՍՏՈՒԹԵԱՄԲ»

Դուք տեսաք «Առվիտակամ գրականութիւն» ամսաթերթին մէջ երես-  
ցած Ստ. Կուրտիկեանի յօդուածին կարգ մը մտքերը, որոնք կը բխէին  
գրական Համոզումներէ եւ վատատող չէին: Բայց այս թերթը հազիւ գո-  
ցած՝ միւս թերթին («Գրական Թերթ») մէջ, նոյն Կուրտիկեանը, նոյն  
հարցին նուերուած էր լրացուցիչ յօդուածով կը պնդէ, թէ

«Հաւատը Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ աւալիւ-  
ցիայի ճկատմամբ, Սփիւսահայութեան մէջ տուած քերեց նոր ըմ-  
բռնումներ, նոր աշխարհայեացք, նոր հոգեբանութիւն, որը  
եւ արտացոլուեց գրականութեան մէջ»:

Ու զիչ մը ետք.

«Ազգայինն ու համամարդկայինը միաձուլուելով իրարու,  
առաջաւոր հայ գրողները ստեղծեցին ժամանակի շնչով բարա-  
խում, կենսահաստատ մի գրականութիւն, բարձր պահելով գրա-  
կան այն բանը, որ դեռ երկրորդ համաշխարհային պատերազմի  
նախօրէին Ֆրանսիայում վառելի էին գրողներ Միսսֆ Սանուշեա-  
նը, Ա. Սեման, Լուիգա Ալյանեանը, որոնք նահատակուեցին Հիւս-  
լերեան Ֆաշիզմի դէմ մղուած պայքարում»:

Նկատեցիք հարկաւ, որ լրջութեան սահմաններէն դուրս կը դառնը-  
ւինք արդէն ու գրական մթնոլորտի մը մէջ չենք այլեւս: «Հոկտեմբեր-  
եան աւալիւցիայի ըմբռնումներով» ապրած այն ո՞ր մարդն է, որ կրցած է  
գրական գործ մը տալ, կամ ի՞նչ լոյս կրնար տալ իր հետեւակներուն այն  
սովորին «Վաճը, գոր վառելի էին» գրականութեան մէջ ոչ իսկ հետեւակի  
վարկ ունեցող յիշեալ մարդերը:

Ամիս մը առաջ Կուրտիկեան կը գրէր.

«Տարիներ շարունակ Սփիւսահայ գրականութիւնը մեզա-  
նում համարուել է հիւր եւ մեր քննադատութիւնն էլ որպէս հիւր  
է մտնեցել այդ գրականութեանը, խոստովել է անաչառ ու ճշմար-  
տացի, յատկապէս դեպոյուստական քերութիւնների հանգամա-  
նալից բացայայտումից ու վերլուծումից: Ժամանակն է վնասկա-  
նորէն երաժարուել նման «հիւրային» հանդիսաւոր վերաբերմուն-  
քից եւ ամենայն անկեղծութեամբ ու խստութեամբ մտնելու հայ-  
րենիքից դուրս ապրող գրողների ստեղծագործութիւնների գե-  
ղարուստական համալուծմանի, պրոֆեսիոնալ ու անգիշտում վեր-  
լուծմանը»:

Հաշտեցուցէք հիմա եթէ կրնաք վերի շոայութիւնը եւ այս «անգի-  
շումը»: Գրականութեան հետ հազիւ հեռաւոր առնչութիւն ունեցող այդ  
անձներուն ձեռքը «Վաճ» զննելէ ետք՝ բաւական Համարձակ պէտք է ըլլայ  
մարդ, որ թամբագեանէն սնկեղծութիւն պահանջէ, պահանջէ որ ինքս  
ըլլան Աղաբաբեանն ու Սողոմոնեանը, կամ անաչառ ըլլան գիրար անգամ  
սակնուժբայ ընող Սեւակն ու Մահարին:

Անաչառ ըլլալու կոչեր արտասանելէ առաջ, կը թուի, թէ մարդ  
պէտք է սորվի ըլլալ ուրիշ բան մը՝ լո՛ւրջ ըլլալ:



Արենց



Սարգսյան



Ս. Ալազադյան



Մ. Մարգարյան

### Մեր Հիմերը

Գեկտեմբեր 16-ի առաւօտեան ժամը 11-ին, խմբագրատունն այցելեցին շքապառլամի ելած Հայաստանի գրողներէն չորսը՝ Վաղարշակ Խաչենց, Սարգսյան, Ստեփան Ալազադյան եւ Մկրտիչ Սարգսյան:

Ներկայ էին «Բազմ»ի խմբագրական կազմին անդամները եւ ամսաթերթիս բարեկամներէն քանի մը հոգի:

Բաժակ մը թէյի շուրջ, խմբագրութիւնն երկու ժամ տեւող մտերիմ գրոյց մը ունեցաւ հիւրերուն հետ:

Հայաստանի գրողներուն Ս. Համազումարը նոր աւարտած էր իր աշխատանքները եւ գրոյցին կեդրանական նիւթը Համազումարին մէջ առնուած որոշումները եղան, ի մասնաւորի այդ որոշումներէն երկուքը:

Ա. — Լաւագոյն մտոյշներու քարգմտնութեամբ՝ հայ գրականութիւնը օտարներուն ճանչցնելու հարցը:

Բ. — Սփիւռքի գրականութիւնը հայրենիքին մէջ արժանաւորապէս ներկայացնելու խնդիրը:

Ջրոյցի ընթացքին՝ պարզուեցաւ, որ թէ՛ Հայ գրականութիւնը օտարներուն ծանօթացնելու հարցը եւ թէ՛ Սփիւռքի գրականութիւնը Հայաստանի ժողովուրդին ներկայացնելու խնդիրները յորջուրեամբ բնուած են եւ առնուած առաջին իսկ խոյրերը կը յուսադրեն հայ մարդը ազագոյնի նկատմամբ:

Խօսք եղաւ նաեւ առանձին գրողներուն եւ գործերուն մասին, ինչպէս նաեւ գրական տեսակետներուն մասին: Մթնոլորտը ակիլ «գրականացաւ», երբ երկուստեք քննարկեցին արտասանուեցան:

Ժամը մէկին հիւրերն ու կիրթնկալները բաժնուեցան իրարմէ՛ խանդավառութեամբ եւ յուզումով:

### ԻՄ ԾՆՈՒՆԴԸ

Մայրս առաւանտան վեր է կացել սուր ցաւերից:

- Մեծն՝ւ՛մ եմ, մա՛, - առել է տաախս:

- Ախր, ի՞նչ է պատահել, - ձեռքերը ծընկնեցին է խփել պատուաջ:

- Մեկգործրակահ ցաւի նման է, - առել է մայրս:

- Ես՞, - խաշկնեցել է պատուաջ, - ա՛խր, երկու ստիտ ունես, աղջի՛կ, չլինի՛ր թէ լար աչք է...

Եթ՞ ամսական եմ ձեռնել, օրապակաս: Հարկան քրեղուորք Աննան լողացրել է ինձ եւ դարձել տաախս.

- Ինչպէս ձնուողները, Ատառած լանի, ես՛ կը մեռնեմ, ես՛ Ատառած թող լող, կատարող ըլի՛, մեծ մարդ կը դառնան...

- Ամէ՛ն, - վրայ է բերել տաախ:

Քնկուորք Աննա, ինչպէս տեսնում էք, վատ գուշակող է եղել: Ես չմտայ, զմեծ մարդ էլ չղարձայ: Բայց յայտ լաւ բան է. ես ապրում եմ, դեռ աւելին, այստեղ ուղտւմ եմ ցածրացնել մայրս, եւ հաւատում, որ կը կատարուի դոնէ նրա գուշակութեան երկրորդ մասը:

- Ամէ՛ն...

ՄԿՐՏԻՑ ՍԱՐԳՍԵԱՆ

(«Կեանքը կրակի տակ»)

### ՄՈՎ... ՄՈՎ...

Մովք Փլլում է, մովք երգում: Մովք իր երգն ունի: Մովք ունի նա, ով վիշտ ունի: Օրորում է մովք վախից, երբեմն խենթ դառնում, բայց խփում մայրերին, երբեմն սպասանքից յոգնած հանգարտ սուղւում է աւազների մէջ, իսկ երբ ուրախ է, խայտապարի է բռնում սահէ շողքերի նետ, վերցնում է լուսնկան իր խորունկում ու երազանքներ նրանում սիրող սրտերի համար: Մով, մով, ջիւն ու պաղպաղուն ալիքներ, Թափանցիկ խորութիւն, որից երեւում են յատակի խնամարերը: Որքան նման է մովք սարերը մարդու սնտակ նոզուն:

ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՐՅԱՆ

(«Աւանդ հայրենիք»)

### ՏԵՐԵԻ

Ես մի տերն. եմ, անգամ ոչ պտուղ. Երբ ընկնեմ ծառից, Կանգնած կը մնայ ամուր, ամերիկայ շինձ ծառն առակց ինձ:

Բիւր սերունդների, դարերի առայ Դու մնայ պայծառ,

Այսպէս խորարմատ, մշտապէս կանաչ, Պողպատը իմ ծառ:

Արհաւիրների հին սամուը բեզ թռչ չստատնի,

Աւօրեայ հազը թռչ հազար ինձ պէս Տերններ սամի:

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԻՆՑ

1939

### ԱՆՈՒՐԵԱՆ

Ախորեան իմ, Ախորեան, Հայրենի գետակ, Կեանքի ոլոր անդրէիս Մեճի իրար գտաճի:

Մի գլխ գտն թռչ ցաւ իմ սիրող սամի, Իսկ դու ժպտա՛, դու խնայա՛, Գետ իմ հայրենի:

Փարսիք, փարսիք հարազատ Մայր Հայաստանիս, Թռչ քեզ անոյս չտեսի Մեր գերուած Անիս:

Թռչ քո վշտով շինգայ Մեր սուխը հին, Կեանքի ծառը թռչ ծաղիի քո հանապարհիս:

Ջուր սուր դու մեր գաշտերին, Լոյս սուր ու գեա՛, Հնուց ստաւտ թու՛ է սո. - Եսպէս չի մնայ:

ՍԱՐՄԷՆ

## Չ Ե Կ Ո Յ Յ - Կ Ո Չ

### ՈՒՂՂՈՒԱԾ ԲՈՂՈՐԻՆ, ԱՄԷՆ ՏԵՂ

*Մեռաւ Համաստեղ:*

Այժմ, ան կը պատկանի ՀԱՅՈՒՆ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ, բոլոր անոնց հետ, որ հայութեան արժանաւարդոյններն եղան, անցեալին եւ դեռ ալ պիտի ըլլան դաւոյ սերունդներէն:

Համաստեղ հարազատ հայն էր, որ կոչումն էր ունեցած՝ իր դրահանութեամբ ներկայացնելու հայն ու հայութիւնը — հոգ չէ թէ յատուկ շրջանի մը ու շրջապատի մը հայութիւնը — իր նկարագրած անձերով ու բարքերով, անոնց հարազատ ուրախութիւններով ու տաքնապումներով, եւ ստեղծագործ աշխատանքի անոնց նուիրումով:

Անոնք, նոյնքան անբաժան մասն էին իրաւ ու ամբողջական հայութեան:

Վստահօրէն չենք սխալիր, երբ շեշտենք նաեւ, թէ Համաստեղ հարազատ մէկ մասն էր մարդուն ու մարդկայնութեան:

Համաստեղ ազնուական հայ մարդն էր, անխորական սիրով եւ հասկըցողի կարեկցութեամբ՝ ամէնուն հանդէպ:

Համաստեղ հիացողն էր ու ջատագովը հայուն բարոյական ըմբռնումներուն եւ զնդիցկութեան ձգտող նկրտումներուն — նոյնքան պատիւ՝ ոնէ ալ մեծ ժողովուրդի:

Ինքն ալ մէկ հաւատաւորն ու նուիրեալը այդ բոլորին ու աւելիին: Այսօր, Համաստեղ ընդմիշտ հեռացած է մեզմէ: Ան չի կրնար այլեւս մեզ հետ ըլլալ ի՛ր անձով:

Բայց մենք — բաւ է որ ուզենք ու ջանանք — կրնանք իր հոգին ու ձգտումները, գէթ մասամբ, մեզ հետ ունենալ. բաւ է որ մեր հաճոյքն ընենք ատեն ատեն ապրիլ իր գործերուն եւ մտածումներուն հետ, միշտ քիչ մը աւելի մտերմանալով սրտի ու մտքի իր ստեղծագործութիւններուն:



Ամերիկահայութեան լայն շրջաններուն համար, քաղցրագոյն ուրախութեան մը առիթն եղաւ Համաստեղի Յոբելեանին լուրը:

Նոյնը նաեւ, մօտն ու հեռուները՝ շրջանէ շրջան, մինչեւ աշխարհ Հայաստան:

Կրնանք վստահօրէն ըսել, թէ այդ լուրն ու հրճուանքը Հասան նաեւ մեր հայրենի ժողովուրդի լայն ու համեստ խաւերուն — անոնց, որոնց նմաններուն սէրը ամէնէն հարազատն էր ու խորագոյնը մեր մեծ վաստակաւորի ստեղծագործութիւններուն մէջ:

Բայց գիտենք, քանի աղբիւրներէ, որ մեր հայրենի գրողները հարազատի ոգեւորութեամբ ընդունած են լուրը, եթէ նոյնիսկ առանց մեծ աղմուկի:

Հաւանաբար, Հայաստան ինքն ալ ունենայ սիրոյ ու մեծարանքի ի՛ր օրը, մեր Յոբելեանի աւարտէն ետք:





Սկիզբէն իսկ, Կեդր. Յանձնախումբի ջերմ բաղձանքը եղաւ, որ մեր դաշուձիթներու Հեռաւորագոյնն ու փոքրագոյնն անգամ չմնայ անմասն կամ վերապահ, համահայկական ոգիւորութեան այս մեծ շարժումին առթիւ:

Ախտո՞ւ որ, առաջուց, մենք չկրցանք բաւարար չափով ըմբռնել մեր այս զեղեցիկ ու ազնուական նպատակին դժուարութիւններն ու բարդութիւնները:

Հեռաւարար, ոչ իսկ մտածեցինք մեր ուժերն ու գործունէութիւնը — նաեւ գործնական գիտնի վրայ — ծրագրել ու կազմակերպել ա'յնպէս, որ նման մեծ յանձնառութիւն մը կարենայինք իրական յաղթանակ մը դարձնել:

Համեստագոյն ծրագրումի մը համար իսկ, ողբալիօրէն անբաւարար էր միակ քարտուղարի մը մեր ուժը, լուսագոյնն ու առաւելագոյնը տալու ամէն ջանքի հակառակ:

Կար նաեւ ծանրօրէն մտահոգիչ ու սպառնական մէկ այլ պարագայ, որ այս ձեռնարկի սկզբնաւորութենէն իսկ, զօրեղապէս խանգարեց այս Յորեւանին բնական ընթացքը, ծանրագոյն հիւանդութիւններու եւ կրկնակ մահերու Հետեւանքով:



Այսօր չկայ բոլորին ու բոլորիս սիրելի մեր Յորեւանը:  
Եւ սակայն կայ ու կը մնայ Յորեւանը՝ ոչ իսկ դեռ կիսով կատարւած:

Մենք չենք կրնար գայն չհասցնել իր ցանկալի լրումին:  
Այժմ, այդ մեր պարտքն է՝ կրկնապէս նուիրական:  
Յորեւանին սիրով:  
Յորեւանին մահով:



Կեդրոնական Յանձնախումբի սկզբնական մէկ հպարտութիւնն ալ այն էր, որ իր նախաձեռնած այս Յորեւանը դառնար համահայկական ու համազգային, Ամերիկայէն մինչեւ յեանադոյնն ու փոքրագոյնը մեր գաղութներուն — մօտաւոր ու Հեռաւոր:

Ասոնց Հետ եւ այս բոլորին հովանաւոր՝ մեր Հայրենիքն Հեռակայ — յաւերժ ներկայ՝ մեր բոլորի մաքերուն ու սրտերուն մէջ:

Կեդրոնական Յանձնախումբի առաջին մտածումներէն մէկն էր ծրագրել ու վարել այս Հանդիսութիւնը ա'յնպէս, որ ան աւելին ըլլար քան ղեահատութիւնը Համաստեղի գրական յիսնամեայ ծառայութեան, քան պանծացումը իր բարձրարուեստ վաստակին:

Այս յորեւանը՝ գէթ չափով մըն ալ պէտք էր ըլլար ճանաչում ու սէր՝ Հանդէպ ամբողջ Հայ գրականութեան. յատկապէս սա մեր տարաբնուութիւն ու տնտէր գրականութեան:

Այս սկզբունքով ամէնէն աւելի ոգիւորողներէն մէկն ալ եղաւ մեր անմասն Յորեւանը:

Այս Յորեւանին կապակցութեամբ, պէտք չէր յայտ գար Հեռքն իսկ մեր կեանքի տխուր խտրականութիւններուն, ո'չ մեր յարաբերութիւններով, ո'չ ալ մանաւանդ մեր գործերուն մէջ:

Կեդրոնական Յանձնախումբի ջերմ բաղձանքն էր, որ այս սկզբունք-

ներու առաւելագոյն յաջողութիւնն ալ ըլլար՝ թաղն ու պսակը Յորելինական այս Ծարժումին:

Որքա՞ն մեծ էր մեր ուրախութիւնը, երբ Համաստեղ, իր կենդանութեան լսեց թէ մօտն ու Հեռուն, շա՛տ շրջաններ խանդավառութեամբ էին ընդառաջացած մեր այս Հոգեբուխ բաղձանքներուն:

Քանի՞ տեղեր ալ, ինք անձամբ վայելց՝ իրեն հանդէպ ցոյց տրուած անսակարկ սէրն ու զուրգուրանքը, բոլոր կողմերուն:

Այս շարժումը բարոյապէս Հովանուորողներու Հարիւրեակ մը անունները, որ երեսցան Կեդրոնական Յանձնախումբի նամակաթղթին վերայ, փոքր բայց զմայլելի մէկ վկայութիւնն էին ընդհանուր ա՛յն սիրոյն ու գնահատութեան, զոր բոլորը, բոլորը կը զգային Համաստեղի հանդէպ:

Մէկ այլ փաստ ալ եղաւ, ու դեռ ալ պիտի շարունակէ ըլլալ շրջաններէն Հասած օրտագին պատրաստակամութիւնը՝ առաւել եռանդով շարունակելու Յորելինական այս Ծարժումը՝ աւելի՛ ներդաշնակութեամբ, աւելի՛ միասնակամութեամբ:

Պարսկաստան եւս — նախաձեռնութեամբ Հանրանուէր մարմիններու եւ միութեանց — տօնած է արգէն Յորելեանը, Դեկտեմբեր 18-ին, Հոգեկան խոր յուզումով, նոյն ատեն, սուգ ու կակիժով՝ Հասկնայիօրէն ու արդարօրէն:

Շատ մասծեցինք եւ ջերմապէս ալ փափաքեցանք հասնիլ նաեւ, հին ու բազմավաստակ մեր մէկ այլ գաղութին՝ Հնդկաստանի. բայց մեզի մեծ ցաւ եղաւ որ չկրցանք, մեր ուժերու ողբալի անբաւարարութեան Հետեւանքով:

Այժմ, մեր այս զեկոյցը՝ միաժամանակ թող ըլլայ սրտադին ԿՈԶ մը՝ ուղղուած Հեռուոր թէ մօտուոր, մեծ թէ փոքր մեր բոլոր շրջաններուն: Եթէ անոնցմէ որեւէ մէկը նուազագոյն կարելիութիւնը ունի, լա՛ւ է որ ջանայ յմնալ անձան՝ մեզ բոլորս համադրելու բնոյթն ունեցող՝ այս մեծ ու շինարար Ծարժումին:

Դուք ալ եղէք մէկ օղակը համահայկականութեան առողջ ու Հզօր այս շղթային — բոլորս իրա՛ր կապող, բոլորս գոնէ ատեն ատեն՝ իրարու Հաղորդ ու սրտակից դարձնող՝ գէթ խորհրդանշականօրէն:

Վերջին, — բայց Համաստեղի ցնցող մահէն հոք մանաւանդ, — ո՛չ յետին բաղձանք մըն ալ այն, որ Յորելեանի աթիւ գոյացած կամ գոյանալիք ամէն գոյժար յատկացուի — ինչպէս քանիցս է շեշտուած մինչեւ Հիմա — մեր յաւէտ անմահ Յորելեարի գործերու Հրատարակութեան ու լայն տարածման: Յատկացուի մանաւանդ՝ իր գործերէն ոմանց՝ գէթ քանի մը լեզուներու լաւագոյն թարգմանութեան: Եւ այս՝ կրկնակ նպատակով — որքա՞ն այդ լեզուն խօսող գրասէրներուն համար, նո՛յնքան ալ՝ այդ լեզուով կրթութիւն առած մեր հայ երիտասարդութեան համար:

Ահա նպատակ մը, որ սէ՛տք է խօսի բոլորի սրտին ու մտքին:



Մեռաւ Համաստեղ:

Ապրիցենե՛ք զայն, Հայերէնով դիներ կարդալու անկարող՝ տասնեակ Հազարներու համար եւս, աշխարհի շատ կողմերը:

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆԶՆԱՅՈՒՄԲ

## **«ԲԱԳԻՆ»Ի ՖՈՆՏԻՆ**

Արշալիր Շիրակեան 100 տոլար կը հուիրէ «Բագին»ի ֆոնտինը:



## **ՄԷԿ ՏԱՐՈՒԱՆ «ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

Յարութիւն վարժապետեան (Պէյրուքէն)

Պր. Լեւոն Քայեանին (Փերէ)

Ռաֆֆի երկրեան (Պէյրուքէն)

Պր. Կարօ Տիլանեանին (Աւստրալիա)



## **ՀՐԱՊԱՐԱԿ Կ'ԵՆԷ**

Յունուար 15-ին երազարակ կ'ենլէ

ԵՊ. ՊՕՅԱՃԵՆՆԻ

## **Վ Գ Է Մ Ք Ե Ր Ղ**

Մախար տպագրութիւն եւ շինչ կազմ, շուրջ 400 էջ:

ՏՈՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՌԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԵՍԱՆՆԵՐ 7 ՏՈՒՆԸ  
ՀԱՏԱՎԱՃԱԹ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչությունը հասցե --

**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban